զՄադամ մարդ առաջին ասել և ոչ ստեղծեալ յաստուածուստ[1]), այլ եթէ ի պատճառէ ումեմնէ ապականեալ երկիր և միայն մնայ Մադամ որպէս և Նոյ: Բայց Պղատոն ոչ հանգոյն սոցա[2]), այլ ի Տիմէոսի[3]) տրամաբանութեանն այսպէս և ըստ այսմ օրինակի ասէ[4]). Յետ առնելոյ արարչին զերկին և զերկիր, հրատարակէր[5]) առ իմանալի զօրութիւնս, եթէ երկին անկատար — երկին կոչէ զաշխարհ ի պարունակողէն — և եթէ[6]) այլ ևս երեք[7]) սեռք մեզ անեղանելիք, յորոց յոչ եղելոց[8]) երկին անկատար, յորոց և մարդս: Եւ այլ բազում վիպագրեն յիւրաքանչիւր մատեանս, որպէս Զրադաշտ մոգ պարսից, զոր Զրադահեշտն[9]) կոչեն, որ յաստեղաց[10]) մոլորակացն ասէ լինել երկրի և վարել նոքօք մինչև յեօթն[11]) դարս[12]) և ապա ապականիլ: Սա առաջին զՄադամ[13]) ասէ լեալ, բայց զկնի ոչ ասէ կատարած լինել երկրի, քանզի ի նոյնն ասէ՝ դարձեալ յեղափոխեալ շրջեսցի և նորոգեսցի: Եւ այս երկարագոյնք են և նրբագոյնք՝ իմաստասիրաբար ասացեալ[14]) իւրաքանչիւր ումեք[15]), քանզի ոմն ի մատեանս իւր[16]) ի ձկանէ ասէ ուսեալ զինքն, ի մարդակերպէ[17]) ի[18]) ծովէ արտաքս եկեալ և ոմն ի սանդարամետականէն[19]) և ոմն յաստեղաբաշխութենէ[20]): Այլ մեզ այսոքիկ ոչ հաւատացեալ եղիցի, այլ ընթերցեալք, զի մի՛ պարսաւեսցեն զմեզ հեթանոսացն իմաստունք՝[21]) եթէ ոչ եմք տեղեակ[22]) անվաւերական նոցայն մատենագրութեանն: Սակայն մեզ հաւատացեալ լիցի միայն Մովսէսին աստուածեղէն պատգամս, զոր ի սինէականն ընկալաւ լերինն՝ Աստուծոյ դէմ յանդիման, ոչ աղճատեալս[23]) և ցնդեալս[24]), այլ պարզ, մաքուր և լուսաւոր օրէնսդրութիւնս, գրեալ[25]) բանիւն[26]) Աստուծոյ և ոչ յովանայն ձկան որպէս Պիւռոսին[27]) կամ սանդարամետականին Եպիկուրեանց անաստուածիցն կամ արեգական Զրադաշտին կամ Պիւթագորականացն[28]), որք ի քառից զբոլոր[29]) բաղկացութիւնս ասեն լինել, կամ Սիմոնեանց[30]), որ երկուս արարիչս հաւանին՝[31]) զմինն[32]) բարւոյ և զմիւսն[33]) չարի: Այլ այս Մովսէս, որ յայտնի եղև յամենայն[34]) երկիր նշանօք և արուեստիւ, քաջութեամբք[35]) և արդեամբք, սա մեզ գրեաց[36]), յաստուածուստ ընկալեալ, զՄադամ առաջին մարդ ի հողոյ[37]) ստեղծեալ, և զկնի զկինն իւր[38]) ի կողէն իւր կամացն յօժարու-

1) A աստուածուստ. 2) A. ոյ̃. 3) B. Տիմիոսի — Timeus. 4) A. Von այսպէս bis ասէ fehlt. 5) A. հպատակեր. 6) A. եթէ, B. և թէ. 7) A. երեք fehlt. 8) A. որոց ոչ եղելոյ. B. որոյ ոչ եղելոյ. 9) B. Զարդահեշտն. 10) A. յաստեղացն. 11) A. եօթն. 12) B. դար. 13) A. Մադամ. 14) B. ասացեալք. 15) A. ումեք. 16) B իւր fehlt. 17) A. ի մարդակերպէ. 18) A. ի fehlt. 19) A. ի սանդարամետականէ. 20) A. յաստեղաբաշխութեան. 21) B. իմաստունքն. 22) A. տեղեակք. 23) B. աղճատանս. 24) B. ցնդեալն. 25) A. գրեալ fehlt. 26) B. բանիւ. A. և բանիւն. 27) A. B. Բիւռոսին. 28) A. կամ պիւթագորականացն fehlt. 29) A. զբոլոր fehlt. 30) B. ի սիմոնեանցն. 31) B. հաւանին արարիչս. 32) A. B. զմիւսն. 33) A. միւսն. 34) A.B. ամենայն. 35) A բաջութեամբ. 36) A. գրեալ. 37) A. ի հողոյ. 38) A. իւր fehlt.

թեան և կենացն հաղորդ ի դրախտի[1]) անդր յարևելս[2]), իսկ զդրախտն ամենապատիկ ծառօք ծաղկաւէտեալ[3]), դալարավայր գեղեցկութեամբ զարդարեալ, ծառոյն հովանաւորութեամբ և սաղարթացեալ վարսիւք և պտղովք պայծառացեալ՝ անապականագոյնք[4]) և լուսատեսակք, և երկուց ծառոցն ի նմա լինել երիցագոյնք և վեհագոյնք[5]), յորոց հրաժարեցոյց[6]) Արարիչն, այլ ոչ եթէ չարաչար տնկեալ ի սկզբանն և ոչ հրաժարեցուցեալ մախանօք, քանզի ստեղծ Աստուած[7]) զամենայն ի կերակուր Ադամայ. սակայն ի տնկոցն յայնցանէ վայր մի հրաժարեցուցանէ չուտել, զի ի դէպ ժամու կերիցէ և յեղափոխեալ ի բարիսն կոչս, եղիցի յԱստուած մերձեցեալ. զոր ոչ լուաւ և եկեր և կորոյս զկեանս իւր անտրտում. և[8]) մահու հասանէ, պատուհաս ընկալեալ, զոր ի մեզ պտղաբերեաց՝ ցաւս և տրտմութիւն, ապականութիւն և մահ: Այլ ոչ ասեմք մեք անգէտ գոլ զԱստուած՝[9]) եթէ ոչ էր յառաջագէտ[10]) զոր ինչ յանցեաւն Ադամ, քանզի նախագիտական է ամենայնի, եւ ոչ ասեմք, եթէ յԱստուծոյ յանցանսն պատշաճեալ, քանզի Աստուած ի չարեաց[11]) անփորձ իմանամք. սակայն և[12]) այժմ մեք ամենեքեան ի նոյն յօրէնսն[13]) Ադամայ փակեալ կամք, քանզի հրաժարեցուցեալ եմք ի բազում հեշտութեանց օրինօք, և որ ժամանակաւ պահեացն[14]), որպէս երբեմն Ադամ. և է ինչ, որ բնաւին յոչ հպելիսն և յոչ[15]) մերձենալիսն. իսկ յորժամ անցանեմք զօրինօքն հակամիտելով ի մեղսն, ոչ եթէ անգէտ է Աստուած նախագիտական, այլ ոչ կամի զմեղանչելն[16]): Արդ ոչ կամել իմացիս Աստուծոյ զյանցանսն Ադամայ և ոչ անգէտ յանցանաց նորա: Զայսոսիկ սակաւուք հատանել քեզ պարտ վարկանիմ, քանզի ի բազմաց այսոքիկ[17]) նախ քան զմեզ իմաստասիրեցան[18]). և սիրելի է ինձ նուրագոյնս ասել բանաստեղծութիւնս և ոչ յայլմէ[19]) առասացութեանց[20]) պատմել:

Իսկ յաղագս բարւոյն և չարին, եթէ յԱստուծո՞յ են երկոքեան եթէ բարին յԱստուծոյ է և չարն ի սատանայէ: Աստուած միշտ բարի է, բոլոր բարեաց բաղկացուցիչ, քանզի և յաշխարհարարողութեանն իմանամք զամենայն[21]) բարի ստեղծեալ, և յանգումն բերեալ՝ տեսանէ զամենայն ի բարիս աւարտեալ. և զի չար ոչ գոյ է[22]) և ոչ գոյացեալ և ոչ ի գոյէ, և զի՞արդ ի սատանայէ ասեմք եղեալ, որ երբեմն արուսեակն էր. և նա ոչ ունի իշխանութիւն գոյացուցանել զոչգոյս: Եւ այսոքիկ պարզաբար քեզ, վասն զի զչարն[23]) այսպէս իմացիս. ոչ է է և ոչ ամենայն ինչ չար,

---

1) B. *և ի դրախտի.* 2) B. *արևելս.* 3) B. *ծաղկաւետեալ.* 4) A. *անապականագոյն.* 5) A. *վէհագոյնք.* 6) A. *հրաժարեցայց.* 7) A. *Աստուած զԱդամ.* 8) B. *և* fehlt. 9) A. *Աստուած.* 10) A. *յառաջանձգէ.* 11) B. *ի չարեացն.* 12) A. *և* fehlt. 13) B. *օրէնսն.* 14) B. *պահոցն.* 15) A. *ոչ.* 16) A. *ի մեղանչելն.* 17) A. *այսոքիկ* fehlt. 18) A. *իմաստներեցան.* 19) A. *յայմէ.* 20) A. *առասութեանցն.* 21) B. *զամենայնն.* 22) A. *և զի չար ոչ գոյ է* fehlt. 23) B. *զչար.*

քանզի որ ոչն է, ոչ եղիցի ամենևին ոչ էն, վասն զի[1]) ոչ է, քանզի բարին յէէ անտի է և է և էասցի[2]), իսկ չար ոչ յէէ և ոչ յէսս և ոչ էասցի[3]), բայց որոց հետևինն որպէս և վէմ բարձրաբերձ լեալ դղեակ յաղագս ամրապահեստ ի թշնամեացն մնալոյ. իսկ եթէ ոք զկամուրջ[4]) ոչ որոնէ, զանձն[5]) հեղձուցանէ[6]). այսպէս և սուսեր յաղագս խաղաղարարաց կամ փայտահատաց կամ ի մորթս ձողաձևութեան յօգտակարութիւն[7]) պատշաճեալ է ի կենցաղումս, ապա եթէ ոք փոխանակ այսոցիկ ի կողս ընկերի իւրոյ կամ ինքեան իսկ ի մահ յեղափոխեսցի՝ զիա՞րդ. այսոքիկ են չարութեանցն բաղկացումն: Եւ այսոքիկ յաղագս բարւոյ և չարի ասացաւ:

Իսկ յաղագս արտաքին իմաստասիրացն եթէ[8]) զմի՞ Աստուած խոստովանեցան եթէ զերրորդութիւն: Այնոցիկ ասացեալքն յոգնաբար ստորասացեալք եղեն, քանզի ոչ միակրօնք և ոչ հանգիտապատումն միմեանց երբեք գտանին որպէս մարգարէականացն միեղինութիւնքն[9]): Եւ պիւթագորականքն[10]) աշակերտք Պիւթագորայ[11]), որ և Պիւթագորոս[12]) ուսեալ ի փերեքդեայ[13]), այսպէս[14]) հաւանեցան ձօնել[15]). զքառեակն պատուեցին ի քառեացս բնութեանց մեզ բաղկանալ, իսկ զքառեակն չորից տարերց գոյանալ[16]). իսկ զտարերսն[17]) պատուեցին ինքնեղ: Այդ այսոքիկ պիւթագորականքն[18]): Իսկ Հոմերոս[19]), յԵլլադայ և յԵգիպտոս պատուեալ, յԱրամազդայ ակնարկութենէն[20]) ասէ զՈլոմպոս[21]) տատանեալ, և զնա երկնի որդի որպէս զԿռոնոս[22]) հայր իւր. և[23]) պատուէ սա զեօթնեակն կոյս զնա իբրև[24]) զԱթենայ: Եւ Արիստոտելէս[25]) պղատոնական[26]) ստագիրացին ճշմարտախոհ[27]) քան զայլսն եղեալ, ծանեաւ սուղ իմն՝ ոչ զտարերս պատուեալ, թէպէտ և ոչ բնաւին, քանզի և սա մեհենական պատիւս արարեալ, եւ որ ի սմանէ[28]) Աղէքսանդրոս որդի Նեքտանեբեայ[29]): Բայց Պղատոն[30]) փոքր ինչ իմաստասիրելով գերակատար գոյիցս ասել կամեցաւ զարարչականն էութիւն յասելն իւրում այսպէս թէ Որ զամենայնս[31]) ածեալ անեղական և մակաւասար[32]) բնութիւն ի վերայ կալով ամենայնի, նախախնամէ զամենայնս տեսանելով և ինքն ոչ յումեքէ տեսանի, այլ անցեալ[33]) կայ սարաւանդեալ[34]) յիւրումն[35]) առանձին բարձրութեան և Հերմեաս[36]) մեծ շարժօղ զնա և տածօղ զիմանալի[37])

---

[1]) B. քանզի. [2]) A. էսցի. [3]) A. յէասցի. [4]) A. և զկարմունճ. [5]) A. զանցն. [6]) B. հեղցուցանէ. [7]) A. յօգնութիւն. [8]) A. ե, B. թէ. [9]) A. եղենութիւնքն. [10]) A. պիթագորականքն. [11]) A. Պիթագորայ. [12]) Պիթագորոս. [13]) A. ի փերէքդիայ. [14]) A. որպէս. [15]) A.B. ձունել. [16]) A. մեզ գոյանալ. [17]) B. զտարերս. [18]) A. պիթագորականքն. [19]) A.B. Յով-մերոս. [20]) A. ակնարկութիւնն. [21]) B. զՈլոմպոս. [22]) B. զԿռօնոս. [23]) A. և fehlt. [24]) B. իբրու. [25]) B. զԱրիստոտելէս. [26]) A. զպղատոնական. [27]) A. ճշմարտախոս, B. ճշմարտախօհ. [28]) B. ի սմանէն. [29]) B. Նեքտանեբեայ. Vgl. Մով. Խոր. Պատմ. Բ, 13 [30]) B. Պղատօն. [31]) A. զամենայն. [32]) A. մակաւոր. [33]) A. անսացեալ. [34]) A. պարաւանդեալ. [35]) A. իւրեմն. [36]) Hermes. [37]) A. B. և իմանալի.

աշխարհ: Անտիսթենէս[1]) զԱստուած ոչ ումեք[2]) նմանել ասէ, վասն որոյ զնա ոչ ոք կարէ ուսանել ի պատկերէ կերպարանաց: Իսկ Կղէանթէս[3]) պեգեսացի[4]) արդար, իրաւակ, արժանաւոր և սուրբ իշխան անձին ունի զինքն, պիտանացու, գեղեցիկ, հզօր, աներկիւղ, պատուական, անհպարտ, խնամածու, հեզ, ի յամենայնէ ամբիծ, միշտ նոյնպէս կայ մնայ: Եւ այսօրէն Կղէանթեայ յաղագս[5]) Աստուծոյ: Իսկ պիւթագորականքն[6]) այսպէս ասեն. Աստուած մի է. և զսա[7]) ոչ, որպէս ոմանք, կարծեն արտաքոյ[8]) յարդարման զարդուս է. ի սմա բոլորի բոլորում շրջանակի, ակն ածէ, դէտ[9]) ամենայն սերման ծննդեան, խառնումն բոլորից ունելով, գործօղ իւրոյ զօրութեանն և գործոց սկիզբն[10]), շնչացութիւն բոլոր շրջանակիս և ամենեցուն շարժումն: Սիրովդոս[11]) ասկրացի ասէ զԱստուած թագաւոր և իշխան գոլ[12]), վասն անմահիցն և քան զնա ոչ ոք է, այլ զօրութիւն հաստատեալ և յարմարեալ: Իսկ Սոփոկլէս ասէ. Ո՞ի է Աստուած, որ զերկին կազմեաց և զերկիր արար[13]) և զծովու զահագին ալի և զհողմոց[14]) բռնութիւնս: Որփիս այսպէս ասէ. Ո՞ի է ինքնեղ, միոյ[15]) ծնունդք ամենայնքս և եղեալք և կազմեալք, և ինքն շուրջ գնայ թափանցանց[16]). ոչ ոք զնա տեսանէ ի մահկանացուացս[17]), բայց ինքն զամենեսին տեսանէ: Սիբիլլայ[18]) մարգարէուհի այսպէս ասէ յաղագս Աստուծոյ. Սա ամենեցուն յայտնի է. մի է Աստուած, քանզի ածէ անձրևս, հողմս շարժունս, ի վերայ առաքելով կայծակունս, երկնի իշխէ[19]) և զերկիր ունի, ինքն է Աստուած յոյժ սքանչելի: Եւ Ջռուփոն[20]) բարերար և անկարօտ: Եւ այսօրէն բիւրք, սակայն ոչ համաբարբառք. բայց սոքա ոչ միութիւն Աստուծոյ ծանեան և ոչ երրորդութիւն, սակայն զերրորդն թիւ պատուեցին[21]), պատարուն զնա գտեալ, և ունելով սկիզբն, միջութիւն և կատարած, և առաջին թիւ, քանզի զմիակն պատուեցին[22]) գիծ զնա անորակ և անմակերևութիւն ասացեալ, և զնուամասնեայ միեղինաբար յանգեալ միակ և երրեակ[23]), եռանկիւն, ի բոլոր անկեանցն առաջին և բաղկացուցիչ, որպէս ի նմանէ յառաջ խաղացեալք բոլոր անկիւնաւորաց մեծ[24]) արուեստին երկրաչափութեան: Եւ պատուեցին Պռիմիդէս[25]) և այլքն յԱթենայ[26]) երրեակ, նովաւ եղեալ և կեալ և լինել իբրու անցեալքն և յորում եմք և հանդերձեալքն:

---

1) B. Անդիսթենէս. 2) A. ումէք. 3) Langlois p. 35 Կղէանդէս. 4) B. պէգեսացի. 5) A. յաղաքս. 6) A. պիթագորականքն. 7) A. զայս. 8) A. յարտաքոյ. 9) A. դեւ. 10) A. սկիսբն. 11) A. Սիովդոս (?). 12) A. գոլ ասէ. 13) A. B. երկար. 14) B. զհողմոցն. 15) A. մի. 16) B. թափանցաց. 17) A. ի մահկանացուածս. 18) Verbessert nach Langlois. — A.B. Սիբլեայ. 19) B. իշխան է. 20) B. Ջռոփուս. Langlois p. 34 Ջռոփոս. 21) B. պատմեցին. 22) A. պատուեցին durchstrichen. 23) A. երրակ. 24) A. մէծ. 25) A. B. Պռիմիթէս = Parmenides? 26) A. յԱղթէնայ.

Բայց զի՞նչ մեզ ի հեթանոսացն բերել վկայութիւնս[1], քանզի կաթիլ իմն[2] աստուածային կաթեալ էր առ նոսա, այլ ոչ որք մարգարէական[3] կամ[4] առաքելական[5]. այլ որպէս կամիցիս դու վկայս կացուցանել արաբացւոցն[6] ի հելլենացւոցն կամ ի մակեդոնացւոցն[7] և յելլադացւոց[8], պարսից և խուժաստանեաց[9], զոր ոչ պարտ է, քանզի ոչ ի հեթանոսութեանն և ոչ ի լուսաւորութեանն գտան այսոքիկ միաբանեալք։ Սակայն յայսմ վայրի կամեցայ արտայայտել ինչ, և եթէ բացցես[10] զաչս սրտի քո և զառագաստ մտածութեան, քաջ գիտեմ, եթէ ամենայն ծածկեալք խորութեանց և գիտութեանց Աստուծոյ[11] յայտնի քեզ լինին և մերկ և[12] առանց սքօղելոյ երևեսցի քեզ, այլ ոչ մարմնական աչաց երևեսցի և ոչ ըմբռնեսցի անըմբռնելի[13] և անմարմին մեր իմանալին[14] յայտ, այլ հաւատով իմացեալ ճանաչի։

Բայց աղէ՛ տես զգուշութեամբ և մի՛ իբրու զայսոսիկ, որ անխորհրդազգեացք են, այլ զգուշութեամբ զիմանալիսն տրամադրեա՛[15] տեղական զետեղութեամբ, որպէս կարծեն կարծեցեալքն զմէնջ կամ զինչ ձեռնարկեն հարցանել յաղագս Երրորդութեան միութեան ամբոխեալ ի բազումս հեթանոսաբար և ցնդեալ կամ ընկեր առ ընկեր, զայս ոչ ի մէնջ լուան, կամ ծնունդ մարմնական Աստուծոյ կամ հատուցումն կամ անջատումն կամ զատումն կամ միջոց կամ նախադասութիւն կամ յղացումն կամ կերպարան կամ ձև կամ որակութիւն կամ երիցութիւն[16] կամ որդիութիւն որպէս զմերս, թէպէտ և ասի, կամ հոգի ըստ մերում եղանակի, թէպէտ և[17] անուանի, կամ հայրութիւն, որպէս ասի. և ոչ մի ինչ յայսցանէ զգայականօքս չափաբերութեամբ թւակոխելով իմացեալ, քանզի արտաքոյ այսմ ամենայնի իմանամք զաստուածայինն բնութիւն և գերագոյն քան զամենայն գոյացութիւնս գտեալ, անբաւ և անհասանելի, անժամանակ և անիմանալի, և ըստ մերում իմանալեացս ոչ իմացի, այլ հաւատովք ծանուցեալ ճանաչի մի աստուածութիւն և մի տէրութիւն և մի արքայութիւն և մի զօրութիւն և մի իշխանութիւն և մի բնութիւն և մի կամք և մի ներգործութիւն[18], միեղինաբար յանդումն կենդանւոյն[19] Աստուծոյ և Բանի[20] նորա և Հոգւոյ իմացեալ ճանաչի, քանզի կենդանի է Տէր, կենդանի է[21] և Բան նորա, կենդանի է և Հոգի նորա, էութիւն կատարեալ, Աստուած, այլ ո՛չ աստուածք, և ո՛չ տեարք, և ո՛չ հատեալք կամ որոշեալք կամ չափեալք ի վերայ Աստուծոյ իմացեալ տեսանի։

1) B. զվկայութիւնս. 2) A. իմն և. 3) A. B. ի մարգարէական. 4) A. և. 5) A. յառաքելական. 6) A. յարաբացւոյն. 7) A. ի մակեդոնացւոց. 8) B. հելլադացւոց. 9) A. խուժատանաց. 10) A. բացցէս. 11) A. յԱստուծոյ. 12) A. և fehlt. 13) A. անըմբռնելի fehlt, B. անմբռնելի. 14) A. իմանալի. 15) A. տրամադրեայ. 16) A. կամ երիցութիւն fehlt. 17) A. և fehlt. 18) A. ներգլործութիւն. 19) A. կենդանոյն. 20) B. Բանին. 21) A. կենդանի fehlt.

Զ՞ինչ ոք ասիցէ չամբուշ մտածութեամբ յայսցանէ վաղքատութիւն աստուածութեանն տալով. միթէ անբա՛ն իցէ Աստուած. ապա եթէ անբան է որ խօսեցաւ ընդ Մովսէսի, զի՞արդ բարբառի անյայտնի: Ահա Բան նորա առ Աստուած, քանզի Բանն Աստուծոյ Աստուած է. և եթէ առ Հրեշտակս բարբառի, ո՞չ ապաքէն Բանն Աստուծոյ. և արդ յայտնի եղեալ Բանն Աստուծոյ, զի Բան է,. և Բանն՝ զի Աստուած է, և զի ի սկզբանէ էր, քանզի ոչ երբեմն էր. ապա եթէ[1]) էր երբեմն որ ոչ ունէր Բան և ոչ էր Բանն, նա՛ ուրեմն[2]) յայնժամ անբան էր: Եւ[3]) այսոքիկ ոչ Աստուծոյ վայելչաբար ասի՛ անբան[4]) գոլ, մանաւանդ ընդ ժամանակաւ: Այսոքիկ յաղագս Բանին Աստուծոյ: Իսկ կենդանի զԱստուած իմացեալ ճանաչեմք և եթէ ո՛չ Հոգի ո՛չ կենդանի, թէպէտ և[5]) ոչ ըստ մերում Հոգւոյս[6]): Արդ Մովսէս զՀոգի Աստուծոյ ի վերայ ջուրցն գոլով ոչ անտեղի վարկաւ ասել. և Հոգւով Աստուծոյ Բնեսլիէլ զխորանն կազմէր. Հոգի Աստուծոյ ի Սաւուղայ վերացաւ ասի և ի վերայ Դաւթի խաղացեալ Հոգւոյն Աստուծոյ. Հոգւովն Աստուծոյ Դաւիթ զամենայն զօրութիւնսն Աստուծոյ: Նորա[7]) աստանօր և զբանն Աստուծոյ միեղինաբար պատկանեալ շարամանեալ, յարմարական նուագեալ յասելն իւրում. «Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր»[8]) և «Բանիւ Տեառն երկինք հաստատեցան և Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա»[9]): Բայց ես ոչ այժմ յաճախեցից ի մարգարէիցն կացուցանել քեզ վկայս մինչև առասցութեան, որ գրեցեր ասել համակրօն զմարգարէից դասս Մահմեդի[10]): Բայց յայսմ վայրի սակաւուք ճառեցի զանճառելի նորա աստուածպետականութեան իմացուածս[11]), եթէ ստուգապէս միութիւն եռանձնեան միեղինութեան անբաժին և անքակական, անանջատական: Եւ եթէ սքանչացիս, յղացականաց և յերևելեաց ցուցից քեզ, թէպէտ և ոչ ըստ իսկութեան. տեսանես զակն տունջեան, ունել նմա ջերմութիւն, ճառագայթ և լոյս. կարե՞ս բաժանել կամ ոչ խոստովանել զայսոսիկ ի նմա գոլ: Կամ զխոնաւութիւն և զորակութիւն և զցրտութիւն ի ջուրս. բե՛ր և յայսոսիկ յարմարեալ ցուցից քեզ, ի բոլորս յայսցանէ յիմանալիս և ի զգալիս ոչ գոլ կենդանութիւն՝ եթէ ոչ յերիս[12]) յանգեալ յարդարիցի[13]). քանզի յիմանալիս երկնային զօրութիւնքն երիս երախանս և քահանայապետութիւնս առաջինս, միջինս և վերջինս, երիւք յերիս, ինն դասուց երեքկին[14]) սրբասացութիւն և մի տէրութիւն, անանջատ, անորիշ բնութիւնն եղանակելով աներապէս վերաձայնեն:[15]) Բայց այժմ բաւական են այսոքիկ:

---

1) B. *ապ՚եթէ.* 2) A. *ուներ.* 3) A. *Եւ ոչ.* 4) A. *անբան* fehlt. 5) A. *և* fehlt. 6) A. *Հոգւոյս մերում.* 7) A. *Նորս.* 8) *Սաղ. ճժը.* 64. 9) A. *նորա.* — *Սաղ. լբ,* 6. 10) A. *Մահմէտի.* 11) A. *իմածուածս.* 12) B. *յերիցս.* 13) B. *յարդարեցի.* 14) A. *երեքին.* 15) B. *վերաձայնին.*

Իսկ յաղագս որոց գրեալ էր քո[1], եթէ քան[2] և[3] չորս մարգարէքն համաբարբառ են Մահմետայ[4], այժմ սկիզբն արարից քեզ ի մարգարէից, եթէ ծանիցես. քանզի Իսրայէլ[5] ոչ երբէք[6] ծանեան զասացեալսն, որ յօրէնսն և ի մարգարէսն, վասն զի զոր օրինակ զքող[7] արկեալ Մովսէս[8] ծածկէր[9] զերեսս իւր, որպէս ծածկեալ էր[10] ի հրէից ամենայն խորհուրդ գիտութեանն Աստուծոյ յաղագս խստասրտութեան նոցա, որպէս գրէ Հոգին սուրբ «Ձանացայ ընդ ազգին ընդ այնմիկ»[11] և այլն որպէս[12] զկնի սոցա[13] հետևին երգ։ Արդ և դու մտադիւրութեամբ ընկալցիս, զի և ոչ ծածկեսցին[14] ի քէն պատգամք[15] կտակարանացն Աստուծոյ։ Պարտ և պատշաճ է մեզ նախ ի Մովսիսէ սկսանել, յիսկզբանէ անտի արարչագործութեանն։ Եւ զայն յաստուածուստ առ ո՞ ոք ասաց «Եկայք արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան»[16]։ Ուսցէ՞ առ հրեշտակս ասէ զայս, զոր և Մովսէս իսկ ոչ ճառէ վասն հրեշտակաց, և ոչ ունել նմանութիւնս և ոչ պատկեր նոցա և ոչ տեսանել իսկ բնաւ զԱստուած նոցա ապա եթէ[17] առ մարդիկ զոր և ոչ[18] երբէք էր ստեղծեալ և նախ քան զայս «Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց»։ Եւ յայսմ գրի օրինաց գտցես և զայլս[19] բազումս, և զի ասէ. «Որ[20] հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արիւն[21] նորա, զի ի պատկերի Աստուծոյ[22] արարի ես զմարդն»[23]. տե՛ս և զայս. զի՞մ արդ ոչ ասէ ի պատկեր իմ արարի, այլ թէ ի պատկերի Աստուծոյ արարի. զայս ի Փիլոնէ[24] ուսցիս, քանզի հրէայ էր և ոչ քրիստոնեայ, եթէ ո՞րպէս ասէ յաղագս Բանին Աստուծոյ։ Եւ նախ քան զայս՝ ի սկզբանն իսկ ի լերինն ընդ Մովսէսի զի՞արդ ասէ. «Ես եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ, Աստուած Յակոբայ»[25] ի մորենւոյ[26] անտի հրով և մգով, քանզի զեռաբարբառ[27] Բանն և զՀոգին յայտնեալ. այլ մգով ծածկեաց ի նոցանէ, զոր մեզ հանդերձեալ էր յայտնել[28] Քրիստոսիւ։ Այս ծայրագոյն է Աստուծոյ. երբեմն զոր ծածկեաց Նոյի[29], յայտնեաց Աբրահամու, և զոր յԱբրահամէ[30], զի ոչ գոյր օրէնս, յայտնեաց Մովսէսի, և զոր ծածկեաց ի Մովսիսէ, յայտնեաց այլոց մարգարէիցն, և զոր ի մարգարէիցն՝ յայտնեաց Բանիւն Աստուծոյ Յիսուսիւ Քրիստոսիւ ամենեցուն։ Քանզի և Մովսէս զհրեշտակաց ոչ ճառեաց, այլ Պաւղոս կարի յայտնապէս «Հոգիս և պաշտօնեայս»[31]։ Արդ տեսցես զայս սակաւ սակաւ

1) B. քոյ. 2) A. B. ի քան. 3) B. ու. 4) B. Մահմէդայ. 5) A. Իսրայէլ fehlt. 6) A. երբէք fehlt 7) A. զքօղ. 8) A. Մօսէս. 9) A. ծածկեր. 10) A. էր fehlt. 11) Սաղմ. ղդ, 10. 12) B. որպէս fehlt. 13) A. նոցա. 14) A. B. ծածկեսցի. 15) A. պատկամս. 16) Ծնն. ա, 26. 17) B. ապ'եթէ. 18) A. ոչ fehlt. 19) B. զայլ. 20) A. ոչ. 21) A. զարիւն. 22) A. Աստուծոյ fehlt. 23) Ծնն. թ, 6. 24) B. ի Փիլոնէ. 25) Ելք, գ, 6. 15. 16. դ, 5. 26) A. ի մորենոյ. 27) A. զերաբարբառ. 28) A. յայտնել fehlt. 29) B. Նոյիւ. 30) A. Աբրահամէ. 31) Սաղմ. ճգ, 4.

յուրաքանչիւր մարգարէիցն բերեալ վկայութիւնս ըստ խոստման իմում և ըստ[1]) խնդրոյ քո[2])։ Այլ նոյն իսկ Մովսէս պատուէր տայր ժողովրդեանն, լսել ճշմարիտ մարգարէին Տեառն Աստուծոյ. և Յեսու զնոյն նմանութիւն բերելով փրկչին մերոյ վկայեաց և տեսեալ զնա և հարցեալ զի մէնջն[3]) թէ ի թշնամեաց մերոց[4])։ Իսկ Դաւիթ յառաջագոյն ծանեաւ զայսպիսի սքանչելագործութիւն տնօրէնութեանն Աստուծոյ՝ թէ իշխանութիւն հեթանոսաց խռովեսցին զարմացեալ և ժողովուրդք հրէից սքանչացեալ ընդունայն խորհեցան. սակս որոյ բարբառեցաւ. «Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք և ժողովուրդք խորհեցան ի սնոտիս. յանդիման եղեն թագաւորք երկրի և իշխանք ժողովրդոց ժողովեցան ի միասին վասն Տեառն և վասն օծելոյ նորա»[5])։ — Այլ Քրիստոսդ անուն օծեալ է։ — «Այլ ես այսօր ծնայ զքեզ»[6])։ Այլ եթէ[7]) «Տաց քեզ իշխանութիւն ընդ ամենայն ծագս երկրի»[8])։ Մի՛ արդեօք և Սողոմոնի[9]) ժառանգեաց զհեթանոսս[10]) և գաւազանաւ երկաթեաւ[11]) խորտակեաց զնոսա, զոր և ոչ երբէք թագաւորն հռոմոց ծառայեաց նմա։ Որպէս[12]) և դարձեալ ասէ. «Երկիրպագցեն նմա ամենայն[13]) թագաւորք երկրի և ամենայն ազգ ծառայեսցեն նմա»[14])։ Արդ ո՞ ոք ծառայեաց նմա ի հեթանոսաց թագաւորաց. հրէի՞ց թագաւորն, հռոմո՞ց եթէ փռանկա՞ց եթէ հայո՞ց եթէ գամրա՞ց կամ վրիացւո՞ց. ահա ոչ ոք, այլ Յիսուսի երկրպագեցին[15])։ Իսկ զնշանէ նորա ասէ. «Նշանեցաւ[16]) առ մեզ լոյս երեսաց քոց[17]) և ետուր ուրախութիւն սրտից մերոց»[18])։ Իսկ զկնի այսորիկ. «Յառաջագոյն տեսանէի զՏէրն[19]) առաջի իմ յամենայն ժամ»[20]). և եթէ «Ոչ թողցէ զանձն իմ ի դժոխս»[21]). իսկ վասն այսորիկ[22]) «Ի ժողովուրդս[23]) խոստովան եղէց քեզ և անուան քում սաղմոս ասացից»[24]). և վասն նորա առաքելոցն, եթէ «Ընդ ամենայն երկիր[25]) ել բարբառ նոցա»[26]). և եթէ «Ուր ոչ են խօսեալ, անդ ոչ բան քո և ոչ խօսք»[27]). իսկ զչարչարանացն ի նոյնս յարեալ. «Բաժանեցին զհանդերձս իմ[28]) յիւրեանս և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին»[29]) և եթէ «Ետուն կերակուր ինձ լեղի[30]) և[31]) ի ծարաւ իմ արբուցին քացախ»[32])։ Անէծ զհրէայսն յայսմ վայրի։ Դարձեալ եթէ «Բղխեսցէ սիրտ իմ զբան բարի»[33]), այսինքն զԲան Աստուծոյ, որ ի Դաւթայ ծնանելոցն[34]) էր յազգէ Յուդայ, և՝ «Աթոռ քո, Աստուած,

---

1) B. ըստ fehlt. 2) B. զխնդրոյ քոյ. 3) A. զի մէնջ. 4) Vgl. Յեսու. ե, 13. 5) Սաղ. բ, 1. 6) A. զքեզ fehlt. 7) A. թէ. 8) Սաղմ. բ, 8. 9) A. Սօղոմոնի, B. Սողովմօնի. 10) A. զհեթանոս. 11) A. և երկաթեաւ. 12) A. Որպէս fehlt. 13) A. ամենայն fehlt. 14) Սաղ. հա, 11. 15) A. երկրպագեցեն. 16) A. Նշանաւ. 17) A քոց fehlt. 18) Սաղ. դ, 7. 19) B. Տէրն. 20) Սաղ. ժե, 8. 21) Սաղ. ժե, 10. 22) B. այնորիկ. 23) A. ի ժողովուրդ. 24) Սաղ. ծզ, 10. 25) B. աշխարհ. 26) Սաղ. ժը, 5. 27) Vgl. Սաղ. ժը. 4. 28) A. իմ fehlt. 29) B. արկանէին վիճակս. — Սաղ. իա, 19. 30) A. զլեղի. 31) A. զի. 32) Սաղ. կը, 22. 33) Սաղ. խդ, 2. 34) B. ծնանելոց.

յաւիտեանս յաւիտենից, գաւազան զօրութեան, գաւազան[1] ուղղութեան»[2] և՝ «Ած[3] զսուր ընդ մէջ քո և[4] լարեա և[5] ուղղեա»[6], քանզի ոչ ոք ուղղաձիգ կարաց ի մարգարէիցն լինել[7]. և «Վասն այսորիկ օծ զքեզ Աստուած, Աստուած քո իւղով ուրախութեան[8] առաւել քան զըն-կերս[9] քո»[10]. տեսցես թէ ահա ոչ գոյր նորա ընկեր. և եթէ «Յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ»[11]. և «Ասաց Տէր ցՏէր իմ՝ նիստ ընդ աջմէ իմմէ»[12]. զոր և ինքն իսկ Տէր ասէ առ հրէայսն, եթէ «Դաւիթ զիս Տէր կոչէ», «Դուք ասէք թէ հայր քո է»[13]: Արդ այսքիկ Դաւթայ[14] ասացեալք, և այլք բազումք յաղագս Բանին Աստուծոյ: Բայց աղէ՜, ե՛կ և[15], դու ընկալ ի լսելիս քո յուսով և հաւատոց քաջութեամբ յաղագս մարմնաւորութեան նորա զասացեալսն ի մարգարէիցն ըստ իւ-րաքանչիւր աւետարանութեան: Եւ արդ նախ սկսայց քեզ. Եսայիաս ասէ. «Ահա կոյս յղասցի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ»[16] այսինքն՝ ընդ մեզ Աստուած: Եւ այլք[17] բազումք[18] յԵսայեայ[19]: Իսկ Միքիաս ասէ. «Եւ դու Բեթղեհէմ[20] տունդ Եփրաթայ սակաւաւո՞ր իցես լինել ի հազարաւորս Յուդայ, իքէն ելցէ ինձ լինել իշխան[21] Իս-րայէլի. և ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի»[22]: Եւ դարձեալ Եսայիայ[23] «Այլ նոքա կամէին, եթէ հրձիգ լեալ էին, զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն նորա ի վերայ ուսոց իւրոց. և անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի[24] խորհրդոյ, սքանչելի խորհրդակից, Աստուած հզօր, իշխան, հայր հանդերձելոյ աշխարհին»[25]: Արդ ծանիր զասացեալսդ Եսայեայ որդւոյ Ամովսայ: Ո՞[26] ոք է խորհրդակից Աստուծոյ կամ ո՞[27] ոք է Աստուած կամ ո՞[28] ոք է հզօր, եթէ ոչ յաղագս Էմմա-նուէլին ասացեալքդ[29]: Դարձեալ Եսայիայ[30]. «Բղխեսցէ[31] գաւազան յարմատոյն[32] Յեսսեայ[33] և ելցէ ծաղիկ յարմատոյ[34] անտի և հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ»[35], այսինքն մարմնաւորութեան նորա ի կուսէ: Եւ դարձեալ Եսայիաս[36] ասէ. «Զօրացարուք ձեռք[37] լքեալք և ծունկք[38] կթուցեալք, մխիթարեցարուք կարճամիտք սրտիւք, զօրա-ցարուք[39] և մի՛ երկնչիք. ահաւասիկ Աստուած մեր հատուցանէ դատաստան և հատուցէ, ինքնին եկեսցէ և փրկեսցէ զմեզ. յայնժամ աչք կուրաց

---

1) A. գաւազան քոյ. 2) Սաղ. խդ, 7. 3) A. Աստուած. 4) A. և fehlt. 5) B. և fehlt. 6) Սաղ. խդ, 4. 7) A. լինե. 8) B. ուրախութեամբ. 9) A.B. զընկերս. 10) Սաղ. խդ, 8. 11) Սաղ. ճթ, 3. 12) Սաղ. ճթ, 1. 13) Ղուկ. ի, 41—44. 14) B. Դաւթեայ. 15) B. և fehlt. 16) Ես. է, 14. 17) B. այլ. 18) A.B. բազում. 19) A. յԵսայիայ. 20) A. Բեդղեհէմ. 21) B. իշխան լինել. 22) Միքիա, ե, 1. 23) B. Եսայեայ. 24) A. մեզի. 25) Ես. թ, 5—6. 26) A. ո՞վ. 27) A. ո՞վ. 28) A. ո՞վ. 29) A. ասացեալսդ. 30) B. Եսայեայ. 31) A. Բխեսցէ. 32) A. արմատոյն. 33) A. Յեսեայ. 34) A. արմատոյ. 35) Ես. ժա, 1. 36) A. Եսայեայ. 37) A. ձեռք. 38) A. ծունկ. 39) A. զօրացարուք fehlt.

բացցին և ականջք խլից լուիցեն. յայնժամ վազեսցէ կաղն իբրև զեղջերու և պարզ լիցի լեզու ծանրախօսացն»[1]): Նա ինքն եկն Աստուած և փրկեաց զմեզ: Ահա ճշմարիտ է բանս[2]) մարգարէին, քանզի վազեաց կաղն իբրև զեղջերու[3]), անդամալոյծն, որ երեսուն և ութամեայ անկեալ դնէր[4]), կամ որ զցաւոցն[5]) կախեալ էր. և ահա բացան աչք, ականջք[6]) խլից. որ էարկ զմատունս յականջս և աղաղակեաց եփփաթայ. և աչք կուրին բացան[7]), որոյ զկաւն արար և եդ ի վերայ[8]) և որդւոյ[9]) Բարտեմեայ: Նա դարձեալ Եսայիայ[10]). «Ահաւասիկ Աստուած մեր, ահաւասիկ Տէր, Տէր գայ զօրութեամբ և բազուկն տէրութեամբ. ահաւասիկ վարձք իւր ընդ իւր և գործք առաջի նորա. իբրև հովիւ մի իշխեսցէ զիշխանս իւր և բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինս և ի ծոց իւր կրեսցէ զնոսա և մխիթար լիցի յղեացն»[11]): Արդ որ զայսոսիկ զամենայն արար, Աստուած զնա անուանէ Եսայի մարգարէ: Իսկ Դանիէլի մարգարէի «Տեսանէի զվէմն առանց ձեռին հատեալ»[12]). և դարձեալ հին աւուրց «Որ գայր իբրև զորդի մարդոյ»[13]). և զկնի այսորիկ ասէ «նմա[14]) նստել[15]) յաթոռ դատաւորութեան և նմա երկրպագել ամենայն երկնաւորաց և երկրաւորաց», որպէս[16]) Դաւիթ իսկ ասէ, եթէ «Երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք երկրի և ամենայն ազինք ծառայեսցեն նմա»[17]): Ո՞մ ոք ասէ մարգարէն երկիրպագանել եթէ ոչ Աստուծոյ, որպէս և գրէ յօրէնս, թէ «Տեառն Աստուծոյ քում երկիրպագցես և զնա միայն պաշտեսցես»[18]): Իսկ վասն աստուածութեան նորա դարձեալ վկայութիւնս և մարմնաւոր ծննդեան նորա ի Գաբրիէլէ հրեշտակապետէ ասացեալ առ արիամ. «Ուրախ լեր բերկրեալ[19]), Տէր ընդ քեզ»[20]) և դարձեալ՝ «Որ ծնանելոցն է ի քէն սուրբ է և որդի բարձրելոյն[21]) կոչեսցի»[22]). և դարձեալ առ Յովսէփ նոյն հրեշտակապետն. «Մի՛ երկնչիր, քանզի որ ի նմա ծնանելոց է ի Հոգւոյն սրբոյ է»[23]): Արդ՝ եթէ[24]) ոչ պատկառի հրեշտակապետն որդի Աստուծոյ անուանել[25]), զիա՞րդ պատկառեսցուք մեք ասել, որ և ինքն իսկ վկայէ ասելով. «Ելի ի Հօրէ և եկի յաշխարհ, դարձեալ թողում[26]) զաշխարհ և երթամ[27]) առ Հայր»[28]) և եթէ «Ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել»[29]) և «Հայր, ի ձեռս քո[30]) յանձն առնեմ զհոգի»[31]) և եթէ «Հայր, պահեա[32]) զսոսա»[33]) և եթէ «Հայր, գիտեմ, զի յամենայն ժամ լսես ինձ»[34]) և եթէ «Որ ետես զիս,

---

1) Ես. լե, 3–6. 2) A. *բանս մանս*. 3) A. *եղջերու*. 4) A. *դնել*. 5) B. *զցուոցն*. 6) A. *ականջք* fehlt. 7) A. *բաբացան*. 8) A. *եդեր*, B. *եդիր*. 9) A. *որդւոց*. 10) B. *Եսայեայ*. 11) Ես. խ, 10—11. 12) Դան. բ, 34. 13) Դան. է. 13. 14) A. *նմա* fehlt. 15) B. *նստիլ*. 16) A. *որ*. 17) Սաղ. հա. 11. 18) Մատթ. դ. 10. Ղուկ. դ. 8. Vgl. Երկ. օր. զ, 13. 19) A. *բերկրեալ* fehlt, B. *բերկեալ*. 20) Ղուկ. ա, 28. 21) B. *բարձրելոյ*. 22) Ղուկ. ա, 32. 23) Մատթ. ա, 20. 24) A. *եթէ* fehlt. 25) A. *անուանեալ*. 26) B. *դողում*. 27) A. *երդամ*. 28) Յովհ. ժզ, 28. 29) Ղուկ. բ. 49. 30) B. *քոյ*. 31) Ղուկ. իգ. 46. 32) A. *պայեա*. 33) Յովհ. ժէ, 11. 34) Յովհ. ժա, 41—42.

ետես զՀայր[1] իմ»[2] և եթէ «Որ ոչ հաւատայ յՈրդի, բարկութիւնն[3] Աստուծոյ կայ և մնայ ի վերայ նորա»[4] և եթէ «Գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնի և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց»[5], յիմաստնոց՝ այսինքն յիմաստասիրաց[6], ի գիտնոց՝ այսինքն ի մարգարէից, «յայտնեցեր տղայոց» այսինքն՝ առաքելոցն. և եթէ «Այո, Հայր, այսպէս հաճոյ եղև առաջի քո»[7] և եթէ «Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ[8]» և եթէ «Ոչ ոք ճանաչէ Հայր, եթէ ոչ Որդի և ում Որդին[9] կամիցի յայտնել»[10]. և ապա բարբառի երանաւէտական բանիւն ասելով. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ ի ձեզ և ուսարուք, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ և գտջիք հանգիստ անձանց ձերոց[11]), զի լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրոգի[12]): Արդ եթէ պարտ է լսել աւետարանական ձայնին, եկ ընկալ զքաղցր լուծն և հրաժարեաց ի յաղբից[13] հրապուրեցուցիչ և մի[14] հնազանդիր օրինացդ մոլորեցուցիչ, քանզի ասէ Բանն Աստուծոյ, եթէ «Հայր ոչ զոք դատի[15], այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ»[16]։ Այսոքիկ հայրութիւնք բազումք ասացեալք ի Յիսուսէ և բազում, զոր ոչ եմք գրեալ։ Ապա եթէ ասիցէ ոք ի ձէնջ, եթէ սուտ են գրեալքն աւետարանին և ոչ են Յիսուսի, ամբարիշտ բարբառի բերանն այն, քանզի զի՞նչ օգուտ էր մեզ այսքան ազանց իմաստնոց և գիտնոց՝ հռովմայեցւոց[17], յունաց և վրիացւոց և աղուանից և այլ բազում ազգաց թիւրել զաւետարանն Աստուծոյ և երկիրպագել[18] մարդոյ իբր Աստուծոյ, մանաւանդ առաքելոցն[19] զի՞նչ օգուտ է քարոզել ճշմարտութիւն ստութեամբ[20] և ինքեանք մերկ և բոկք, քաղցեալ և ծարաւի շրջել. և[21] ի վախճանին խաչի գլխիվայր սուրբն[22] Պետրոս և համբուրէ զխաչն և ի խաչին զնոյն քարոզէ, այն՝[23] որ վէմն է[24] հաւատոյ հիման առաքելոց և մարգարէից։ Եւ Անդրէաս խաչի, գիրկս արկեալ[25] զխաչիւն, համբուրէ և ասէ. Վաշ[26] քեզ, խաչ։ Եւ Պօղոս գլխատի և զնոյն քարոզէ. «Ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»[27]. և քարոզէ յայտնապէս թէ «Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. և ամենայն լեզու խոստովան լիցի, թէ տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր»[28]։

---

1) A. Հայր. 2) Յովհ. ժդ, 9. 3) A. բարկութիւն. 4) Յովհ. գ, 36. 5) Մատթ. ժա, 25. Ղուկ. ժ, 21. 6) A. յիմաստնասիրաց. 7) B. քոյ Մատթ. ժա, 26. 8) Մատթ. ժա, 27. 9) B. որդին fehlt. 10) Մատթ. ժա. 27. 11) B. ձերոց fehlt. 12) Մատթ. ժա. 28—30. 13) B. ի հաղբից. 14) A. B. մի fehlt. 15) B. դատէ. 16) Յովհ. ե. 22. 17) A. հռոմէացւոց. 18) B. երկրպագել. 19) A. առաքելոյն. 20) B. ստութեան. 21) A. և fehlt. 22) B. որպէս սուրբն fehlt. 23) B. զայն. 24) A. է fehlt. 25) A. առեալ. 26) A. վաշ fehlt. 27) Գաղ. զ. 14. 28) Փիլիպ. բ. 10—11.

Իսկ Մարկոս յԵգիպտոս գլխատեալ լինի և ի մեռանելն իւրում քարոզէ զՈրդի բանն Աստուած։ Եւ Յովհաննէս[1] ի բանտի ի Պատմոս կղզւոջ աւետարանէ. «Ի սկզբանէ[2] էր բանն և բանն էր առ Աստուած և Աստուած էր բանն»[3]։ Եւ Թադէոս[4] զԱբգար բժշկէ և ինքն ի Սանատրկոյ մեռանի և ի մեռանելն իւրում քարոզէ զՔրիստոս Աստուած բանն։ Այսպէս և ամենայն առաքեալքն[5] երկոտասանքն[6] և եօթանասունքն և հինգ հարիւրքն[7], ոմանք գլխատեալք և ոմանք խաչեալք, և ոմանք չարչարեալք քարոզեցին զբանն Աստուած և ոչ ուրացան։ Եւ Ստեփաննոս առաջին մարտիրոս քարկոծեալ աղաղակեաց ասելով. «Ահա տեսանեմ զերկինս բացեալ և զՈրդի նստեալ ընդ աջմէ Աստուծոյ»[8]։ Եւ Յակոբ[9] արդարն կոչեցեալ, այն որ վկայեալն էր յամենայն Իսրայէլէ, այն որ ծունկք իւր իբրև զուղտու կաշեալք[10] էին և հերք խուզեալք և երես իւր այլագունեալ, սա[11] ի քարոզել զբանն Աստուած անկեալ յաշտարակէն ի վայր, կոփչօք զարկուցեալ մեռանի և զնոյն բարբառի։ Եւ մերն Գրիգոր[12], զկնի այսմ բազում ամաց չարչարեալ անտանելի չարչարանօք, որպէս տեղեակ ես, և երեքտասանամեայ ի խորագոյն վիրապին կեալով, ոչ ուրացաւ, այլ զնոյն քարոզեաց Բանն Աստուած, և զՀոգին սուրբ բղխումն[13] և լուցիչ։ Եւ նախ քան զայսոսիկ ամենայնքն Յովհաննէս[14] որդի Զաքարիայ քահանայապետի և մկրտիչ, այն որ ի վերն է[15] քան զամենայն ծնունդս կանանց, քանզի եօթնամեայ յանապատ[16] վարեցաւ ի հրեշտակէն և երեսուն ամ պահօք և կուսութեամբ ընկալեալ զՀոգին Աստուծոյ, զայս Յիսուս ասէ զառն Աստուծոյ ըստ մարմնոյ, իսկ ըստ աստուածութեան Որդի Աստուծոյ, բարձող մեղաց աշխարհի։ Արդ այսոքիկ առաքեալքս[17] և աշակերտքս[18] թէ սուտ զաւետարանն Աստուծոյ գրեցին և փոխեցին զճշմարտութիւնն ընդ ստութեան, ընդէ՞ր մեռեալս[19] յարուցանէին, զի՞արդ կուրաց տային տեսանել, զի՞արդ զբորոտս սրբէին, զի՞արդ[20] զթագաւորս խոովէին և զբիւրս զօրացն մոլեալս և դարձեալ բժշկէին, զի՞արդ նշանքն լինէին, զի՞արդ երկոտասան այր երբայեցի անմար ձկնորսք յունաց իմաստնոցն յաղթեցին և աթենացւոց հռետորացն և թագաւորացն առանց զինու և նետի. Նոցա ոչ սուսեր, այլ բան Աստուծոյ և որ ի վեր է քան զամենայն սուր երկսայրի. Նոքա բոկք, նոքա աղքատք[21], սակայն այսպէս բարբառին, որպէս Պօղոս, եթէ «Քակտեմք զամենայն միտս ի հնազանդութիւն հաւատոցն Քրիստոսի»[22]։ Արդ այն Յիսուս, զոր դուք մարգարէ ասէք և հոգւով

---

1) A. Յօհաննէս. 2) B. ի սկսբանէ. 3) Յովհ. ա, 1. 4) A. Թաթէոս. 5) A. առաքեալն. 6) A. երկոտասանք. 7) A. հարիւքն. 8) Գործք. է. 55. 9) A. Յակօբ. 10) A. կոշեալք. 11) A. առ. 12) A. Գրիգորիոս. 13) A. բղումն. 14) A. Յօհաննէս. 15) A. էր. 16) A. ցանապատ. 17) B. առաքեալս. 18) B. աշակերտս. 19) A. մերեալս. 20) A. զի՞. 21) A. ախքատք. 22) Բ. Կորնթ. ժ, 5.

Աստուծոյ ծնեալ, ապա եթէ[1] փոխեցին առաքեալքն զաւետարանն[2] նորա և սուտ գրեցին, ուրեմն չէր մարգարէ, որ աշակերտօքն[3], որ սուտք[4] էին և ստութիւն քարոզէին և մարդապաշտութիւն[5] ուսուցին, այն ոչ մարգարէ է և ոչ տեսանող, քանզի ոչ ծանեաւ զճշմարտութիւն: Քանզի թէպէտ և Հրէայքն[6] խոտորեցան յօրինացն Մովսէսի և ի պատուիրանացն Աստուծոյ, այլ զօրէնսն ոչ փոխեցին, այնպէս և զամենայն մարգարէից գիրս: Թէպէտ և զհուրեանսն[7] սպանանէին, այլ զգրեալսն ճշմարտութեամբ պահէին հրէայքն[8]: Եւ այս ոչ ուրուք ի գրի կայ՝ փոխեալ զգիրս մարգարէից կամ զՄովսէսի: Արդ՝ եթէ փոփոխեալ եմք, զի՞նչ դիւրութիւն ի կենցաղումս օրինադրեցին մեզ ի կերակուրս կամ յըմպելիս[9] թէ յամուսնութիւնս թէ յարիւնհեղութիւնս եթէ յագահութիւնս. կամ զի՞նչ[10] ինքեանք, որք[11] ուսուցին զմեզ, փառս ընկալան կամ հեշտութիւն. գուցէ ասիցեն՝ տիմարք կամ տգէտք լեալք[12]: Եւ զիա՞րդ Եղիայ և Մթէն[13] անգէտ և Արաբիա[14] ապառաժ ծանօթ: Ողէ՜, ո՛ սիրելի: Արդ յաղագս ծննդեան նորա, որ ըստ մարմնոյ, ասացաք. ասասցուք[15] յաղագս տնօրինական մատնութեան և չարչարանացն[16] ի մարգարէիցն նշանակեալ. Զաքարիայ՝ «Եւ ծանիցեն քանանացիքն[17] զխաշինս պահեստի իմոյ, զի բան Տեառն է. և ասացից ցնոսա, թէ բարւոք[18] թուի, տուք[19] զվարձս իմ, ապա թէ ոչ, զրոյց արարէք»[20] այսինքն մատնութիւնն Յուդայի, որ էառ երեսուն արծաթ: Եւ դարձեալ Եսայիա[21] «Վա՜յ անձանց նոցա, զի խորհեցան խորհուրդ չար առանձին և ասեն՝ կապեսցուք զարդարն, զի դժպհի եղև մեզ. այսուհետև զարդիւնս ձեռաց իւրեանց կերիցեն»[22]: Դարձեալ Եսայիա՝[23] «Ես ոչ խստանամ և ոչ ընդդէմ դառնամ. զթիկունս իմ[24] ետու ի հարուածս և զծնօտս իմ յապտակս և զերեսս իմ ոչ դարձուցից յամօթոյ ընդ երեսս ի[25] թքանելոյ»[26]. Իսկ Դաւթայ՝[27] «Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ տկարացան»[28]. և թէ՝ «Մատնեցին զնա ի տարապարտուց»[29]. և թէ՝ «Բան անօրէնութեան եդին ի վերայ իմ»[30]. և թէ՝ «Որ ուտէր[31] ընդ իս հաց, արար ինձ խաբէութիւն»[32]. և թէ՝ «Կակուղ էին բանք նոցա քան զձէթ և ինքեանք[33] որպէս սլաք»[34].

---

1) B. Ապ'եթէ. 2) A. զաւետարան. 3) A. աշակերտեօքն, B. աշակերտիւքն. 4) A. սուտ. 5) B. մարդապաշտութիւն. 6) A. Հրեայքն. 7) A. զհուրեանք. 8) A. Հրեայքն. 9) A. B. յմպելիս. 10) A. զզի՞նչ. 11) A. որ. 12) A. լեալ. 13) A. յՄթէնս. 14) A. Արաբիայ. 15) A. ասասցուք fehlt. 16) B. չարչարանաց. 17) A. քանանացիք. 18) B. բարիոք. 19) A. տուի. 20) Զաք. ժա, 11—12. 21) A. Եսայիայ. 22) Եսայ. գ, 9—10. A. B. զարիւնս. 23) A. Եսայեայ. 24) A. իմ fehlt. 25) A. ի fehlt. 26) Ես. ծ, 5—6. 27) B. Դաւթեայ. 28) A. տկարացան fehlt. — Սաղ. ձէ, 10. 29) Սաղ. ճը, 4 (?) 30) Սաղ. խ, 9. 31) A. ուտեր. 32) A. խաբէութիւն. — Սաղ. խ, 10. 33) B. ինքեանք էին. 34) Սաղ. ծդ, 22.

և այլ ի բազմաց մարգարէից։ Իսկ վասն խաչելութեան նորա յԱմբակումայ մարգարէէ. «Տէ՛ր, զլուր քո լուայ և երկեայ. Տէ՛ր, նայեցայ ի գործս քո[1]) և զարհուրեցայ»[2])։ «Ի մէջ երկուց կենդանեաց ելեր ի կառս քո և հեծելութիւնդ քո ի փրկութիւն եղև»[3]) և աղաչեաց թէ ‹Ի բարկութեան զողորմութիւն յիշեա›[4]). վասն որոյ[5]) աղաղակեաց Յիսուս. «Հայր, թող սոցա»[6])։ Իսկ ի Միքիայ մարգարէէ[7]) ‹Արեգակն խաւարեսցի և լուսին ոչ տացէ զլոյս›[8])։ Իսկ Զաքարիայ ‹Ընկեսցէ տէր Աստուած մեր յաւուր[9]) յայնմիկ և ամենայն սուրբք ընդ[10]) նմա›[11])։ Ի Մովսէսէ ‹Տեսանիցէք[12]) զկեանս ձեր կախեալ զփայտէ›[13])։ Ի Զաքարիայ «Եղիցի օրն այն ցուրտ և պարզ. և օրն այն յայտնի Տեառն. ոչ տիւ և ոչ գիշեր եղիցի. և ընդ երեկս եղիցի լոյս, և յաւուր յայնմիկ բղխեսցէ ջուր կենդանի յԵրուսաղէմ»[14]) այսինքն աւազան, որ կանգնեցին առաքեալքն։ յԵրեմեայ ‹Լոյս[15]) երեսաց մերոց տէր Քրիստոս›[16]). և եթէ ‹Ես որպէս գառն անմեղ վարեցայ ի սպանդ›[17]) և եթէ ‹Եկայք արկցուք փայտ ի հաց նորա›[18])։ Եւ ի Սողոմոնէ[19]) «Փայտ ամենեցուն ի նա, և որ պատսպարին[20]) իբրու ի տէր հաստատութեան»[21]). Իսկ ինքն իսկ Յիսուս «Որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, այնպէս բարձրանալ[22]) պարտ է Որդւոյ»[23]) և եթէ «Խաչիլ պարտ է Որդւոյ մարդոյ»[24]), քանզի եղեալն երկրորդ Ադամ, յորմէ անկաւ ի ծառէն ստորանկեալ, եւ սա և արբեալ զդառնութեան ճաշակ, զգեցեալ զադամային մարմին[25]) և եբարձ զանէծս և ինքեան միայնոյ է գիտել զտնօրինելն, այլ ոչ մեզ. միայն հաւատալ զոր ինչ ասացն և ակն ունել աւետեացն յուսով, որպէս Աբրահամ հաւատովք։ Բայց զոր գրէ Մահմէտն ձեր ի կուրանն բազում ինչ օտարոտի[26]) զմարգարէիցն առասացութիւնս, զոր ոչ եմք գտեալ ի մարգարէսն[27]) երբէք, նաև ոչ ասացեալ իսկ նոցա բնաւին. և եթէ ոչ հաւատաս մեզ, առեալ ի[28]) հրէիցն, ընթերցցիս[29]) և ոչ երբէք գտցես այնպէս, որպէս ասաց Մահմէտ, և ահա վկայութիւն թշնամեաց հաւատալի է, և ոչ զոր ի Մովսիսէ[30]) և ի Դաւթայ և ի Սողոմոնէ ասացեալն եղև, և ո՛չ յայնցանէ, զոր առեալ է բան, ուղղախօսութեան գտցես և ոչ բան։ Եւ զկնի այնորիկ գրեաց բանիւ Յիսուսի, իբրու թէ

---

1) B. նայեցայ ի գործս քո fehlt. 2) B. զարմացայ. — Ամբ. գ, 2. 3) Ամբ. գ, 8. 4) Ամբ. գ, 2. 5) A. վասն որոյ fehlt. 6) Ղուկ. իգ, 34. 7) A. Միքիայ մարգարէ. 8) A. լոյս. — Vgl. Մատ. իդ, 29. Մար. ժգ, 24. Ես. ժգ, 10. Յովէլ Բ, 10. 9) A. յաւոր. 10) A. ընդ fehlt. 11) A. ինձ Զաք. ժգ, 5. 12) A. տեսանէք. 13) Ելք. խա, 13. 14) Զաք. ժդ. 7—8. 15) A. von և յաւուր bis լոյս fehlt. 16) Ողբ. դ, 20. 17) Եր. ժա, 19. 18) Եր. ժա, 19. 19) A. և ի fehlt. Սաղոմոնէ. 20) A. պարսպարին. 21) Առակք. գ, 18. 22) A. բարձրացեալ. 23) Յովհ. գ, 14. 24) Ղուկ, իդ, 7. 25) B. մարմիր. 26) B. օտարօտի. 27) B. զմարգարէսն. 28) A. ի fehlt. 29) A. ընդերցցիս. 30) B. ի Մովսէսէ.

յաւետարանէ նորա է, և յերկիւղի եղեալ զգուշանայր, եթէ գուցէ, որ զկնի իմ գալոց են առեալ ընթերցցին[1]) զգիրս հրէից և քրիստոնէից, և ոչ գտեալ համեմատ բանից իմոց, ոչ ընկալցին զօրինադրութիւնս իմ և գտայց սուտ առաջի աչաց նոցա, գրէ այսպէս, եթէ Զգիրս Մովսէսի առեալ հրէիցն յեղափոխեցին. և որ այժմս է օր[2]) ոչ վարին[3]) հրէայքն, ոչ Մովսէսին և ոչ մարգարէիցն: Նոյնպէս և զքրիստոնէիցս գրէ այսպէս եթէ Զաւետարանն Քրիստոսի, զոր հրամայեաց ինքն, փոխեալ զկնի համբառնալոյն[4]) Քրիստոսի աշակերտացն և գրեցին այլ օտարոտի[5]), զորս ոչ երբէք է ասացեալ Քրիստոսի. և զոր այժմ ունին, այս ոչ է բան նորա: Իսկ առ այս, եթէ կամիս, առակեալն ի[6]) գոհհիկս ի ճահ մեզ եղիցի բան. Տեառն ինքնին իսկ եկելոյ ոչ հաւատացին, ուրուք շարաբարձեալ ի վերայ կխիչոյ: Բայց սքանչանամ ընդ այսոսիկ, եթէ ասիցեն ձեզ հրէայքն կամ քրիստոնեայքն եթէ հարքն մեր փոփոխեալ են զգիրս Մովսէսի և մարգարէիցն և[7]) Քրիստոսի, մի՞թէ և ձերն զՄահմետին, և ասեն թէ Մահմետ ոչ է գրեալ զայդ այդպէս[8]) որպէս այժմ դուք ունիք, զի՞նչ առ այնոսիկ պատասխանել կարող էք, քանզի ոչ էիք մօտ յայնմ[9]) ժամու և ոչ այժմ վկայս երկարակեացս ունել հնար էր և ոչ յերկնուստ երևումն լինել ումեք կարողութիւն է: Ապա եթէ խոստովանիք, եթէ այն իսկ է և յուրաստ[10]) կայք, եթէ ոչ եմք փոփոխեալք, զայս և նոքա այսպէս խոստովանին, եթէ այն իսկ է և հրաժարին[11]), եթէ ոչ եմք փոխեալ: Իսկ համեմատ ի դատաստանին գտեալք[12]), երկոցունցդ կողմանց ճշմարիտ պէտս ունել: Իսկ ահա վկայք ի դատաստանի հրէայք են քրիստոնէից, ոչ ինքեանք, այլ գիրս ովսէսի և[13]) բոլոր մարգարէիցն, որ թշնամիք իսկ էին յայտնապէս: Նաև վկայէ Մահմետն ձեր. բան և հոգի Աստուծոյ կոչէ զՅիսուս[14]), որում հետևիմք և լսեմք կենդանարար և լուսաւոր բանին Աստուծոյ, այն «որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ», որք հաւատան ի նա այնմ Բանին, որ ընդ Հօր ծածկեալ էր, այնմ Բանի, որ ոչ իբրև զմերս հատանի կամ յօդ մակագրի լեզուաւ, Բանն Աստուծոյ, Աստուած, էութիւն և կարողութիւն, աջ և բազուկ և զօրութիւն, ըստ[15]) որում և ասէ. «Ես և Հայր իմ մի եմք»[16]): Իսկ այժմ եկից յայս վայր, որ ի վեր է քան զամենայն զարմանս[17]). ասէք ի կուրանն ձեր, եթէ ասէ Մահմետ, եթէ յաւուր գալստեանն Աստուծոյ Հօր ասէ ցՅիսուս, եթէ դու ասացեր[18]) եթէ որդի եմ ես Աստուծոյ և Աստուած և հաւասար նորա. յայնժամ

[1]) A. ընթերցիր. [2]) A. որպէս և այժմս է օր. [3]) A. վայրին. [4]) A. բամբառնալոյն. [5]) B. օտարօտի. [6]) A. ի fehlt. [7]) A. և fehlt. [8]) A. այսպէս. [9]) A. այնմ. [10]) A. ուրաստ. [11]) B. հրաժարեն. [12]) A. գտեալ. [13]) A. և fehlt. [14]) B. զՅիսուս կոչէ. [15]) A. ընդ. [16]) Յովհ. ժ, 30. [17]) A. զարման. [18]) B. ասացիր.

Հրաժարէ Յիսուս, եթէ մի՛, Տէր, քա՛ւ լիցի այդ և ո՞ր ասացեր դու ինձ. զի այդպէս քարոզէի ես, և ամենեքին յուրաստ[1]) լինի ի քրիստոնէից: Եւ այս են բանք[2]) ձեր, զոր հանդերձեալ է[3]) Հայր ասել ցՄիածին որդին իւր Յիսուս Քրիստոս: Եւ զի՞արդ այս կամ ո՞րպէս: Ո՞հ մեծի ապշութեան և յամառութեան մանաւանդ եթէ, անգիտութեան: Եթէ այդ այդպէս է, որ ասէ Հայր ցՅիսուս և Յիսուս ցքրիստոնեայս[4]) պատասխանի տալով, քրիստոնէիցս[5]) թուի, թէ իրաւացի գոլով ի դատաստանին, անպարտականք գտանիցին և գերակատարք յասելն մեր. Տէր, ընթերցար զգիրս Մովսէսի և բոլոր մարգարէիցն, գտա՞ք զքեզ Մեսիայն, յառաջ քան զարուսեակ ծնեալ ընդ Հօր. Բանդ Աստուած, ի վերջին աւուրն մարմնանալ յանձն առեր ի սրբոյ կուսէն աւետեօք[6]) հրեշտակապետին Գաբրիէլի, գտա՞ք զհրեշտակս ողջասաւորս, զմոգսն ընծայաբերս առաջնորդութեամբ հրեշտակապետին, որ զօրէն աստեղ նմանութեան ընթանայր առաջի նոցա, մինչ յԵգիպտոս շարժեցեր[7]) զձեռագործս և տապալեալ կործանեցեր. փախեալն[8]) քեզ բանայր դուռն տաճարին. ի գիրկս ընկալեալ ծերունւոյն[9]), խնդրէր ի կապողէդ արձակումն ի կենացս և երթալ ի խաղաղութիւն. քեզ վկայէ ձայն բարբառոյն յանապատին Յովհաննէս և[10]) Հօր առաքման Հոգին սուրբ. զքեզ Հայր սիրելի որդի իւր անուանէ և հրամայէ քեզ լսել հաճութեամբ Հօր. բարձօղ բոլորից մեղաց զքեզ նշանակէ Յովհաննէս[11]): Դու Տէր որ[12]) զդեւս յեռս պարկուցեր մինչեւ[13]) յանապատին, զքեզ, Տէր, հրեշտակք[14]) մատեան և պաշտէին. Դու, Տէր, խաւարելոց լոյս շնորհեցեր և կաղաց գնացք, խլից լսել, անդամալուծաց առողջութիւն, հիւանդաց բժշկութիւն, գօսացելոց առողջութիւն[15]), դիւահարաց զգաստութիւն, մեռելոց յարութիւն. և զորս ոչ կարէ տանել աշխարհ, զանբաւելի բարերարութիւնն զիա՞րդ համառօտաբար կարասցուք ասկաւոք յայտնել. քեզ դարձեալ ի լերինն Թաբոր[16]) Մովսէս[17]) և Եղիայ վկայք ճշմարտութեանդ երեւեալ, և Հայր յամպոյն վկայեալ՝ Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուարուք: Տեսար, Տէր, զբազում նշանս և զարուեստս աստուածապէս ի մեզ[18]) սքանչելագործեալ, մինչեւ հրեշտակք սարսեալք, ծովու պակուցեալ, զեւք կապեալք ի խոցս առաքեալք և խոստովանեալ լեգէոնի[19]) զքեզ որդի Աստուծոյ: Ի բանից քոց[20]), Տէր, դժոխք սարսեալք[21]), մեռեալք արտաքս եկեալք, հաց բազմացեալ, քաղցեալք յագեալ, ծառ

1) A. ուրաստ. 2) A. բանքն. 3) A. B. են. 4) A. ցքրիստոնեայքս. 5) A. ցքրիստոնէիցս. 6) A. աւետեօք. 7) A. շարժէր. 8) A. փախեալ. B. բակեալն. 9) A. ծերունոյն. 10) A. դու և. 11) A. Յօհաննէս. 12) A. որ fehlt. 13) B. մինչ. 14) A. հրեշտակ. 15) A. von հիւանդաց bis դիւահարաց fehlt. 16) A. Թափոր. 17) A. Մօսէս. 18) A. ի քեզ. 19) A. լէգէոնի. 20) A. B. քո. 21) A. սարսեալ.

գոսացեալ, կաւ ակն եղեալ տեսանէր. դու Տէր, որ մարմին զգեցար և ի չարչարանս եկեալ, առաջի ծառայի տեսաք զքեզ և ի խաչին բևեռեալ, ի ձայնէ գոչման քո զերկիրս տեսաք ցելեալ, զարեգակն և զլուսին[1]) խաւարեալ, զվարագոյր տաճարին հերձեալ, զվէմս պատառեալ. զմեռեալս յարուցեալ ի մէնջ, Տէր, հարիւրապետն տեսեալ վկայեաց: Յովսէփ յարեմաթացի[2]) պատեաց, ի գերեզմանի եդեալ զկենդանիդ Աստուած Բանդ. քահանայից մատանեաւ կնքեցար ի[3]) վիմի և զօրութեամբ աստուածութեանդ քո յարեար: Հրեշտակք ի վերայ վիմին[4]) նստելով[5]), ի ձայն փողոյ զյարութիւն քո աւետարանեցին մեզ: Յարուցեալ լոյս ծագեցեր[6]) աշխարհի, կատարելով զբոլոր ասացեալն ի մարգարէիցն վասն քո[7]): Ութօրեայ[8]) դրօքն փակելովք մտեր առ աշակերտսն: Զեռօքն Թովմայի[9]) շօշափեցար, ցուցեր և զնշան բևեռացն[10]). ընդ մեզ, Աստուած, շրջեցար, քառասնօրեայ ճաշակեալ ընդ մեզ, երևեցար յայտնապէս, հրամայեցեր[11]) մկրտել «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»[12]) ուսուցանել որ ինչ պատուիրեցեր մեզ. հարցաք ընդ քեզ «Տէր, ցոյց մեզ զՀայր»[13]), ասացեր այսպէս եթէ «Անմիտք էք»[14]) «Ես և Հայր իմ[15]) մի եմք»[16]) և «Որ ետես զիս, ետես զՀայր»[17]): Եւ զայն ցՓիլիպպոս[18]) ասացեր, Տէր. «Հայր ոչ զոք դատի, այլ զամենայն[19]) դատաստանս ետ Որդւոյ իւրոյ»[20]) և «Որ հաւատայն յՈրդի, հաւատայ ի Հայր»[21]) և «Որ ոչ հաւատայ յՈրդի բարկութիւնն Աստուծոյ կայ և մնայ ի վերայ նորա. և որ ոչ հաւատայ յՈրդի ոչ[22]) հաւատայ ի Հայր առաքիչն[23]) նորա»[24]) և «Ես ի Հայր և Հայր յիս»[25]) և «Ամենայն ինչ, որ Հօր է, այն իմ է և որ ինչ իմ է, այն Հօր է»[26]) և «Եթէ ոչ[27]) ընդունիք զբանն, զոր լսէք, Որդի մարդոյ յամօթ արասցէ զնա առաջի հրեշտակաց Աստուծոյ»[28]): Դու, Տէր, յաղօթելն քո[29]) առ Հայր քո ասէիր, եթէ «Չեմ յաշխարհէ աստի»[30]) և եթէ «Ելի ի Հօրէ և եկի յաշխարհ և դարձեալ թողում զաշխարհ և երթամ[31]) առ Հայր»[32]): Հրամայեցեր մեզ, եթէ «Որ ոչ ուտէ զմարմին իմ և[33]) ըմպէ զարիւն իմ, ոչ ունի կեանս յանձին իւրում»[34]) և եթէ «Որ յամօթ համարի զիս և զբանն իմ, յամօթ արարից զնա առաջի հրեշտակաց Աստուծոյ»[35]): Յորժամ հարցեր, Տէր, եթէ «Զո՞ ոք ասեն զինէն մարդիկն եթէ իցեմ»[36])

---

1) A. լուսին. 2) B. արմաթացի. 3) A.B. ի fehlt. 4) A. վիմի. 5) B. նստէին. 6) A. ծագեցար. 7) B. քոյ. 8) B. ութօրեա. 9) A. Թովմայի. 10) A. բևերացն. 11) A. հրամայերեր. 12) Մատ. իը, 19. 13) Յովհ. ժդ, 8. 14) Մատ. ժե, 16. 15) A. իմ fehlt. 16) Յովհ. ժ, 30. 17) Յովհ. ժդ, 9. 18) A. ցփիլիպոս, B. ցփիլիպպոս. 19) A. ամենայն. 20) Յովհ. ե, 22. 21) Յովհ. ե, 22. 22) A. Von բարկութիւնն bis ոչ fehlt. 23) B. առաքիչ. 24) Յովհ. գ, 36. 25) Յովհ. ժ, 38. 26) Յովհ. ժզ, 15. ժէ, 10. 27) A. ոչ fehlt. 28) Մար. ը, 38. 29) B. քոյ. 30) Յովհ. ը, 23. 31) A. երդամ. 32) Յովհ. ժզ, 28. 33) A. և fehlt. 34) Յովհ. զ, 53. 35) Մար. ը, 38. 36) Մատ. ժզ, 13.

և ասացին, եթէ «Ոմն[1]) զՅիսուս կամ զԵրեմիա կամ զմի ոք ի մարգարէիցն»[2]), ոչ ընկալաւ. իսկ յորժամ ասաց Պետրոս, եթէ[3]) «Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ»[4]), երանելի զնա կոչեաց և ասաց. «Մարմին և արիւն[5]) ոչ[6]) յայտնեաց քեզ, այլ Հայրն[7]) իմ որ յերկինս է»[8]): Եւ յորժամ յայտնեաց Հայրն իմ զայդոսիկ, ճշմարտութիւն խոստովանեալ[9]), ետուր նմա[10]) զփականս արքայութեան երկնից և իշխանութիւն կապել և արձակել յերկինս և յերկրի: Տէր, ասացեր[11]) «Ոչ ոք ել յերկինս, եթէ[12]) ոչ[13]), որ էջն յերկնից Որդին մարդոյ, որ էն յերկինս»[14]) և եթէ «Յառաջ քան զլինելն աշխարհի»[15]): Ասացեր, Տէր, ի ժամանակի մատնութեան քո[16]) «Միթէ ոչ եմ կարող հաստուցանել ինձ այսր ի Հօրէ իմմէ աւելի քան զերկոտասան[17]) բիւրս հրեշտակաց»[18]): Դու, Տէր, ասացեր մեզ, թէ «Որ[19]) ուրանայ զիս առաջի մարդկան, ուրանամ զնա առաջի Հօր իմոյ, որ յերկինս է»[20]): Դու, Տէր, խաչեցար ըստ գրոց մարգարէիցն, զոր վասն գալստեան քո[21]) յայտնեցին մեզ և դու իսկ ասացեր, թէ «Պարտ է Որդւոյ մարդոյ ի խաչ ելանել»[22]), սակայն Մահմետ ասէ, եթէ ոչ[23]) էր[24]) ի խաչին, այլ զայլ ոմն ետ խաչել: Դու, Տէր, առեալ զբաժակն օրհնեցեր և արիւն քո անուանեցեր և և զհացն մարմին, իսկ Մահմետ ամենեւին ոչ տայ հպել կամ ըմպել, բայց և զկաթուածս ի վերայ զգեստոյն այնու ոչ տայ թողուլ աղօթել: Դու, Տէր, որ հրամայեցեր մեզ[25]) քարոզել «յանուն[26]) Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ[27]) և զայս ամենայն պատուիրեցեր, զոր վերագոյնդ ասացաք, այժմ հրաժարեմ, յուրմէ լինիս ի բանէն[28]) քո, ճշմարիտդ[29]) Աստուած, խուսափեմ ի Մահմետէ[30]):

Բայց գիտեմ, ով ամիրայ, եթէ ոչ գտանես յայնժամ[31]), զոր յուսացեալն ես, եթէ[32]) ոչ յայտնապէս լսես դու և ոչ բոլոր յուսացեալքն ի նա, քանզի դարձցին[33]) հեթանոսք անդրէն ի դժոխս, որք մոռացան զԱստուած: Բայց պարտ է առաքելոցն սրբոց դարձեալ ասել[34]) զՔրիստոս այսպէս[35]). Տէր, քոյին աստուածեղէն բարբառովդ լոյս աշխարհի զմեզ[36]) անուանեցեր և աղ անհամութեան[37]) մարդկան և ասացեր այսպէս, եթէ

---

1) A. զոմն. 2) A. զմարգարէիցն. — Մատ. ժզ, 14. 3) A. թէ. 4) Մատ. ժզ, 16. 5) A. արիւն քո. 6) A. ոչ fehlt. 7) B. Հայր. 8) Մատ. ժզ, 18. 9) B. խոստովանել. 10) A. նմա և. 11) A. ասացեր fehlt. 12) A.B. և. 13) A. ոչ fehlt. 14) Յովհ. գ, 13. 15) Յովհ. ժէ, 5. 16) B. քոյ. 17) B. երկոտասան. 18) Մատ. իզ, 53. 19) B. որ fehlt. 20) Մատ. ժ, 33. Ղուկ. ժբ, 9. 21) B. քոյ. 22) Ղուկ. իդ, 7. 23) A. ոչ fehlt. 24) A. որ. 25) A. մեզ fehlt. 26) A. յանու. 27) Մատ. իը, 19. 28) A. ի բաժակէն. 29) A. ճշմարիտ. 30) B. ի մահմետէ. 31) A. եթէ յայժամ. B. եթէ յայնժամ. 32) A.B. և. 33) B. դարձցեն. 34) A. ասել fehlt. 35) A. այսպէս fehlt. 36) A. զմեզ fehlt. 37) A. անմահութեան.

«Որք ոչ ընդունին զձեզ և զբանն ձեր, դիւրագոյն լիցի[1]) երկրին սոդո-մացւոց[2]) և գոմորացւոց քան քաղաքին այնմիկ»[3]). Հրամայեցեր մեզ նստել յերկոտասան աթոռսն դատել զերկոտասան[4]) ազգն Իսրայէլի, և այժմ Մահմէտ զմեզ գոյս անուանէ;[5]) և այլ չար ևս, եթէ զաւետարանն Քրիստոսի փոփոխեցին և օտարոտի[6]) գրեցին. Դու, Տէր, հրամայեցեր «Օրէնք և մարգարէք մինչև ցՅովհաննէս[7]) և յայնմհետէ[8]) արքայու-թիւնն Աստուծոյ քարոզի»[9]), և մեք քարոզեցաք[10]) զարքայդ ճշմարիտ եկեալ յաշխարհ և ծանեաք զճշմարիտ աստուածութիւն քո[11]) և կատարեցաւ առ[12]) մեզ առացեալքն ի քէն, Տէր, առաքեալ իբրև զոչխարս ի մէջ գայլոց, սպանանել զմեզ և համարել պաշտօն մատուցանել Աստուծոյ. գայլս գտաք, այլ մարգարէ ոչ երբէք, գողս տեսաք, այլ ճշմարտութիւն ոչ ամենևին: Եւ այսորիկ առաքելոցն առասութիւնք: Իսկ քրիստոնէից բոլոր արտօսր, հալածանս, յափշտակութիւն, տնանկութիւն, գերութիւն, աւերումն, անխնայ խողխողումն[13]): Այսորիկ առ Տէր: Իսկ մարգարէիցն աղաղակ հանդերձ քննութեամբ այսպէս. ընդէ՞ր ի մէնջ անուանեցեր զքեզ, զո՞ր հոգի արդեօ՞ք ընկալար, զիա՞րդ ճշմարիտ բանս մեր[14]) ատեցեր, յորմէ՞ ընկալեալ. ի ձեռն Հոգւոյն սրբոյ յայտնեցաք զգալուստ Որդւոյն Աստուծոյ և զամենայն տնօրէնութիւն նորա ճշմարտութեամբ. զիա՞րդ խափանեցեր և քակտիչ եղեր ճշմարիտ օրինացն և յուսաւորութեան բանին Աստուծոյ, զյիշատակ մեր խափանեցեր ի վերայ շիրմանց[15]) մերոց, զեկեղեցիս հրձիգ արարեր, զտառս[16]) մեր ատեցեր, մարգարէութիւն մեր այլանդակ ուսուցեր, հակառակ Մովսէսի և Քրիստոսի գտար, զշաբաթս խափանեցեր և զկիւրակէս[17]) ոչ պատուեցեր[18]), զքահանայութիւն[19]) բարձեր և ամենևին անազգոյն եղեր. զի՞նչ նշանս արդեօք արարեր կամ զո՞ր նախասացութիւն ցուցեր. եթէ ի սուսեր պարծիս[20]), ոչ հանգոյնս[21]) Աղեքսանդրի գտցես կամ Արտաշէսի, և եթէ ի հաւանելոյդ[22]) քեզ բազմու-թեանց ոչ աւելի քան Զրադաշտին մոգի, որ աւելի քան զերկու հազար ամ բոլորեալ[23]), Մարաց և Պարթևաց և ամենայն Պարսից օրինադրեաց պաշտել զհուր, որ հզօրագոյնքն այն թագաւորքն պարսից հաւանեցան, հնազանդեալք օրինացն, և մինչև ցայսօր հասին վկայք սու-թեան իւրեանց: Եւ այս մարգարէիցն բանք առ Մահմէտ: Իսկ իմաս-տասիրացն հոյլք եթէ պարտ է առել հարցանել[24]) յաղագս[25]) գերութեանն,

---

1) B. լիցին. 2) A. սոդոմայեցւոց. 3) Մատ. Ժ, 15. 4) A. զերկոտանսան. 5) A. ասէ. 6) B. օտարօտի. 7) A. ցՅովհաննէս. 8) A. այնմհետէ. 9) Ղուկ. ԺԶ, 16. 10) A. քարոզեցայք. 11) B. քոյ. 12) A. առ fehlt. 13) A. խոխողումն. 14) A. մեր fehlt. 15) A. շիրմաց. 16) A. զտարս. 17) A. զկիրակէս, B. կիւրակէս. 21) A. պատուիրեցեր. 22) A. քահանայութիւն. 20) A.B. պարծիս. 21) A. հայնգոյնս. 22) A. ի հաւանելոյդ. 23) A. բոլո-րեալ fehlt. 24) A. անցանել. 25) A. յաղաքս.

սպանման, յափշտակութեան, հրասուզման, և ղայն բանիւն Աստուծոյ և երախտիս նմա և պատարագ, և քաջ գիտեմ, եթէ[1]) այսմ հոպտանաց[2]) ոչ հաւանին նոքա. որք ի նոցունց ոմանք ոչ միսս երբէք ուտէին յասելն իւրեանց, եթէ մեր զորովայնս մեր գերեզմանս ոսկերաց ոչ պարտ վարկանիմք առնել և զիւրեանք ի մահ մատնեալ, ոչ խուսափէին[3]) զանգիտեալ[4]), որպէս Սոկրատէս և ի նոյունց իսկ ճեմարանականացն[5]) աղօթէին փորձութիւնս կրել և զբարկացեալն կամ զսրտմտեալն ոչ ընդունէին ի[6]) ժողովս իւրեանց, ոչ եթէ զարիւնահեղսն կամ զմարդասպանսն և զյափշտակօղսն: Այլ այսոքիկ հեթանոսացն ժողովք: Այլ ի գալստեանն այսոքիկ հրէայք և հեթանոսք, քրիստոնեայք և տաճիկք: Բայց ի խոստմանն իւրում Մահմէտ թուի թէ առէ և յուսացեալքն ակնունելով յայնմանէ:

Այժմ աճապարեցէք, մինչդեռ այսօրդ 'առաջի կայ. քանզի զկինն բազմամօթեայ թուի թէ ոչ գտանէք, քանզի անդ ոչ արք ոչ կանայս առնեն և ոչ կանայք արանց լինին, և գետն գինւոյ լեալ դադարեալ լինի. և զոր ասէն[7]) անպատուեալ[8]) և խոտեալ, անդ ընդէ՞ր պատուեալ: Այլ գետս հրեղէն, զոր ձիով ի ներքս վազեալ արտաքս բերէ զձեզ, աղաչեմ, զի մի՛ մոցես ի գետ անդր[9]), զոր յահեկումն լինին եթէ ոչ մի՛ հաւանիր, հանեալ[10]) զքեզ ձիովն իւրով[11]) ի ձորն[12]) հաւանին հասանել: Արդ, որպէս յառաջագոյն ասացաք, մի՛ խստացուցանիր[13]) զսիրտ քո, որպէս հարքն քո յանապատին, և բացցես զաչս սրտի մտաց քոց[14]), և հաւանեա հնազանդել բանին Աստուծոյ, որ է լոյս փառաց Հօր և նկարագիր էութեան նորա, որ կրէ զամենայն բանիւ զօրութեամբ իւրով, սրբութիւն մեղաց մերոց արարեալ նստաւ ընդ աջմէ մեծութեան Աստուծոյ. և որ իւրով իսկ արեամբն եմուտ ի սրբութիւն սրբութեանցն առ ի քաւելոյ զմեղս այնմ, որ ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զինքն լինել հաւասար Աստուծոյ, և զանձն ունայնացոյց, զկերպարանս ծառայի առեալ, հնազանդ եղև մահու չափ և մահու խաչի, այն որ լոյսն է աշխարհի, ըստ որում ասէ ինքն «Լոյս եկի յաշխարհ, զի որք ոչն տեսանեն տեսցեն և որք տեսանենն[15]) կուրասցին»[16]). Այլ դարձեալ եթէ[17]) «Գոհանամ զքէն, Հայր, զի լուար ինձ»[18]), և զայս յաղագս[19]) մեր աղօթականս, զոր պտղաբերեաց ի մեզ և որք ի խաւարի նստէաք լոյս ծագեաց, և քեզ, եթէ[20]) կամեսցիս[21]), ծագեսցէ[22]) զլոյս ողորմութեան իւրոյ, այն որ առատն է և զուարթ առ ամենեսեան[23]) և

1) A. եթէ fehlt. 2) A. հպարտանաց. 3) A. խուսափին. 4) A. զանգիտանալ. 5) A. ճեմականացն. 6) A. և. 7) A. ասա. 8) A. անպատուուեաց. 9) A. անդր fehlt. 10) A. B. հանել. 11) B. իւրովք. 12) A. B. ի ձարն. 13) խստացուցանէր. 14) A. մտաց սրտի քոյ. 15) A. տեսանեն. 16) Յովհ. թ, 39. 17) A. եթէ fehlt. 18) Յովհ. ժա, 41. 19) A. յաղաքս. 20) A. եթէ fehlt. 21) B. կամիցիս. 22) A. ծագեսէ. 23) A. մամենեսեան.

կոչէ ի ծագաց երկնից յիւր արքայութիւնն և ծագեսցէ զարեգակն իւր բոլորից: Արդ այնմ բարի բախտին արժանացեալ եմ և միձակեալ ընդ Հովանեաւ թևոց նորա և ամրացեալ ընդ ամրածածուկ աջով նորա և արժանացեալ երիցս[1]) երանեան կոչմանն և[2]) եռանձնեան[3]) աստուածպետականին քրիստոնեայ անուան: Ըղձամ և փափագեմ[4]) այսմ երանութեան և բախտի քեզ Հասանել և ընդ մեզ[5]) փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւնն և զմի աստուածութիւն յաւիտեանս. ամէն:

[1]) A. երից. [2]) A. և fehlt. [3]) A. եռանձնեանն. [4]) A. փափաքեմ. [5]) A. մեզ fehlt.

München.

Armen. գուշակ *gušak*.

Von

H. Hübschmann.

In dem aramäisch geschriebenen Bericht eines persischen Unterbeamten aus der Zeit Darius II. (423—404 v. Chr.) finden sich einige persische Wörter und Namen, die Euting in seiner Abhandlung über diesen Bericht[1]) bereits richtig erkannt und erklärt hat. Da dieselben auch für den Armenisten von Interesse sind, so sei es gestattet, sie hier in Kürze zu besprechen. Es sind folgende:

1) Der Name Darius in den Worten aram. *bšnt* XIV *dryuhuš mlka* ‚im Jahre 14 des Königs Darius'. Es kann hier ebensogut *Dārayavahauš* = *Dārayavahōš* wie *Dārayavahuš* gelesen werden, da die volle Schreibung *hu* für *hū* (statt *hō*, *hū*) auch in *duškrtā* (s. unten) wiederkehrt. Im ersteren Falle läge der altpers. Gen. *Dārayavahauš* vor, und es erklärte sich, warum der Name ohne das aramäische Genitivzeichen (*zī* oder *l*) steht, das Euting p. 7 hier vermisst; im andern Falle ist *Dārayavahuš* der altpers. Nominativ, der zwar in der Keilschrift *Dārayavauš* geschrieben, aber doch wohl *Dārayavahuš* (mit *h*) gesprochen wurde, s. Bartholomae Vorgeschichte p. 160. Da schon der unmittelbare Nachfolger Darius II, Artaxerxes Mnemon (404—358) in seiner Inschrift den alten Genitiv *Dārayavahauš* durch die Analogiebildung *Dārayavaušahyā* ersetzt hat und diese auch statt des Nominativs *Dārayavauš* und neben demselben gebraucht, so ist anzunehmen, dass unter Darius II. der alte Genitiv bereits ausser Gebrauch war, und dass demnach in unserm Berichte *Dārayavahuš* zu lesen ist. Es ist zu beachten, dass das *h* der altpers. Form, von den Keilinschriften abgesehen, nur hier und in arm. *Dareh* (s. meine Armen. Gram. p. 36) erhalten ist.

---

[1]) Notice sur un papyrus égypto-araméen de la bibliothèque impériale de Strasbourg par M. J. Euting. Extrait des mémoires présentés par divers savants à l'académie des inscriptions et belles-lettres Ire série, Tome XI, IIe partie. Paris 1903.

Letzteres scheint für phl. **Dārēh* zu stehen und über **Dārēvah* auf *Dārayavah-uš* zurückzugehen.

2) Der Name Aršam in den Worten aram. *mran aršm* ,unser Herr Aršam' = altpers. *Aršāma.* Über arm. *Aršam* bei Moses Chor. p. 97 flg. = Sebeos 10, das aus syr. *Ukkāmā* entstellt ist, s. Justi Namenbuch p. 29, meine Armen. Gram. p. 288. Im Armenischen findet sich Aršam wieder im Namen der Stadt *Arsamosata* ,Aršams-Freude' (Armen. Gram. p. 211) und des Kantones *Aršamunik'* der Provinz Turuberan.

3) *duškert* in *mlka znh duškrta* ,regem hunc maleficum', vgl. skr. *duškrt* 'Übelthäter', *duškrtam* ,Übelthat', awest. *duškərəta* vd. 21, 6? Ein armen. **džkert* ist nicht erhalten.

4) *prtdk* in A 4 ist *prvrdk* (וו statt ת) zu lesen und nach Nöldekes und meinen Bemerkungen ZDMG 46, 139 und 326, Armen. Gram. p. 184 = phl. *fravartak* ,Brief, Schreiben', arm. *hrovartak* ,königliches Schreiben, Brief, Erlass, Besitztitel', georg. (aus dem Armen. entlehnt) *roartagi* ,königliches Handschreiben' Tchoubinof p. 413. Die altpersische Grundform war **fravartaka-* und gehört zu skr. *vart* ,sich drehen, rollen, verlaufen', *vrttá-* ,gedreht, rund', phl. *vartišn* ,Drehung', np. *gardam* ,drehe mich', *navardam* (*nivardam*) ,rolle zusammen' sc. den Brief, den Teppich etc. (v. Stackelberg WZKM XVII, 55) u. s. w., bedeutet also ursprünglich wohl ,die Rolle'. Vgl. skr. *pravarta-* ,ein runder Schmuckgegenstand, Ohrring', *pravartaka-* ,verfahrend, bewirkend' mit anders entwickelter Bedeutung.

5) *azd yt'bd* ,certius factum est' B 3—4 = phl. *azd mat* ,er wurde benachrichtigt', arm. *azd elev* ,es ward gemeldet', *azd ařnem* ,melde', denom. *azd-em* ,benachrichtige' Armen. Gram. p. 92.

6) *hndiz* ,circumdati'? B 2 = altpers. **handaiza-*?

7) *guškia* in: *dinia* = *dayyānayyē* ,Richter', *tiftia* = *tiftāyē* Daniel 2, 3? und *guškia* = *gōšakāyē*, plur. eines altpers. **gaušaka-*, das Euting zu altpers. *gauša-* ,Ohr' stellt und richtig durch ,écouteur' = ὠτακουστής ,Horcher, Lauscher, Späher, geheimer Polizist' übersetzt. Das hier für das Ende des 5. Jhd. v. Chr. bezeugte altpersische *gōšak*(*a*)- ging als *gōšak* ins Pehlevi über und wurde von den Armeniern als **gōšak* entlehnt, das im Altarmenischen lautgesetzlich zu *gušak* werden musste. Dies ist vorhanden und bedeutet ,einer, der etwas anzeigt' 1. Korinther 10, 28 u. s. w. Das davon abgeleitete *gušakem* (1 sg. pr.) bedeutet ,anzeigen, Anzeige erstatten, kund thun, verkünden, vorher verkünden, voraussagen' Lucas 20, 37, Joh. 11, 56 u. s. w. Es gehört zu aw. *gūš* ,hören auf-, vernehmen', ipt. *gūšahvā* ,vernimm', bal. *gōšay* ,hören', *niγōšay* ,hören, horchen, lauschen', arm. *zgoiš linim* ,gebe acht auf, bin vor-

sichtig' u. s. w. Von dieser Verbalwurzel idg. **gheus* war das altpers. **gaušaka-* mittelst des Suffixes *a-ka* abgeleitet und bedeutet ursprünglich: ‚Horcher'.

Nach der Form *azd*, die auf den Inschriften des Königs Darius I. bekanntlich *azda* ‚Kunde, Nachricht' lautet, zu urteilen, war um das Jahr 400 v. Chr. das auslautende *a* und natürlich auch *ā* des Altpersischen bereits abgefallen, während auslautendes *-uš* (*Dārayavahuš*) und danach auch *-iš* noch erhalten war. Armenische Lehnworte der Art wie *gušak* brauchen daher aus grammatischen Gründen nicht erst der arsacidischen Zeit zugeschrieben zu werden, sondern können noch bis in die letzte Achämenidenzeit zurückgehen.

Strassburg.

ՓԱՒՍՏՈՍԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ.

Գալուստ Տէր-Մկրտչեան.

I.

I, 1730 Թուին: Փաւստոսի առաջին հրատարակութիւնը կատարուել է Հայոց ՌՃՀԹ թուին, դեկտեմբերի 1-ին = 1730 փրկչ.: Տպագրութեան տեղը չէ նշանակուած այս հրատարակութեան մէջ, բայց տպարանի կամ «գործարանի» աշխատողների, հրատարակութեան ծախսը առանձնողների անուններից և այլ նման հանգամանքներից հետեւում է, որ այս հրատարակութիւնն եղել է Կ. Պօլսում: Միայն մի ձեռագրի վրայից է եղել այս հրատարակութիւնը, ինչպէս որ կարելի է եզրակացնել յիշատակարանի հետեւեալ տողերից. «. . . եւ վերջապէս յիշեցէք և զտպագրօղս սորա Մարտիրոս զանիմաստ ծառայս ձեր. և զորդեակն իմ զՍերովբէն, զի միով և եթ օրինակաւ հազիւ գաղափարեցի տառապանօք» (էջ 396): Այս ձեռագրի մասին ուրիշ տեղեկութիւն չունինք: Այս առաջին հրատարակութեան մասին սխալ տեղեկութիւններ ունին Տաշեան Ցուցակ էջ 1160, որ դնում է 1830, հարկաւ լոկ տպագրական վրիպակ, որ պիտի լինի 1730, և Զարբհանալեան Հին Դպր. (1886, էջ 236) որ դնում է Փաւստոսի երեք հրատարակութեանց թուականները այսպէս «1721-ին (ի Կոստանդնուպօլիս), ի Վենետիկ 1831-ին . . ի Ս. Փեթերբուրգ 1883-ին»: Առաջին երկու թուականները պիտի լինէին 1730 (փոխանակ 1721-ի) և 1832 (փոխանակ 1831-ի): Տարօրինակ է, որ նոյն այդ սխալ թուականները կրկնում են Զարբ-ի Հին Դպր. երրորդ հրատարակութեան մէջ (1897-ին, էջ 255), մինչդեռ նոյն հեղինակը իւր Հայկ. Մատենագրութեան մէջ (էջ 117 և 557) ունի ուղիղ թուականները: Այս վրիպակ թուականների վրայ կանգ առնելս միայն այն նպատակով է, որ հաւաստիանք թէ 1721-ին, 1831-ին և 1830-ին Փաւստոսի հրատարակութիւններ չեն եղած:

II, 1832 թուին: Փաւստոսի երկրորդ հրատարակութիւնը կատարուել է Վենետիկում 1832 թուին: Այս հրատարակութեանը ծառայել են հինգ ձեռագիր, որոնց մասին հետեւեալ անբաւարար տեղեկութիւնն է տալիս յառաջաբանը. «Հնգեակ օրինակաց բաղդատութեամբ առաջիկայ տպագիրս արարաւ. յորոց մին հնագոյն և անթուական ի ներհուն գրչէ գրեալ, որում մանաւանդ զհետ չոքաք, զկարեւոր զանազանութիւնս այլոց

օրինակացն առ ի սորա իջից նշանակեալ՝ ըստ մերում առ ի բազմաց վկայեալ հաւատարմութեան։ Բայց խոստովանիմք զի առ ձեռին գտեալ օրինակքս չեղեն բաւական յանխալ տպագրութիւն. քանզի բազում ուրեք և ի յայտնի վրիպակսն ամենիքին համաձայնէին, մինչև անդստին ի միոջէ օրինակէ գաղափարեալք»։

III, 1883 թուին։ Փաւստոսի երրորդ հրատարակութիւնը կատարեց Ք. Պատկանեան, 1883-ին Ս. Պետերբուրգում, Վենետկեան հրատարակութիւնից մի ձեռագրի բաղդատութեամբ. «Երրորդս այս — ասում է Պատկանեան իւր հրատարակութեան համար — արարաւ բաղդատութեամբ անթուական գրչագիր օրինակի ընդ տպագրելոյն ի Վենետիկ։ Ինչ ինչ տարբերութիւնք ընթերցման և ուղղութիւնք նշանակեցան ի մէնջ ի լուսանցս, զբաղմօք այլովք աննշանօք զանց արարեալ։ Մանաւանդ զի ի ձեռագիրն որ եհաս ի ձեռն մեր ոչ կարի զանազանէր յայլոց, զորոց ծանէ յառաջաբանն 1832 և ընդ նոսա ի միոջէ ի հնագոյն օրինակաց գաղափարեալ տեսանի»։

IV, 1889 թուին։ Փաւստոսի չորրորդ հրատարակութիւնը կատարուեց Վենետկում 1889-ին (= Վենետկեան երկրորդ տպագրութիւն)։ Այս հրատարակութիւնը 1832-ի հրատարակութեան կրկնութիւնն է, բայց օգտուել է նաև Պատկանեանի հրատարակութիւնից և մի՝ մինչև այժմս չգործածուած, անթուական գրչագրից. «Յետ առաջնոյ տպագրիս (= 1832-ի) — ասուած է չորրորդ հրատարակութեան առաջաբանում — հանդիպեալ մեր և այլոյ անթուական գրչագրի, թէպէտ և ոչ հին և ոչ զերծ ի վրիպանաց, յաւելաք ի սմանէ ի ստորև իջիցն տարբերութիւնս սակաւ ընթերցուածոց, որպէս և ինչ ինչ ի Պատկանեան տպագրէն»։

Այսպէս ուրեմն Փաւստոսի չորս հրատարակութիւն ունինք, որ կատարուել են 1730-ին Կ. Պօլսում, 1832-ին Վենետկում, 1883-ին Ս. Պետերբուրգում և 1889-ին Վենետկում։ Այս բոլոր հրատարակութիւնները ունեցել են ընդ ամենը ութ ձեռագիր, որոնցից վեցը Վենետկում, մէկը Ս. Պետերբուրգում, մէկը Կ. Պօլսում։ Այս ութ ձեռագրերի մասին ունեցած տեղեկութիւնները շատ անբաւարար են։ Բայց ամենայն հաւանականութեամբ բոլորն էլ գրուած են թղթի վրայ, եթէ դրանցից որ և է մէկը լինէր մագաղաթ՝ այդ անպատճառ կյիշէին Վենետիկցիք կամ Պատկանեանը. եթէ ոչ բոլորը, գոնէ մեծագոյն մասը անշուշտ նոր գրչութեամբ են. բոլորն էլ համարուում են անթուական, թէև մի ուրիշ աղբիւրից ինձ յայտնի է, որ Վենետկի Ձ-երից մէկը կրում է Հայոց ՌՃԽԹ = 1700 փրկ. թուականը (Համառօտ ձեռագիր ցուցակ Վենետկի Ձ-երի, կազմուած 1888 թուին)։

Ամենակարևորը մեզ համար այն է, որ այս ութ Ձ-երը, ինչպէս այդ երևում է տպագրերի համեմատութիւնից, ինչպէս և այդ մասին վկայում

են Ք. Պատկանեան և Վենետկի հրատարակութիւնները, բոլորն էլ միևնոյն խմբի Ձ-եր են, մի և նոյն պակասներով, մի և նոյն սխալ ընթերցուածներով: Այսու ամենայնիւ Փաւստոսի ապագայ հրատարակիչը պարտաւոր է այդ ումբ Ձ-երի բոլոր ընթերցուածներն աչքի առաջ ունենալ, քանի որ հրատարակիչները նշանակել են միմիայն իրենց «կարևոր» թուածները:

⁂

Այժմ անցնենք Փաւստոսի այն Ձ-երին, որոնք յայտնի են ինձ այս կամ այն աղբիւրից և որոնք չեն գործածուել տպագրերում: Այս Ձ-երը կնշանակեմ եւրոպական տառերով:

1. K = No. 270 (1700 թուին) Գէորգեան Ցուցակի, թուղթ, շատ վատ նոտր գիր, շատ նման շղագրի. մեծ. 21 × 15 հարիւրամետր, երկու սիւնեակ, Փաւստոսը Ձ-ի վերջում էջ 259ա—378ա: Էջ 378ա կայ հետևեալ յիշատակարանը. «Ով որ ընթերցողք յեշեցէք ի մաքուր աղօթս ձեր զգծագրող սորին զմիւռնացի մարգար Էրէց ի վայելումն անձին իւրոյ: Թվին ՌՃԽԹ (= 1700) յուլիսի ԺԵ. ի կոստանդնուպօլիս»: Մարգար Երէցը շատ տգէտ, կիսագրագէտ գրիչ է, ամեն տողում ունի վրիպակներ. բայց այսու ամենայնիւ Փաւստոսի քննադատական հրատարակութեան ժամանակ անտես չէ կարելի առնել: Իմ բաղդատութիւններից հետևում է, որ այս Ձ-ն էլ տպագրերի խմբիցն է, թէ և ունի տեղ տեղ մանր տեղեկութիւններ: Ճիշտ նոյն տարումն է գրուած, ինչ որ Վենետկի թուական ունեցող Ձ-րը:

2. Ar. (1688 թուին) = Թաւրիզի Արամեան Գրադարան ընթերցարանի Ձ-երից, իմ ձեռքս եղած գրչագիր ցուցակում No. 16 (= նոյնը Խաչիկ վարդապետի հաւաքած Ձ-երի ցուցակում No 63. տպագրուած է այս ցուցակը, բայց դեռ չէ հրատարակուած): Թուղթ, նոտր գիր, ժողովածու պատմագրաց Խորենացի, Եղիշէ, Փաւստոս և Վարդան: Գրուած է ՌՃԼԷ = 1688 թուին, նորոգուած Աղուանից Եսայի կաթողիկոսի ձեռքով ՌՃԿԱ թուին «յասպահան ի Ջուղայ»: Անձամբ Ձ-երը տեսած չեմ:

3. M (1676 - 1678 թուին) = No. 1661,1 Էջմիածնի մատենադարանի (հիմնական բաժին). Մինաս վարդապետի Ձ-իրը, նոտր, մեծ. 31 × 23 հարիւրամետր, երկու սիւնակով, ընդամենը 554 թերթ: Ձեռագրիս ստացողն է Մինաս վարդապետ (էջ 517բ), գրիչներն Թումա (էջ 441բ) և Գրիգոր քարտուղար: Յիշատակարաններ. «Գրեցաւ թվին ՌՃԻԵ ի գիւղն Աշխուղար ձեռամբ Գրիգոր քարտուղարի» (էջ 365ա): Էջ 111ա «Ով հայր սուրբք, Նարին վարդապետն գրահանայքն որ մատնեայ ի ձեռն Ղափլան փաշային եւ փախստական և անճարակ տեղի նստեալ գրեցի զայս տետրս. թ''վն էր ՌՃԻԷ փետրվարի ամսոյն ժը, օրն ուրբաթ»:

Շատ տեղեր կայ կնիք «Նահապետ վարդապետ» ընթերցուածով: Աւրիշ մանրամասնութիւններ թողնում ենք: Աւրեմն ձեռագիրս գրուած է ՌՃԻԵ—ՌՃԻԷ = 1676—1678 փրկչ. թուին: Այս ստուար և մեծադիր Ձ-ը պատմիչների ժողովածու է և պարունակում է իւր մէջ՝ Խորենացի, Եզնիկ, Լաստիվերտցի, Եւսեբ. Եկեղեց. Պատմութիւն. Ագաթանգեղոս, Կաղանց, Մեսրոպայ երէց, Զենոբ, Յովհ. Մամիկոնեան, Փաւստոս, Եղիշէ, Օրբելեան Ստ., Միխայէլ Ասորի, Վարդան, Կիրակոս, Սոկրատ Եկ. Պատմ.:

4. T (1668 թուին) = Տիգրանակերտում գրուած Ձ-ը, այժմ պր. Կ. Եգեանի մօտ, որի մասին մանրամասն տես Ասողկան Պատմութիւն, ՍՊ. 1885, յառաջաբան Ստ. Մալխասեանի: Այս Ձ-ը պատմիչների մի ժողովածու է, տեղի կարմութեամբ շատ նման M-ին: Թուղթ, նոտր, մեծ. 27½—20 հմտր, երկսիւն: Ձ-ում մեզ համար կարևոր յիշատակարանն է «Գրեցաւ ձեռամբ Աբրահամ անարժանի ի Տիգրան[ակերտ] քաղաքի ի մատրանին սուրբ Սարգսի ՌՃԺԷ [= 1668] թվականին: Աղաչեմ յիշել զիս և զծնողքն իմ զտէր Յովհաննէսն և զԹամամն . . . (էջ լբ, յառաջ. Ասողկան): Այս Ձ-ից է, Մալխասեանի վկայութեամբ, Պատկանեանի Փաւստոսի հրատարակութիւնը «Համեմատութեամբ այլոր օրինակի Պատմութեան Փաւստոսի Բիւզանդացւոյ արար ուսուցչապետն Ք. Պատկանեանց ի Տպագիրն իւր» (Յառաջաբան Ասողկան էջ լգ, ծան. 1.): Բայց մենք վերևում տեսանք, որ Պատկանեանն իւր 1883-ի հրատարակութեան համար օգտուել է մի անթուական գրչագիր օրինակից: Մալխասեանի և Պատկանեանի ասածները հաշտեցնելու համար մեզ մնում է միայն ենթադրել, որ Պատկանեանը ունեցել է T Ձ-ի մի որևէ ընդօրինակութիւն և բուն T-ն չէ ունեցել իւր ձեռքում, ուստի և չէ տեսել T-ի յիշատակարանը: Մալխասեանի հաղորդած տեղեկութիւնը պէտք է համարել իբրև շատ լաւ աղբիւր, որովհետև այդ բանասէրը Պատկանեանի աշակերտն է եղել և T-ն անձամբ լաւ ուսումնասիրել է: Այսպիսով ուրեմն՝ T-ի ընթերցուածները մասամբ մտել են Փաւստոսի III տպագրի մէջ:

5. Z (1657 թուին) = Զաքարիա սարկաւագի ինքնաձեռագիրը, այժմս Էջմիածնում, Գէորգ. Յուց. No. 244, թուղթ, նոտր, մեծ. 20 × 15 հմտր.: Այս Ձ-ը մի ժողովածու է պատմիչների և զանազան հատուածների: Բովանդակութեան մէջ գլխաւոր տեղը բռնում են Կիրակոս, Զենոբ, Աւրհայեցի, Մեծոփեցի, Փաւստոս, Միխ. Ասորուց հատուածներ, Յակոբ Վրիմեցի և այլ մանր գրութիւններ: Գրչութիւնը մի քանի ձեռքից: Մեզ հետաքրքրող մասը — Փաւստոս էջ 467 ա — 568 ա, Զաքարիայի ձեռքով ընդօրինակուած: Ունի բազմաթիւ յիշատակարաններ, որոնցից մեկից քաղում ենք՝ Փառք . . . եղև աւարտ և ի կատար պատմութեանս, որ կոչի Բիւզանդ որ է Փօստոս, ի թուաբերութեանս հայկազնեա Ռերորդի Ճերորդի և Զեակ թուոյ [= ՌՃԶ =

1657 փրկչ.], ի յերկրիս Արարատեան, ի նահանգիս Կարբոյ և ի սուրբ ուխտս որ կոչի Յօհաննավանք . . . եւ գրեցա զի կատարումն սորա եղև ի վանս Յուշոյ ի դրունս սուրբ Սարգսի զօրավարին . . . և Առաջնորդ սրբոյս մեծ հռետորն և քաջ փիլիսոփոսն Ոսկան վարդապետն, որ և շինեաց պարիսպ ապառաժ վեմն մեծածախս և գեղեցիկ շինուածովք . . . Կատարեցաւ և աւարտեցաւ յաւուրս ամսոյն արեգի ի քսան և չորս, յաւուրս ուրբաթու (էջ 571բ—572ա):

6. Am (1656 թուից առաջ) = Յամիթում — այն է Ամիդ կամ Դիարբեքիր, որ Հայերից անուանւում է նաև Տիգրանակերտ — գրուած մի ձեռագիր, որի մասին տեղեկութիւն ենք գտնում Տաշեան ցուցակում No. 236 Ձ-րի նկարագրութեան մէջ: Այստեղից իմանում ենք, որ Հայոց ՌՃԴ = 1656 թուից կամ 1658-ից (Տաշ. Ցուց. էջ 617—618) առաջ գրուած մի ձեռագրում Միքայէլ Ամորուց յետոյ կայ եղել Փաւստոս այսպիսի յիշատակարանով. «Գրեցաւ Միխայելս և Բուզանդարանն ի տպարանն նուաստ Մինաս գրչի ձեռամբ աշակերտացն իմոց, ի դուռն սուրբ Կիրակոսին և մօրն նորա Յուղիտայի ի մայրաքաղաքս Յամիթ, յառաջնորդութեան տէր Ներսեհ աստուածաբան վարդապետին: Յորժամ հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով յիշեսջիք զմեղուցեալ նուաստ Մինաս գրիչս և զծնօղսն իմ և զամենայն աշխատաւորս : Այս Ձ-րն էլ թուղթ է և նոր գրչութիւն. 1852 թուին եղել է Կ. Պօլսում: Աւելի մանրամասն տես Տաշ. Ցուց.:

7. R (1641 թուին) — Ռոստոմեան գրչին, այժմ No. 1667.7 Էջմիածնի մատենադարանի (Հիմնական բաժին), բովանդակութիւնն է Խորենացի, Եղիշէ, 20 գլուխ Փաւստոսից, Արտանեցու քարոզները: Թուղթ, նոր, մեծ. 20 × 14 սմտր.: Յիշատակարան էջ 66ա. «Ստացող պատմագրիս զքաջ և իմաստուն Սահակ վրդ Դուզայեցին յիշեցէք որ փափագանօք ետ գրել. եւ ես նուաստ և անպիտան սուտանուն Ռոստոմս գրիչս յիշեցէք ի թվականիս ՌՂ ամին գրեցաւ»: Որեմն 1641 փրկչ. թուին: Գրչութիւնը թէև նոր, բայց գեղեցիկ և գեղարուեստական է: Մեր հետաքրքրող մասը, էջ 164ա—184բ, չունի ընկած թուղթ կամ պակասներ և է 20 գլուխ Փաւստոսից հետևեալ վերնագրով՝ «ի Բուզանդրեան Պատմութենէն»: Գլխակարգութիւնները կարմրագրով. չէ նշանակուած ոչ Դպրութիւն և ոչ Գլխի թուահամար, ուստի և բաղդատելով տպագիր Փաւստոսի հետ նշանակում ենք թէ ինչ Դպրութիւնից ինչ գլուխներ կան այս Ձ-րում և ինչ կարգով: 1. Փաւստոսի երր. դպր. գլ. ԺԴ: 2. Նոյն. դպ. գլ. ԺՉ: 3. Չորր. դպր. գլ. Է: 4. Չորր. դպ. գլ. Ը: 5. Չորր. դպ. գլ. Թ: 6. Չորր. դպ. գլ. Ժ: 7. Հինգ. դպ. գլ. Է: 8. Հինգ. դպ. գլ. ԻԷ: 9. Հինգ. դպ. գլ. ԻՉ: 10. Հինգ. դպ. գլ. ԻԷ: 11. Հինգ. դպ. գլ. ԻԸ: 12. Հինգ. դպ. գլ. ԼԷ: 13. Հինգ. դպ. գլ. ԼԸ: 14. Հինգ. դպ. գլ. ԼԹ: 15. Հինգ.

դպ. գլ. Խ։ 16. Հինգ. դպ. գլ. ԽԱ։ 17. Հինգ. դպ. գլ. ԽԲ։ 18. Հինգ. դպ. գլ. ԽԳ։ 19. Հինգ. դպ. գլ. ԽԴ։ 20. Վեց դպ. գլ. Ա։ Վերջանում է այս գլուխը էջ 184 բ «Նուաղեաց բաժանեցաւ ցրուեցաւ թագաւորութիւնն Հայոց պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամնկն և յապայ», որն և իսկապէս Փաւստոսի բուն պատմութեան վերջն է։ Սամանոս Գրիչն աւելացնում է «Այս աստի ի վայր զՄովսիսի պատմագրէն յերրորդ հատորէն գիտ, ի քառասներորդէն յերկրորդէն կարգաւ։ Օհնեալ է ած յամ ժամ»։ Այսինքն գրիչը մատնացոյց է լինում Փաւստոսի Պատմութեան շարունակութիւնը գտնելու համար Խորենացու երրորդ գիրք 42-դ գլուխը։

8. N (1624 թուին) = No. 30 Ներսիսեան Դպրանոցի Ձ-երի մատենադարանի Թիֆլիսում։ Թուղթ, նոտր։ Բովանդակութիւնն է Միքայէլ Ասորի և Փաւստոս։ Վերջինս Ձ-րում էջ 23—122։ Այս Ձ-րում Փաւստոսի Պատմութիւնը հասնում է մինչև Չորրորդ դպրութեան ԾԱ գլուխը, որից ունի միայն 13 տող, մնացած մասը Ձ-րում այժմ չկայ։ Յիշատակարանն է. «ի թուին ՌՀԳ [= 1624 փրկչ.] յուլիս ամսոյ ի ԻԲ սկսան ի Բիւզանդայ գրել. օգնեայ ինձ հոգիդ սուրբ աստուած»։ Այս Ձ-րը ՌՃՀԱ = 1722 թուին եղել է Մաղարդի Նախավկայի վանքում, Երասխի ափին։ Այս Ձ-րն ունի «Բիւզանդարան պատմութիւնք» ընթերցուածը։ Աւելի մանրամասն տես Ներս. Դպր. Ձ-երի Ցուցակը, Ա. Կանայեանցի, Թիֆլիս 1893, էջ 54—56.

9. E (1622 թուին) = No. 1677,8 Էջմիածնի հիմնական մատենադարանի։ Ինձ յայտնի Փաւստոսներից հնագոյնը։ Թուղթ, նոտր, մեծ. 21 × 15 հմտր.։ Բովանդակութիւնն է Միխայէլ Ասորի և Փաւստոս (էջ 189ա—327ա)։ Ընդարձակ յիշատակարանից քաղում ենք (էջ 327բ). «Փառք ... գրեցաւ այս Միխայիլս ձեռամբ սարկաւագացն Ամիրշին և Յովանիսին, որ սկիզբն առնէին գրչութեան և ուսանէին առ ոտս տէր Մինաս գրչի. Աստուած իւրեանց շնորհք և իմաստութիւն տա որ զայս հոգևոր արուեստս կատարեալ ուսանին։ Թվին ՌՀԱ» [= 1622 փրկչ.]։ Աւելի մանր գրչութեամբ շարունակում է յիշատակարանը. «յունիսի ի Ի աւրն ուրբաթ եկին խափուծիկ ի Կոստանդնուպօլսա բերին Ամթայ փաշին Ռ կապա, ու ասցին թէ ծառայքն խիստ աղմուկ խռովութիւն արարին զՍուլթան Մուստոֆան. և այլ շատ մեծամեծք վազիրներ սպանին. պշարն ու զբարին Ած գիտէ զվերջքն. ած ի բարին առաջնորդէ, ի ձեռս էրկու կապէ.ք այս խապարս երեկ»։ Մի երրորդ գրիչ — Յակոբ երէց — շարունակում է յիշատակարանը, յայտնելով որ Ձ-րս «վաղեմ» է տրւում «ի դուռն սբ Յակոբ հայրապետին», Շոռոթի սուրբ Յակոբ եկեղեցին է, տես Սիւնիք էջ 353 ևայլն։ Յիշւում են Շոռոթի [= Հին Նախճաւանի գաւառում] քահանաները «թվ. ՌՁԶ» = 1637-ին, յիշւում է նաև որ «ի յայսմ ամի եղև Նորգուի սուրբ աթոռոյս որ կոչի սուրբ Կարապետ»,

որ ամենայն հաւանականութեամբ Երնջակի վանքն է: Այս Թուականում եղած նորոգութեան մասին տեղեկութիւն չունի Ալիշանը: Հմմտ. Սիւնիք, 378 եւ: Ուրեմն գրուելուց 15 տարի անցած, ձեռագիրս արդէն Ամիթից տեղափոխուել է Արեւելեան Հայաստան — Ռուռութ:

10. S = Սանասարեան վարժարանի ձեռագիրը Կարինում, որի մասին միայն այսչափ տեղեկութիւն ունիմ. «Առանձնական նամակներէ իմացած եմ թէ վերջերս ձեռք անցուած է Փաւստոսի ըստ երեւոյթին ընտիր ձեռագիր օրինակ մը». 6 դեկտ. 1898, Հր. Աճառեան. տես Ցուցակ Հայեր. Ձ-րաց Սանասարեան վարժարանի ի Կարին, Վիեննա, 1900, էջ ժդ:

Ընդամենը տասը ձեռագիր, որոնք բոլորն էլ որչափ որ այդ յայտնի է մեզ — նոտր գրչութեամբ են և թուղթ: Բոլորն էլ գրուած տասնևեօթերորդ դարում 1622-ից մինչև 1700, բացի S-ից, որի մասին բաւարար տեղեկութիւն չունինք: Աւելի ուշադրութեան արժանի է այն, որ Ամիթը (= Յամիթ, Տիգրանակերտ) 17-րդ դարում ունեցել է ձեռագրեր ընդօրինակող գրիչներ պատրաստող դպրոց — Տէր Մինաս Պրչի դպրոցը — որին և պարտական ենք հաւանականաբար մեր ունեցած Փաւստոսներից շատերը: Ամիթի այդ դպրանոցի արդիւնք են մեր E և Am ձեռագրերը. նոյն Ամիթ-Տիգրանակերտումն է գրուած T-ն, որից և Պատկանեանի օրինակը. նոյն այդ Ամիթ-Արեւմտեան խմբից են M, Ալիփուղար (= «Ալիի աղբիւր») գիւղում գրուած, որի մէջ յիշւում է Ղափլան փաշա, ուրեմն օսմանցիների պետութեան սահմաններում, և K Կ. Պոլսի Ձ-րը: Այդ խմբից են և Փաւստոսի չորս հրատարակութեան ծառայած ութ Ձ-րերը: Արեւելեան Հայաստանում գրուած միմիայն Z-ն է (Յովհաննավանք Յուշի, Արագածի վրայ): Արեւելքումն են եղել և այժմ էլ գտնւում են Ar, այժմս Թաւրիզում, 1713-ին Ասպահան-Ջուղայում. R, այժմս Էջմիածնում, ստացող Սահակ վարդապետ Ջուղայեցի. N, այժմս Թիֆլիս, 1722-ին Մաղարդ-նախավկայ, Երասխի ափին: Բայց N-ն իւր տիպի կազմութեամբ (Միխայէլ Ասորի, Փաւստոս) բոլորովին նոյնանում է E-ի հետ, որ Ամիթից շատ կանուխ արդէն 1637-ին տեղափոխուել է Արեւելք՝ Ռուռութ, և այժմս Էջմիածնումն է:

Այս բոլոր 18 ձեռագրերից անձամբ տեսած եմ և այժմս ունիմ ձեռքի տակ միմիայն հինգը՝ E, R, Z, M և K: Ուշադիր բաղդատութիւնը համոզեց ինձ, որ այս ձեռագրերը կտան որոշ մանր մունր սրբագրութիւններ, բայց ընդհանրապէս բոլորն էլ պատկանում են տպագրերին ծառայած Ձ-րերի խմբին, լինելով հանդերձ նրանցից հնագոյն և ընտիր: Բոլորն էլ միատեսակ ունին, օրինակ, Գ. դպրութեան Ը գլխում մի քանի տող պակաս, Գ. դպր. ԺԲ գլուխ «և զմերոյ տոհմի ազգի իշխանն Սահառունեաց» սխալ ընթերցուածը եւն, եւն:

Լրութեան համար այս 18 Ձ-րերին պէտք է աւելացնել նորից երկու ձեռագիր. 1) No. 79 Տաշեան Ցուցակի, ԺԹ. դարի նորագոյն գրչութիւն (էջ 337), որ ունի Փաւստոսից հատուած «Զուիթայ մասը» և 2) Խաչիկ վարդապետի ժողովածուից No. 78, թուղթ, նոտր, գրիչ Ներսէս դպրապետ, գրուած Կամենեց ՌՀԳ (= 1624 թուին), էջ 112բ «Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի և վարուց նորա» Փաւստոսի վեցերորդ դպրութիւնից:

Այս բոլոր ձեռագրերը, թուով քսան, կազմում են Փաւստոսի նորագոյն օրինակների ինձ ծանօթ խումբը, որի և ոչ մի օրինակի հնութիւնը չէ անցնում 17-րդ դարից այն կողմը: Այս խմբից կլինին անշուշտ և այնպիսի օրինակներ, որոնք յայտնի են այս կամ այն Ցուցակից և սակայն խուսափել են իմ ուշադրութիւնից, քանի որ խցում փակուած մարդ եմ և ձեռքի տակ չունիմ քիչ թէ շատ կարգաւորուած մատենադարան: Յոյս կայ նաև որ թէ մեր Էջմիածնի և թէ ուրիշ մատենադարաններում (Երուսաղէմ, Թիֆլիս, Պոլիս) լինին կամ գտնուին նոր օրինակներ: Լսած եմ, որ Թիֆլիս պ. Ենֆիաճեանցների մատենադարանում կայ մի ձեռագիր Փաւստոս, սակայն այս լուրը ստուգութեան կարօտ է:

Անցնենք այժմ Փաւստոսի հնագոյն խմբի երկու ձեռագրերի: Այդ երկու, անցման երկաթագրով մեծադիր Ճառընտիրներ են, գրուած 12-րդ դարի վերջում թղթի վրայ, երկու սիւնակով: Գրութեան տեղը Արագածն է Սաղմոսավանք: Մանրամասն նկարագրել եմ այդ Ճառընտիրները «Յիշատակ դատակնքաց Գուրիա և Շմոնի վկայից» հրատարակութեանս յառաջաբանում (Վաղարշապատ 1896): Այդ Ճառընտիրներում, որ անուանում ենք A և B (Գուրիայի յառաջաբանում հայերէն տառերով են նշանակուած Ա և Բ) պահուած են Փաւստոսից, առանց հեղինակի անուան 10 հատուած (B-ում ութ հատուած), որ համապատասխանում է Փաւստոսի 11 գլուխներին: Երրորդ դպրութիւնից պահուած են Բ, Գ, Ե, Զ, ԺԱ, ԺԲ, ԺԳ գլուխները, ընդամէնը 7 գլուխ: Չորրորդ դպրութիւնից պահուած են ԾԶ և ԾԸ, ընդամէնը 2 գլուխ: Հինգերորդ դպրութիւնից պահուած են ԻԶ և ԻԸ, ընդամէնը 2 գլուխ: Համագումար 11 գլուխ: Աւելորդ չեմ համարում դնել այստեղ AB-ի հատուածների գլխակարգութիւնները A-ի ուղղագրութեամբ և մի երկու նկատողութիւններով:

1) A. էջ 270բ, B. էջ 364բ. «Վասն մեծի քահանայապետին Գրիգորի Հայոց Լուսաւորչի, եւ սրբոյն Արիստակիսի որդւոյ նորին, և նոցին շիրմացն: — Արդ ի թագաւորութեանն Տրդատայ, որդւոյ Խոսրովա . . .» = Փաւստ. Երր. Դպր. Գլ. Բ:

2) A. էջ 270բ, B. էջ 364բ. «Յաղագս Վրթանայ մեծի քահանայապետի որդւոյ Գրիգորի: — Ապա յետ այսորիկ թագաւորեաց Խոսրով

Արտակ, Թոռն Խոսրովայ, որդի քաջի և առաքինոյն Տրդատա արքայի . . .» = Փաւստ. Երր. Դպր. Գլ. Գ:

3) A. էջ 271բ, B. էջ 365բ. «Յաղագս մեծի պատերազմին Պարսից և Հայոց ընդ միմեանս. եւ անկանելոյ ի պատերազմին զաւրավարին Մաչեի. և մահուն Խոսրովա արքայի. և փոխելոյ յաշխարհէս մեծ հայրապետն Վրթանես: — Եւ յետ այսորիկ յաւել եւս լինել մարտ խստութե պատերազմի ի մէջ Պարսից և Հայոց ընդ միմեանս . . .» = Փաւստ. Երր. Դպր. Գլ. ԺԱ:

4) A. էջ 273ա, B. էջ 367ա. «Վասն որդւոցն Վրթանա, որոց անուանք առաջնոյն Գրիգորիս եւ երկրորդին Յուսիկ: — Այս Վրթանէս եւ Արիստակես որդիք մեծ քահանայապետին Գրիգորի . . .» = Փաւստ. Երր. Դպր. Գլ. Ե:

5) A. էջ 274ա, B. էջ 368ա. «Յաղագս սրբոյ հայրապետին Գրիգորիսի վախճանին: — Այլ վասն Գրիգորիս եպիսկոպոսի որդւոյ Վրթանիսի, եղբաւր Յուսկանն, որ կաթողիկոս էր Վրաց եւ Աղուանից . . .» = Փաւստ. Երր. Դպր. Գլ. Զ:

Այս գլխում ուշադրութեան արժանի է հետևեալ հատուածը. «Իբրև ուղղեաց և նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, անց նա գնաց [illegible] յիշխանութիւն [illegible] աշխարհին [illegible] մեծի. և եհաս մինչև ի ճամբար բանակին Արշակունեաց արքայի Մազքթաց, որոյ անուն Սանեսան կոչիւր. քանզի և նոցա և Հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն եր[illegible] տոհմին բնութեն (B. բնութբ). և երթեալ յանդիման լինէր թագաւորին Մազքթաց և իշխանացն և բազմութե զաւրացն»: Բոլոր տպագիրները, ուստի և այն ձեռագրերը, որոնցից կատարուել են Փաւստոսի չորս հրատարակութիւնները, նոյնպէս և ինձ յայտնի բոլոր Ձ-երը չունին ստորագծուած տողերը, մինչդեռ աւելի ունին «Հոնաց» յիշատակութիւնը այսպէս. «Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին Մազքթաց, իշխան բազմութեան զօրացն Հոնաց»:

6) A. էջ 275ա, B. էջ 368բ. «Յաղագս թագաւորելոյ Տիրանայ յետ հաւր իւրոյ, և թե որպես Յուսիկն յետ հաւր իւրոյ Վրթանա կալաւ զաթոռ հայրապետութե. և թե որպես սպանաւ ի Տիրանա յարքայէ յաղագս յանդիմանութեան: — Եւ յանցանելն յաշխարհէ թագաւորին Խոսրովու[1]) Տիրան որդի Խոսրովա առ զթագաւորութիւն և զիշխանութիւն աշխարհացն[2]) Հայոց մեծաց, և ընդ նմին սուրբն երանելի մանուկն Յուսիկ յաջորդեաց զտեղի[3]) հայրապետացն: Բայց գումարեաց ընդ նմա թագաւորն Տիրան զմեծամեծ նախար[ար]սն[4]) ըստ սովորութե աւրինին. ըզմեծ հազարապետն ի հազարապետութեննէն(.) Այստեղ տպագրերումն էլ դրւում է վերջակէտ:

1) B. խոստրովու. 2) B. «աշխարհացն» չիք. 3) B. զաթոռ. 4) B. նախարարսն.

պէտք է ջնջել թէ միջակէտը և թէ վերջակէտը։ Նոյն ինքն Վաղարշն է մեծ հազարապետը։ Իսկ ի տոհմէն ամենայն Հայոց մեծաց զՎաղարշ որ էր իշխան Ընծայ[1]. և ընդ նմայ զԶարեհ[2] զիշխանն, զնահապետն մեծի Ծոփաց. և զԱրա զՇահունի [= զՎարազ Շահունի] զիշխանն Ծոփաց աշխարհին[3]։ ԶԳնիթ իշխան Հաշտենից գաւառին ի Կասինական[4] [= Կամսարական] տոհմէն։ ԶՎրուժ իշխան Վանանդայ գաւառին. զՇահէն իշխան Ընձևացեաց տոհմին։ ԶԱտոմ իշխան Գողթան։ ԶՄանուազ իշխան Կողբացւոց։ ԶԳուրութ իշխան Ձորոց աշխարհին. եւ զՄանաս Խորխո(ռ)ունեաց[5], զիշխանն մախազութե տանն. զՏիրոց իշխան Ահառունեաց. միւս բոլոր Ձ-երը և տպագրերը ունին «եւ. զմերոյ տոհմի ազգի իշխանն Ահառունեաց»։ «ԶՏիրոց» ուղեղ ընթերցուածն ունին միայն A և B։ ԶԱրաս իշխան Գնունեաց. սոցա ամենեցուն հրամաեաց գնալ ընդ մեծի հազարապետին Վաղարշու...» = Փաւստ. Երր. Դպր. Գլ. ԺԲ։

7) A. էջ 276ա, B. էջ 370ա. «Յաղագս վարուց և գործոց մեծին Դանիէլի քահանայի առն այ. և թէ որպէս յանդիմանեաց զթագաւորն Տիրան, և կամ որպէս պատուհասեալ մեռաւ ի նմանէ։ — Բայց յայնժամ դեռևս կենդանի էր ծերունին սուրբ՝ մեծ քորեպիսկոպոսն Դանիէլ այրն սքանչելի...» = Փաւստ. Երր. Դպր. Գլ. ԺԴ։

8) A. էջ 278 bis ա, B. չունի այս գլուխը. «Յաղագս Շաղիտայի աշակերտի նորին։ — Շաղիտայս այս սա էր լեալ աշակերտ սրբոյն Դանիէլի...» = Փաւստ. Հինգ. Դպր. ԻԶ.

9) A. էջ 278 bis ա, B. չունի այս գլուխը. «Յաղագս Եպիփանու։ — Երանելի սբն Եպիփան ընկեր էր սրբոյն Շաղիտայի, աշակերտ եղեալ մեծին Դանիէլի...» = Փաւստ. Հինգ. Դպր. Գլ. ԻԷ։

10) A. էջ 279ա, B. էջ 372բ. «Վկայութիւն Զուիթա երիցու յերկրին Պարսից, որ էր յԱրտաշատ քաղաքէ։ — Ապա իբրև չոգան տարան յերկիրն Պարսից զամենայն գերութիւն Հայոց...» = Փաւստ. Չորր. Դպր. ԾԶ և ԾԷ։

Այսպիսով ուրեմն ունինք Փաւստոսից, բացի արդէն 4 հրատարակութեանց մէջ մասամբ գործածուած ձեռագրերից, չգործածուած 10 նոր ձեռագիր և AB Ճառընտիրների թանկագին հատուածները, որով և անհրաժեշտ է դառնում նոր քննադատական բնագրի հրատարակութիւնը։ Այս նոր հրատարակութիւնը, որի համար կարևոր նիւթը պատրաստել էր մեր այս ուսումնասիրութեան նպատակը, չի տայ մեզ հարկաւ մեծ նորութիւն, նոր հատուածներ, բայց կտայ կարելի եղածին չափ ճշտուած

[1]) B. Ընձառ. [2]) B. զարեհ. [3]) B. «և զՎարազ Շահունի զիշխանն Ծոփաց աշխարհին» չիք. [4]) B. «ի Կամսարականն», միւս բոլոր Ձ-երը և տպագրերը ունին Կամինական. [5]) B. խորխոռունեաց.

բնագիր, կդասաւորէ Ձ-երը իրանց միմեանցից ունեցած կախման համաձայն, մատնանիշ կանէ կարեւոր և անկարեւոր ընթերցուածները եւն եւն։ Միւս կողմից յոյս ունիմ, որ այս ուսումնասիրութիւնս առիթ պիտի լինի նոր Ձ-երի երեւան գալուն։

* * *

II.

1. Այժմ մի քանի խօսք ընդհանրապէս Փ-ի խնդրի վերաբերութեամբ։

Փաւստոս Սահառունի չէ։ Տէրոց Սահառունի։ A և B միմեանցից բոլորովին անկախ Ձ-երը, ինչպէս տեսանք, ունին «զՏիրոց իշխան Սահառունեաց» ընթերցուածը, որ բոլոր մեզ յայտնի Ձ-երում աղճատուել և դարձել է «զմերոյ տոհմի ազգի իշխանն Սահառունեաց»։ Երկաթագրի մէջ եղած շփոթութիւն են «զՏիրոց» և «զմերոյ» ընթերցուածները, տիւն և մենի, յի և ցոյի նմանութիւնից ծագած։ «ԶՏիրոց» (Համմտ. «Տիրոց Բագրատունի» Եղիշէի և Փարպեցու մէջ) ընթերցուածի «զմերոյ» կարդացուելուց յետոյ անհրաժեշտ է դարձել «տոհմի ազգի» բացատրական յաւելուածը։ Այսպիսով լուծւում է վերջնականապէս Փաւստոսի Սահառունեաց տոհմի հետ որեւէ կապ ունենալու կամ չունենալու խնդիրը։ Փաւստոսը Սահառունի չէ։ Ձեռագրական իմ այս գիւտի մասին դեռ 1893 թուին Եղիշէ առաքեանը հրատարակեց «Մշակ» լրագրում (1893, No. 19), բայց բանասէրների մեծամասնութեան աչքից վրիպեց այդ լրագրական յօդուածը և Փ-ով զբաղուողները, թէ հայ և թէ եւրոպացի, մինչև օրս էլ ստիպուած են եղել անդադար յեղեղել այդ խնդիրը։

2) **Բիւզանդական պատմութիւնք։** Տպագրերի մէջ Փ-ի երկը կոչւում է «Բուզանդարան պատմութիւնք»։ Իմ ծանօթ Ձ-երը միևնոյն ընթերցուածն ունին համաձայն տպագրերին բացի հետևեալներից. N ունի «Բիւզանդարան պատմութիւնք», R, որ մի քաղուածք է Փ-ից՝ ունի «ի Բուզանդրեան պատմութենէ», իսկ Z միակ Ձ-իրն է որ ունի խոշոր, կարմրով նկարուած տառերով՝ «Բիւզանդական պատմութիւնք»։ Բուզանդարան կամ Բիւզանդարան անմիտ բառերի փոխանակ ունիմք այժմ «Բիւզանդական Պատմութիւնք»։ Թէ ինչո՞ւ էր այդպէս կոչւում Փ-ի երկը, այս հարցին մեր գիտութեան այժմեան վիճակում հազիւ թէ հնարաւոր լինի բաւարար պատասխան տալ։ Փ-ի բնագիրը յունարէն համարողները մի նոր կռուան կունենան Փ-ի երկասիրութեան այս նոր անուանակոչութեան մէջ։ Յամենայն դէպս այս խնդիրը կարօտ է առանձին ուսումնասիրութեան։

3) **Փաւստեայ Բիւզանդեայ։** Յայտնի է տպագրերի «փախստեայք Բիւզանդեայ» ընթերցուածը երրորդ դպրութեան վերջում, յիշատակարանի մէջ։ Իմ ձեռքի տակ եղած բոլոր Ձ-երն էլ ունին նոյնպէս «փախս-

տեայ.ք. Բիւզանդեայ» կամ «Բուզանդեայ»: Յայտնի է նաև, որ բանասէրների մեծագոյն մասը այս «փախստեայք» բառը կարդում են մտքի համաձայն «Փաւստեայ»: Հիւն և խէ (ւ և խ) տառերը կարող են շփոթուիլ միայն երկաթագրի մէջ = Ւ = Խ: Բանասէրների առաջարկած սրբագրութեան մի նոր ապացոյց գտնում եմ ես Եւսեբիոսի Քրոնիկոնի Հայ հնագոյն Զ-րում, որի մէջ նոյնպէս Ւ և Խ գրերի շփոթութիւն կայ, ծագած անշուշտ երկաթագիր բնագրից: Այստեղ «ի փախստէն» դարձել է «Ի փաւստէն»: Տես Թ. Մոմսէնի «Die Armen. Handschriften der Chronik des Eusebius» յօդուածի մէջ E Զ-րի իմ բաղդատութիւնը, Hermes թերթից արտատպութիւն, Berlin 1895, էջ 334, տող ներքևից 11:

4. Մի նոր կրկնագիր: Էջմիածնի Գրադարանում տարիներ առաջ յաջողուեց ինձ նկատել, որ մի ձեռագրում (No. 2239) մագաղաթեայ առաջին ամբողջ մասը, ընդամենը 104 թերթ, կրկնագիր է: Վերայի գրութիւնը Վանականի «Յաղագս տարեմտի» երկն է և ուրիշ գրութիւններ հին բոլոր գրով: Զ-րի աւելի նորագոյն մասը, թղթի վրայ, նոյնպէս հին բոլոր գրով Հայոց ՉՂԸ (= 1346) թուին է (էջ 162 բ): Տակի բնագիրը փոքր մեսրոպեան երկաթագրով է և կարող է շատ հին լինել: Ինչպէս յայտնի է մեզ ծանօթ ամենահին գրութեան տեսակն են այդ տառերը: Միակ բառը, որ պարզ կարդացւում է այս կրկնագրում (էջ 42 ա) պատառուած թերթի ծայրին «փախստե» ճնացորդն է: Աչ մի միջոց դեռ չէ փորձուել այս կրկնագիրը վերծանելու համար: Անշուշտ մի դուրեկան ցնորք է, որ այս կրկնագիրը Փաւստոս լինէր, բայց ոչ մի ապահովութիւն չունիմ դեռ:

5. Ստորոտ ամենայն պատմութեանց: Փաւստոսի վերջին դպրութեան ցանկին կամ «կանոններին» անմիջապէս կից Զ-երը դնում են «Ստորոտ ամենայն պատմութեանց» երևի կամենալով ասել «վերջ ամենայն պատմութեանց», կապելով այս նախադասութիւնը «Յաղագս Գնդայ սրբոյ և առաքինոյ . . .» Ժ.Օ.-երորդ գլխի վերտառութեան հետ: Միայն K-ն ունի տպագրի նման կից հետևեալ «Յաղագս իմ տեղեկութեան» ասացուածի հետ: Իսկ Z-ն բոլորովին չունի այս «Ստորոտ ամենայն պատմութեանց» նախադասութիւնը:

6. Յաղագս իմ[ո] տեղեկացութեան: Փ-ի անձնաւորութեան համար ամենից աւելի հետաքրքրականն է «Յաղագս իմ տեղեկութեան, որք միանգամ զմատեանս ընթեռնուք» ասացուածը: Իմ ձեռքս եղած բոլոր Զ-երը ինչպէս նաև I տպագիրը «ընթեռնուք»-ից յետոյ դնում են վերջակէտ: Այս վերջակէտը միւս բոլոր տպագրերը բոլորովին անհիմն կերպով դուրս են ձգել: «Տեղեկութե» բառի փոխանակ, որ միշտ պատուով է գրւում, K-ն ունի «տեղակութե», իսկ M-ն ունի «տեղեկացութե», ուստի և իմ կարծիքով, այս աղճատուած բառի նախկին լրիւ ձևը վերականգնելու համար պիտի կարդանք «տեղակացութե» = «Յաղագս իմ[ո]

տեղակացութեան, որք միանգամ զմատեանս ընթեռնոյք»։ Տեղակացութիւն ոսկեդարեան բառ է և շատ լաւ կարող է նշանակել Թելակալութիւն։ Ինչպէս յայտնի է Փաւստոս եպիսկոպոսի թելակալութեան կամ «տեղակացութեան» մասին խօսւում է Զ-երորդ դպրութեան Ե-երորդ գլխում[1]։ Այսպիսով աւելի ևս շեշտւում է այն կարծիքը, որ հեղինակ Փաւստոսը նոյն անձն է «թելակալ Փաւստոս» եպիսկոպոսի հետ։ «Տեղակացութեան» ամբողջ նախադասութիւնը ցանկի մէջ Ե-երորդ գլխի վերտառութեան մի մասն է, կամ այդ վերտառութեան վերաբերեալ մի ծանօթութիւն, որ իւր աստղանիշը կամ տեղը կորցրել է և ընկել ցանկի վերջը կամ ստորին լուսանցքը, ինչպէս ունի Z ձեռագիրը։ Այդպիսի ծանօթութիւններ, մանաւորապէս իրենց աստղանիշը կամ տեղը կորցրած ծանօթութիւններ, այն էլ մի քանի հատ, ունինք Խորենացու և Ասողիկի մէջ[2])։ Մեզ հետաքրքրող նախադասութեան վերջին մասը — «որք միանգամ զմատեանս ընթեռնոյք» — համեմատել առաջին «խոստաբանութեան» ասութեան հետ — «որք միանգամ կամին սրտի մտօք հասու լինել սմին զոր ասելոցս եմ»։

7. Տասն Փ.Զ. համարական նշանաւ։ Ա երկ։ Ցանկի կամ կանոնների վերջում այս ասացուածը մի միտք կարող է ունենալ, այն է՝ որ վեցերորդ դպրութիւնը «համարական թուով» 16 տուն կամ գլուխ ունի։ Եւ իսկապէս էլ ունի 16 գլուխ․ մեծաւ մասամբ մի մի փոքրիկ պարբերութիւնից կազմուած։ Զ տառի անկումը [Փ = Փ.Զ.], ինչպէս և E Ձ-րի մէջ «ն» տառի անկումը [E՝ տուք = տունք] սովորական երևոյթ է։ Խորենացու Ձ-երում ունինք «տասն» փոխանակ «ութ և տասն»-ի, «յիսուն» = «յիսուն և վեց» [Ծ՝ = Ծ՝Զ.]., ևն ևն։ Այսպիսի պակասաւոր թուերի օրինակներ կարող եմ բերել նոյն իսկ ամենալաւ Ձ-երից տասնեակներով։ Աւելի հետաքրքրականն, որ Ա. խոստաբանութեան մէջ Փաւստոսն ասում է․ «մի ըստ միոջէ կարգաւք նշանաւ և համարաւ կանոնեալ դրոշմեալ նկարեցի իւրաքանչիւր գլխով»։ Եւ չորս խոստմունս չորեցունց[3]) դպրու-

---

[1]) Թելակալ բառի նշանակութեան մասին հմմտ. «Հերովդէս թելակալ պահապան էր փեղոյն» Եփր. Ծն. Հայկ. Բառ.։

[2]) Հմմտ. իմ «Խորեն. Պատմ. Ուսումն.» Վաղարշապատ 1896, էջ 79, ծանօթ.։

[3]) Բոլորն ունին «չորից չորեցունց» աւելորդ կրկնութիւնը, ինչպէս և նոյն խոստաբանութեան մէջ ունին «և առ նմին դպրութիւնք երեք [= գ]» որ պիտի ուղղել «և առ նմին դպրութիւնք դ [= չորս]»։ Ամիտում, ուր Մինաս գրչի դպրանոցում, թերավարժ աշակերտների ձեռքով արտագրուած նոտրագիր, սղումներով և պատիւներով լի Փաւստոսները հարկաւ հարիւրաւոր այսպիսի վրիպակներ պիտի ունենան, որոնք մեծ մասամբ կանհետանան, երբ Ձ-րերի բաղդատութեամբ կունենանք քննադատական բնագիր։

թեանցս յիւրաքանչիւր[1]) եղանակս պատուաստեցի մինչև ի կատարած սորին»։ Ուրեմն պարզ և հասկանալի է, թէ ինչ է կամենում ասել Փաւստոսը «համար և թիւ» կամ «համարական թիւ» ասելով, մինչդեռ Փաւստոսի մեկնիչները և թարգմանիչները այս համարական թուով տները կամենում են անպատճառ կապել Փաւստոսի անձի մասին խոստացուած տեղեկութեան հետ և սպասում են գտնել Պատմութեան վերջում Փ. տուն տեղեկութիւն, այն էլ ոտանաւորով (!) Փաւստոսի անձի մասին։ Ուրեմն «համարական թուերը» ցոյց են տալիս միմիայն իւրաքանչիւր Դպրութեան Գլխում (= սկզբում) դրուած տների (կամ այժմեան մեր սովորական գործածութեամբ՝ գլուխների) թիւը։ Եւ յիրաւի պահուած է այժմեան Փաւստոսում բացի վեցերորդից նաև երրորդ դպրութեան «համարական թիւը» — «կանոնք պատմութեանց մատենից մինչև ցքսան և մի (տես երրորդ դպրութեան սկիզբը)[2])։ Այսպիսով ուրեմն իւր իսկ բնական և պատշաճ տեղումն է վեցերորդ դպրութեան սկզբին, ցանկի վերջում, «Տունք Ժ.Զ. համարական թուաւք։ Վերջ» ասացուածը և այս նախադասութիւնը ոչ մի առնչութիւն չունի հեղինակ Փաւստոսի անձի հետ։

8. Նաւաշարկութեան վճարումն. Ճառացուածք բանից ի ծայրէ. Վեցերորդ դպրութեան։ Այս բառերն էլ բաւական աղճատուած են ձեռագրերում, և տարբեր ընթերցուածներով։ Կապելով նախընթացի հետ ձեռագրերը գրում են «վերջ առջինուե վճարումն» են։ «Ին» կարդալով «րկ» [= Նոտրագրի մէջ] մենք լաւագոյն ենք համարում ընթեռնուլ՝ «Նաւաշարկութեան վճարումն. Ճառացուածք [կամ՝ «Ճառացորդք», ինչպէս որ ունի Z] բանից ի ծայրէ։ Վեցերորդ դպրութիւն»[3])։

9. Փաւստոս Բիւզանդ եպիսկոպոս։ Փոքր ինչ երկար կանգ առայ այս մանրամասնութեանց վրայ, ուղիղ գնահատելու համար այս տեղեկութիւնները, որ տալիս է Փաւստոսն իւր մասին։ Իրողութիւնը մնում է այն, որ վեցերորդ դպրութեան ցանկում խոստացւում է հեղինակի տեղակացութեան մասին տեղեկութիւն և նոյն դպրութեան Ժ.Զ. գլուխներում խօսւում է Թելակալ Փաւստոս եպիսկոպոսի և նրա եղբօր Առոստոմի մասին։ Նրանք ծագմամբ յոյներ էին՝ «Եւ էին լեալ սորա ազգաւ

---

[1]) Վերջին տպագրերը ունին այստեղ նորից մի աւելորդ բառ «յիւրաքանչիւր իւր», բայց բոլոր ձեռագրերը և I տպագիրն ունին ուղիղը — «յիւրաքանչիւր»։

[2]) M «մինչև .ի. և մէկն» — E «մինչև ի .իա.» — Z «մինչև ի .իա.» — K «մինչև ի իա» — I «մինչև ի .իա. գլուխս» են։ Տես և Նորագոյն տպագրերը։

[3]) «Վեցերորդ դպրութի» բառերի փոխանակ K-ն ունի «վարդրց: գրգռութե ա» մթին ասացուածը։ K-ն, ինչպէս վերևում ասել ենք, չափազանց խեղճ և անգրագէտ ձեռագիր է։

Հռոմ», բայց արդէն գլխովին հայացած։ Ռոստոմ — Ռոստոմ անունն էլ հայ — պարսկական է։ Չէ ասում «էին ազգաւ Հռոմ», այլ «լեալ էին ազգաւ Հռոմ»։ Ազգատոհմ Հռոմ ծագումից լինելն անշուշտ արգելք չէր Փաւստոսին բոլորովին հայացած լինել իւր զգացմունքներով, իւր աշխարհայեցութեամբ, իւր ճաշակով և իւր անթարգմանելի կորովի հայաբանութեամբ։ Այս նոյն Փաւստոսն է ամենայն հաւանականութեամբ Ներսէս Մեծի Թաղմանը ներկայ գտնուող Փաւստոս եպիսկոպոսը (Բուզ. Ե. 24)։ Ներսիսի մահը Պապ Թագաւորի մահից (+ 374) քիչ առաջ է, երևի նոյն այդ 374 կամ 373-ին[1])։ Ուրեմն Փաւստոս ականատես է Պապի և Ներսիսի վերջին օրերին։

10. **Փաւստոս Սատաղցի**։ Յիշւում է մի ուրիշ Փաւստոս եպիսկոպոս Բարսեղ Մեծի Թղթերում։ Այս Փաւստոսը Պապի միջնորդութեամբ Տիանայի Անթիմոս եպիսկոպոսից ձեռնադրւում է եպիսկոպոս 373-ին և ձգտում է եղել լինել Սատաղ[2]) քաղաքի եպիսկոպոս, բայց յայտնի չէ թէ նա արդեօք հասել է իւր փափագին։ Սկսած Չամչեանից այս երկու Փաւստոսները միևնոյն անձն են համարուել[3]) և այդ անհնարին բան չէ. գոնէ ժամանակագրական ոչ մի անպատեհութիւն չկայ։

11. **Ծերունի Փաւստոս եպիսկոպոս**։ Բայց կայ մի երրորդ Փաւստոս եպիսկոպոս, Արշակ Բ. Թագաւորի ժամանակ Ներսէս Մեծին ձեռնադրող «ծերունի Փաւստոսը» (Դ, 3)։ Այս «ծերունի» Փաւստոսին էլ, բոլորովին անտեղի կերպով, բանասէրներից շատերը նոյնացրել են վերոյիշեալ Փաւստոսների հետ։ Անուանակցութիւնը բաւական հիմք չէ անձեր նոյնացնելու համար։ «Ծերունի» Փաւստոսը, Արշակ Բ. Թագաւորի ժամանակ արդէն եպիսկոպոս, չէ կարող Պապի ժամանակ ձեռնադրուած [373-ին] և Բարսղի Թղթերում յիշուած Փաւստոսը լինել։ Այդ «ծերունին» չէ կարող նաև նոյն անձը լինել Ներսէս Մեծին Թաղող Թելակալ Փաւստոս եպիսկոպոսի հետ, որ աղքատանոցների վերատեսչութիւնը շարունակում էր, իւր իսկ ասելով, մինչև «յամս Խոսրովու և Արշակայ երկուց Թագաւորացն բաժանաւորացն, **մինչդեռ ևս կայծն նորա** [= Խոսրով և Արշակ] **կենդանի էր**» (Զ, 5)։ Ուրեմն Թելակալ Փաւստոսը գիտէ Խոսրովի և Վերջին Արշակի մահը։ Խոսրովը դեռ կենդանի էր Վռամշապուհի ժամանակ և Վռամշապուհից յետոյ էլ ութ ամիս (Վաղ. Փարպ.)

---

1) Մի բարձրաստիճան հայ հոգևորական կաթողիկոսական ցանկերի վրայ արած իւր գիտական աշխատութեան մէջ (անանուն), որոշ հաշիւների վրայ հիմնուած դնում է Ներսիսի մահը 373-ին յուլիս 25 (Տե՛ս «Վռամայ» և Օրաց. Ազգ. Հիւանդ. Կ. Պոլիս, 1901)։

2) Սատաղ քաղաքն յիշւում է Փաւստոսի պատմութեան մէջ երկու անգամ. «փոքրիկ քաղաքիկն Սատաղու». Գ, 7, 21։

3) Չամչ. Պատմ. Հայոց I, 11, 447–8, 745–748. Patrol. I. P. Migne, Series Graeca, XXXII. Այս բոլորը միասին «Փաւստոս Բուզանդ» Ե[ղիշէ] Ս[տաթեանի], Վիեննա 1890, էջ 7–12։

կամ մի տարի (Խորեն. Գ., 55). կրկին անգամ թագաւորեց և մեռաւ 416 թուից ոչ առաջ[1])։ Ժամանակով Վռամշապուհին ամենից մօտ և ականատես պատմիչն է Կորիւն, որ Մաշտոցի Վարքում գրերի գիւտը (404 թուին) դնում է Վռամշապուհի հինգերորդ տարում (Վենետ. 1833, էջ 9)։ Նոյդ թուականից երկու տարի յետոյ, Վռամշապուհի եօթներորդ տարում[2]) [406 թուին] Մաշտոցը աշակերտներով գնում է Ամիդ և Եդեսիա հայ գրերը կատարելագործելու։ Վռամշապուհի տասն և վեցերորդ տարում, այն է 415 թուին[3]), Մաշտոցը իւրայիններով, կատարելագործուած հայ գրերով և Ս. Գրքի թարգմանութեամբ վերադառնում է Վաղարշապատ։ Ուրեմն 415-ին Վռամշապուհը դեռ կենդանի էր, ուրեմն և Խոսրովի 8-ամսեայ թագաւորութիւնը կարող չենք դնել՝ ամենականուխը՝ 416 թուից առաջ։ Խոսրովի մահը գիտցող Փաւստոսը միայն այս թուականից յետոյ կարող էր գրել իւր Պատմութիւնը։ Ներսէս Մեծի թաղման ներկայ եղող Փաւստոս եպիսկոպոսը՝ 373—374-ին, եթէ լինէր երիտասարդ եպիսկոպոս 25—30 տարեկան հասակում — իսկ այդ դարում Հայաստանում ոչ թէ երիտասարդ, այլ պատանի եպիսկոպոսներ ունինք, ունինք այդպիսինները և յետոյ, օրինակ Վահանիկ կաթողիկոսը 10-րդ դարում — հազիւ 50—55 տարեկան կլինէր հինգերորդ դարի սկզբում և կարող էր դեռ մի քանի տասնեակ տարի էլ ապրել հինգերորդ դարում։ Պապի մահը 374-ին է։ Նոյդ ժամանակ Պապը չափահաս և կատարելահասակ մարդ էր և ոչ անչափահաս պատանի, ուրեմն առ նուազն 25—30 տարեկան։ Պապի ծնունդը և Արշակի ամուսնութիւնը Փառանձեմի հետ՝ այս հաշուով՝ պէտք է 350 թուից առաջ դնել։ Իսկ Փառանձեմի առաջին մարդու — Գնելի — սպանման ժամանակ Ներսէս Մեծը արդէն կաթողիկոս էր. ուստի և նրան ձեռնադրող Ոերունի Փաւստոս եպիսկոպոսը ոչ մի դէպքում չէ կարող դեռ կենդանի համարուել առ նուազն 65—70 տարի յետոյ 416—420 թուերին։ Ուստի և ակներև է, որ բոլորովին տարբեր անձնաւորութիւններ են Ոերունի Փաւստոսը և Խոսրովի մահը գիտցող թեղակալ Փաւստոս եպիսկոպոսը։

12. Գրութեան ժամանակը 416—425 թ.։ Փաւստոսի Պատմութեան գրութեան ժամանակը որոշելու համար պէտք է կարելի եղածին չափ ճշտել Վռամշապուհի, Խոսրովի, Շապուհ Սասանեանի և վերջին Արշակունի թագաւոր Արտաշէս-Արտաշիրի տարիները։ Նոյս նպատակի համար

[1]) Հմմտլ. Գարագաշ. Քննակ. Պատմ. Հայոց, հատ. Գ., էջ 213, որ Խոսրովի մահը դնում է 415-ին։

[2]) Տպագիրն ունի վրիպակ ընթերցուածով «հինգերորդ», որ մտքի համաձայն պէտք է ուղղել «եօթներորդ», և = է ձեռագրական շփոթութիւն։

[3]) Կորիւն, էջ 11, ունի վրիպակով «ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց մեծաց», որ մի պակասաւոր թիւ է և պէտք է ուղղել «ի տասն և վեցերորդ = ի վեշտասաներորդ = ի ԺԶ»։

բոլորովին անյարմար է Խորենացին, իբրև նորագոյն գրող[1]), և նախապատուութիւնը պէտք է տալ Ղազար Փարպեցուն և Կորիւնին: Կորիւնը յիշում է Վռամշապուհի 16-րդ տարին: Խորենացին տալիս է Վռամշապուհին ընդամէնը 21 տարի թագաւորութիւն: Ղազարն ասում է Վռամշապուհի համար՝ «եկաց յետ այսորիկ [= գրի գիւտից յետոյ] թագաւորն Վռամշապուհ ամս հինգ և տասն» (Տպ. 1891, էջ 54): Այս տեղեկութիւնը, որով Վռամշապուհի թագաւորութեան տարիները հասնում են 26-ի [5 տարի մինչև գրի գիւտը + 21 = 26] բոլորովին նոր կեղծիք է՝ կատարուած Խորենացու ազդեցութեամբ: Ղազարի մեր ձեռքն հասած միակ ձեռագիրը B[2]) [Նաղէշի ձեռագիր, 17-երորդ դարի], էջ 10 ա, նախապէս ունեցել է «եկաց յետ այսորիկ թագաւորն Վռամշապուհ ամս բազումս»: B. ձեռագրում ջնջուած է վերջին բառը և տեղը գրուած «քսան և մի», բայց տակի գրութիւնը պարզ կարդացւում է: Այնպիսի կեղծման է ենթարկուել Ղազարում [B էջ 14 բ] նաև վերջին Արտաշէսի տարեթիւը. «Յայնմհետէ բարձաւ թագաւորութիւն յազգէն Արշակունեաց իսկ, յերրորդ ամի Արտաշիսի»: Երկու գծուած բառերը ջնջուած են ձեռագրում, թէև այժմ ընթեռնլի, և գրուած է Խորենացու թուականը «ի զ. երորդ [= ի վեցերորդ] ամի Արտաշիսի» (Տես տպ. 1891, էջ 76): Շապուհ Սասանեանը Խորենացու ասելով թագաւորեց Հայաստանում 4 տարի[3]) Խոսրովից անմիջապէս յետոյ: Յամենայն դէպս այս Շապուհի մահը Վռամ Ե-երորդ արքայից արքայի առաջին տարին տեղի ունեցաւ [420 - 421 թուին]: Շապուհի Հայաստանից հեռանալուց յետոյ տեղի է ունենում ապստամբութիւն հայ նախարարների Ներսէս Ճիճրակեցու առաջնորդութեամբ, վերջապէս թագաւորում է Վերջին Արտաշէսը ընդամէնը 3 տարի: Տարեթուերի այս նոր սրբագրութիւններով Արշակունեաց մինչև այժմ ընդունուած բարձման թուականը — 428 — պէտք է պակասեցնել առ նուազն 3 տարով և դնել ամենաուշը 425 թուին:

Փաւստոսը չգիտէ՝ ամենայն հաւանականութեամբ՝ Հայոց թագաւորութեան խաղաղ կործանումը, երբ իւր Պատմութեան վերջում ասում է. «Նուաղեաց բաժանեցաւ ցրուեցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամանակն և յապայ» (Զ, 1): Ուրեմն իւր գրուածքը 425 թուից առաջ է: Բայց գիտէ, ինչպէս տեսանք, վերջին

[1]) Ինչպէս արդէն ցոյց եմ տուել 676 թուից յետոյ է Խորենացու Պատմութիւնը. Արարատ 1897, էջ 422—4: Նորագոյն հետազօտողները՝ թէ հայ և թէ եւրոպացի՝ ոչ մի հաստատուն փաստ չբերին իմ այս կարծիքը խախտելու համար:

[2]) Տես իմ յօդուածը «Ղազար Փարպեցու ձեռագրերը». Արարատ 1901, նոյեմբ. դեկտ., ուր ցոյց եմ տուել թէ ինչպէս է ընդմիջարկուել Ղազարում և հայ գրերի գիւտի պատմութիւնը տպագիր Խորենացուց:

[3]) Հայաստանում թագաւորող այս Շապուհի մասին տե՛ս և Ղազար 1891, էջ 55—57:

Խոսրովի մահը — ամենականուխը 416-ին։ Ներսէսի բերանով մարգարէանում է Արշակունեաց ցեղից թագաւորութեան բարձումը (Դ., 15), ուրեմն գիտէ Շապուհ Սասանեանի Հայաստանում թագաւորելը, որով իրապէս վերջանում էր Արշակունեաց ցեղից թագաւորութիւնը և առաջին անգամ մի սասանեան բարձրանում էր Հայոց գահը։ Գիտէ Ներսէսի մահը (Ե., 15), ուրեմն գրել է Սահակի կաթողիկոսութեան օրով։ Բայց գիտէ իբրև մարգարէութիւն Լուսաւորչի ցեղից կաթողիկոսութեան բարձումը։ Բայց այդ գիտէին ամենքը դեռ ևս չորրորդ դարի վերջերում, երբ Սահակը հայրապետական գահը բարձրացաւ և տղայ չունէր։ Ամենքին յայտնի էր, որ Սահակով վերջանալու է Լուսաւորչի ցեղը[1])։ Այս բանն իմանալու համար հարկ չկար, որ Փաւստոսը տեսած լինէր Սահակի անկումը կաթողիկոսութիւնից Վռամի օրով, կամ Սահակի մահը։ Այս բոլորից եզրակացնում եմ, որ Փաւստոսի Պատմութիւնը գրուել է Շապուհ սասանեան Հայոց թագաւորի կամ Ներսէս Ճիճակացու պատրիարքութեան օրերը, հինգերորդ դարի առաջին քառորդի վերջին տարիները։

13. Գրուած է հայերէն և անվաւերական չէ։ Ինքն ըստ ինքեան հետևում է այս ասածներից, որ Փաւստոսը գրելով Հայերի համար Հայ գրի գիւտից յետոյ, երբ արդէն Հայ լեզուով կար Ս. Գիրք, եկեղեցական ժամակարգութիւն, Պատարագամատոյց, բաւական հարուստ թարգմանական գրականութիւն, պիտի գրած լինէր Հայ լեզուով, որին իշխում է տիրապէս, և պիտի ունենար այդ նորածիլ մատենագրութիւնից փոխառութիւններ, ինչպէս որ և ունի Բարսեղի Պատարագամատոյցից, Ս. Գրքից, աղօթքներից են։ Բանասէրներից մատնանիշ արուած և հաւաքուած[2]) բազմաթիւ փաստերը Փաւստոսի վաւերականութեան դէմ իմ այս տեսութեամբ նոր լուսաբանութիւն են ստանում և աւելի ևս հաստատում Փաւստոսի վաւերականութիւը։ Կորիւնն արդէն մօտաւորապէս 440—450 թուերի ժամանակամիջոցում [= Մաշտոցի մահից յետոյ, Վարդանանց պատերազմից առաջ] ամբողջ հատուածներ է ընդօրինակում Փաւստոսից։ Ղազարը հինգերորդ դարի վերջում ծանօթ է մեր այժմեան Փաւստոսին, այն աննշան և փոքրիկ տարբերութեամբ, որ Փաւստոսի չորրորդ դպրութիւնը, որ ըստ կարգին երկրորդ մասն է Փաւստոսի Հայոց Պատմութեան, ոչ բառացի, այլ ըստ իմաստին անուանում է «երկրորդ պատմութիւն»։ Ուրեմն այս Հ. Պատմութեան Գ.-Զ. դպրութիւնները ըստ բովանդակու-

[1]) Թերևս շարունակուեց այդ ցեղը մի ապօրինի զաւակով, որ ծնուել էր Մաշտոցի համագիւղացի մի հարճից. «Բայց Պապայ [= որդի Յուսկան, հօրեղբայր Ներսէս Մեծի] ի բուն ի կնոջէն ոչ մնաց [որդի], այլ էր նորա հարճ մի ի գաւառէն Տարօնոյ ի Հացեաց գեղջէ կարճաղատացն, և մնաց որ ի հարճէ անտի ի Հացեկացւոյն, որում անուն իւր որդւոյ հարճին Վրիկ կոչէր» (Փաւստ. Դ., 19)։

[2]) Տե՛ս մանաւորապէս «Ուսումնասիրութիւն Փաւստոս Բիւզանդի Պատմութեան» Ստ. Մալխասեանի, Վիեննա, 1896։

թեան կարող էին կոչուիլ Ղազարից, ինչպէս և ամէն մէկից, Ս.-Պ. պատմութիւնք: Յամենայն դէպս Ղազարից երբեք չէ կարելի հետևցնել, որ իբր թէ հինգերորդ դարից յետոյ Փաւստոսը ենթարկուել է նոր խմբագրութեան և թէ այժմեան գլխակարգութիւնները, ցանկերը [= «կանոնները»], «խոստաբանութիւնները» այդ նոր խմբագրութեան արդիւնք են[1]: Բարեբախտաբար այսպիսի ենթադրութեան դէմ կարելի է վճռական ապացոյց բերել նոյն իսկ Ղազարից, որ օգտուել է Փաւստոսի մէջը առաջին խոստովանողներից, երբ քաղելով ասում է Փաւստոսի բովանդակութեան մասին. «զիրս բազմափոփոխս աշխարհիս Հայոց, զբարեաց և զչարեաց, զվարս և զգործս կարանց սրբոց և պղծոց, զժամանակի պատերազմաց և զխաղաղութեան և այլն» (էջ 2) = Փաւստ. խոստաբանութիւն Նախագիտելի . . . անցելոց իրաց գործք և վարք . . . սրբոց արանց . . . և խաղաղութեան և պատերազմի և շինութեան և աւերածոյ, և արդարութեան և անօրէնութեան, և աստուածպաշտութեան և ամբարշտութեան ժամանակագիր արարեալ . .»:

Փաւստոսի վաւերականութիւնը հերքողները գլխաւորապէս հիմնւում են Պարսիկ և մասնաւորապէս Յոյն թագաւորների անունների հակաժամանակ և անտեղի գործածութեան վրայ: Փաւստոսը ժամանակագրութիւն չունի՛ ժամանակագրութիւն, որ պիտի առաջնորդուէր յոյն կամ պարսիկ թագաւորների տարեթուերով: Բայց ի նկատի է առնելու, որ Փաւստոսն իւր ամբողջ պատմութեան մէջ միայն երկու պարսիկ թագաւորի անուն գիտէ՝ Ներսէհ և Շապուհ: Ներսէհին էլ յիշում է միայն Սատաղ քաղաքի (Գ., 21) և Միւնեաց տոհմի (Գ., 58) աւանդութիւններից առած: Գիտէ միայն Կոստանդիանոսին, որին յիշում է պատահաբար Նիկիական ժողովի (Գ., 10) և Տրդատի հետ դաշնադրութեան (Գ., 2) առթիւ, և Վաղէսին: Այսպիսի ագիտութիւնը յունական թագաւորների մի կողմից ապացոյց է, որ Փաւստոսը ոչ յոյն է և ոչ բիւզանդացի, և միւս կողմից՝ որ Փաւստոսին չէ կարելի դատել յոյն կամ պարսիկ թագաւորների ժամանակագրութեամբ: Ժողովրդական և նախարարական ցեղերի աւանդութիւնները, իւր անձնական յիշողութիւնները, կրօնական հրաշապատում գրքեր — ահա Փաւստոսի աղբիւրները: Հիմնական սխալ է նաև հայ թագաւորների թուերով — առնուած Խորենացուց սուտ հանել Փաւստոսին: Մենք չգիտենք ոչ Տրդատի մահուան թուականը, ոչ նրա յաջորդների տարեթուերը, այլ միայն Պապ թագաւորի մահուան թուականը [† 374], երբ Պապը ոչ թէ պատանի, այլ կատարեալ չափահաս մարդ էր, ուրեմն և ծնուած մօտաւորապէս 30 տարի առաջ, իսկ նրա հայր Արշակը, նոյն իսկ Փաւստոսի պատմութեամբ՝ արդէն թագաւոր էր Պարսկաստանում քրիստոնէից դէմ յարուցուած ընդհանուր հալածանքից [= Շմաւոն եպիսկոպոս

[1] Հմմտ. Աս. Մալխասեանի «Մի նկատողութիւն ևն», ZAPh., 1901, էջ 64–6:

են, Հայ թարգմանութեամբ Աբրահամ Խոստովանողի] առաջ, ուրեմն և չորրորդ դարի քառասնական թուերի սկզբին: Չէ՞ հակապատմական տալ Արշակին 34 կամ աւելի տարիներ թագաւորել, բայց մեր այս յօդուածի ծրագրից դուրս լինելով այսպիսի մանրամասնութեանց խնդիրը, բաւականանանք մեր այս ընդհանուր ցուցումներով:

Փաւստոսի «Բիւզանդ» կամ «Բիւզանդացի» մակդիրը, որին ծանօթ է Ղազար Փարպեցին, թւում է մեզ լոկ մակաբերութեամբ հետեւցրած գրքի «Բիւզանդական Պատմութիւնք» անունից: Փաւստոսն այնչափ տգէտ է բիւզանդական թագաւորների ժամանակագրութեանը և գործերին, որ ոչ մի դէպքում չէ կարող Բիւզանդացի կամ Բիւզանդիայում սովորած լինել:

Ամփոփենք ուրեմն մեր այս նոր տեսութիւնը, ամբողջովին հիմնուած ձեռագրական ուսումնասիրութեանց և Փաւստոսի բնագրի վրայ:

Փաւստոսը Սահառունի չէ: Գրել է «Բիւզանդական Պատմութիւնք», որի Գ-Զ դպրութիւնները հասել են մեր ձեռքը: Սկզբնագրին համապատասխանում էին իրենց բովանդակութեամբ երեւի Ա-Բ դպրութիւնները, որոնց մասին որեւէ դատողութիւն տալու համար դեռ բաւարար նիւթ չունինք: Փաւստոսն իւր իսկ վկայութեամբ Ներսէս Մեծի թեմակալ եպիսկոպոսներից մէկն է, ներկայ է եղել Ներսէսի թաղմանը, թերեւս նոյն անձն է Բարսեղի նամակներում յիշուած Փաւստոսի հետ, ուրեմն այս դէպքում՝ եպիսկոպոս ձեռնադրուած 373-ին: Գրել է պատմութիւնը Ասպուրակէս կաթողիկոսի և Խոսրով թագաւորի մահից յետոյ, 416—425 թուերին: Բոլորովին տարբեր անձն է Ներսէսին ձեռնադրող Ծերունի Փաւստոս եպիսկոպոսը: Փաւստոսն օգտուել է Հայ Պատարագամատոյցից, իսկ իրանից օգտուել են Կորիւն և ուրիշներ: Գրել է հայերէն, շատ լաւ ծանօթ է Հայաստանի աշխարհագրութեանը և տեղական աւանդութիւններին: Ծագումով միայն Հոռոմ է, իսկ մտածողութեամբ, զգացումներով և լեզուով՝ զուտ Հայ: Փաւստոսի երկը մեր ձեռքն է հասել, հաշուի չառնելով Ա-Բ դպրութեանց խնդիրը, նախկին ծաւալով, անպակաս և առանց որ և է նոր խմբագրութեան [1]:

---

1) Հարկաւ չենք հաշւում նաև այն փոքրիկ պակասները, որ կան Գ, 6 [որ արդէն լրացրին A և B] Գ, 16 և Զ, 16 ուր Գինդ միայնակեցի պատմութիւնը մնում է թերի: Այստեղ ձեռագրերը վերջանում են այսպէս. EZ «շիննեալ զիւր:», RI «շիննեալ զիւր եղբ:», K «շիննեալ զիւր եսր: — Բուզանդ պատմագր[ին] օրինակն մինչ աստ էր անմեղադիր լերուք:», M «շիննեալ զիւր եղբայր . . . [դատարկ տեղ է թողնում տողեր և ամբողջ սիւնակներ, զգալով որ պակաս կայ, նաև հաւանօրէն յիշատակարան գրելու համար]: P (= Պատկան.) «շիննեալ զիւր եղբայրանոցս:», W [= Վենետ.] «շիննեալ զիւր եղբարց»:

Էջմիածին.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳԻՐ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԸ

Ստ. Կանայեանի.

I.

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ և ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ

Թ. 1655/1613 [1]). — ՉԽԲ = 1293.

Թուղթ *այժմ* 377 + *թղ.* 342 *երկրորդ*։ — **Մեծութիւն** 33 × 21—25,5 *սմ.*։ — **Գրութիւն** *երկսիւն, իւրաքանչիւրը* 23,5 × 7,5 *սմ.*։ — **Տող** 25—26, *տեղ տեղ գծուած ճնշմամբ*։ — **Թերք** 33. Ա—Ժ. *կարմիր* Ա—Ժ, *ապա թերթաթուեր նոր ձեռքով գրած* ԺԱ—ԻԳ։ Ա *ունի* 8 *թուղթ*, Բ *և* Գ *տասնական*, Դ՝ 14, Ե՝ 12, Զ—Ժ՝ *տասներկական. կարմիր թերթաթուերով* Ա *ունի* 11, Բ—Զ՝ *տասներկական*, Է՝ 11, Ը, Թ *և* Ժ՝ *տասներկական*։ ԺԱ՝ 4, ԺԲ՝ 11, ԺԳ՝ 14, ԺԴ(*ա ա*)—ԻԲ(*դ դ*) *տասներկու տասներկու և* ԻԳ՝ 10։ — **Նիւթ** *անհարթ և դեղնաւուն մագաղաթ*։ — **Գիր** *բոլորագիր սիրուն, վերջերն աւելի մանր, ագեղ և գժգոյն. թղ.* 235 *նոտրագիր մատենիս նորոգողի*։ — **Խորագիր** *և* **Վերնագիր** *սև մանր բոլորագրով*։ **Սկզբնագրեր** *սև երկաթագիր, բայց թղ.* 234*ա*² *յիշատակարանի վերնագիրն ու սկզբնատողը կարմիր*։ — **Զարդագիր** *չկայ*։ — **Բառանջատում** *շատ անգամ չունի*։ — **Զարդ** *լուսանցազարդ, խորան, կիսախորան և նկար չկան*։ — **Կազմ** *փայտեայ կաշեպատ, շատ փչացած, տակի կողքի վերևից մի կտոր տախտակ պոկուած*։ — **Թուական** *թղ.* 234*բ*² Չ̅Խ̅Բ̅ (= 1293). *Նորոգման թղ.* 235*ա*¹ Ռ̅, *և* Ճ̅. Ի̅ (= 1671)։ — **Տեղ** *Կարբի, Յովհաննու վանք*։ — **Գրիչն** *անյայտ*։ — **Կազմող** *Զաքարիա արքիսարկաւագ քանաքեռցի*։ — **Ծաղկող** *չ՚ունեցել*։ — **Տէր** *տր Համազասպ, ընծայուած Կարբու Յովհաննու վանքին. ապա ստացողը Յակոբը*։ — **Յիշատակագրութիւն** *թղ* 1*ա*, 115*ա*², 123*բ*, 139*ա*, 221*ա ջնջուած*, 234*ա*¹, 259*բ*, 261*բ և* 283*բ*։ — **Յիշատակարան** *գրչի թղ.* 234, *նորոգող Զաքարիա արքիսարկաւագի* 235, *այլև*

---

[1]) *Ծանօթութիւն. Առաջին թիւը* 1655 *է ձեռագրինը, որ և համապատասխանում է Սահակ Ս. Ամատունու ձեռագիր համառօտ ցուցակին, իսկ երկրորդը* 1613 *Կարենեան կոչուած ցուցակին. տպագրուած* 1863, *Թիֆլիզ*։

ստացողինը տակի կողքի ներսի կողմից պատառուած թղթի մնացորդը: — **Տեղեկութիւն** ձախ կամ վերին կողքի ներսի կողմից կպցուած նորագոյն Н. В. Сергѣевъ No. 7 թղթի կէս թերթի վրայ թիւ 1 (այսինքն Ագաթանգեղոսի առաջին օրինակ) տակը գրուած է ձեռագրիս բովանդակութիւնը և Ագաթանգեղոսինից յետոյ ասուած է «Բովանդակին ի սմա 1. Դաշանց թուղթն, 2. Յաճախապատում» և այլն. բայց դաշանց թուղթ չկայ և հաւանական է թէ եղած չէ. հաւանօրէն ցուցակագրողի անուշադրութեան սխալն է այդ: — **Վիճակ** շատ վատ, խոնաւութիւնից և գործածութիւնից փչացած. մէջը, մանաւանդ վերջերում սևացած, դժգոյն, թղթերի ծայրերը մաշուած, լուսանցքները ծակոտուած թղ. 4—6, 44—47, 243—256, 302—312, միջից 42—47, 353—377, ներքևից 243—256. լուսանցքները և ներքևները բարակ թղթիկներով նորոգուած են թղ. 114, 122—137, 152, 157, 160—171, 173—179, 227—234, 238-270 և աստուածաշնչի մարգարէութեանց տպագրուած թղթիկներով 154, 155, 158, 174 և 175 և այլն. տեղ տեղ թղթերի վարի ծայրերը մանր բոլորագիր թղթիկներով նորոգուած 1—4, 29, 67 և այլն և այլն: Վերի կողքի ներսի կողմում շատ կտորներից կցուած երկու թուղթ կազմի պահպանակի մնացորդ. պատառուած են թղ. 1 և 7: Բնագիրը նորագոյն գրչով սրբագրուած է թղ. 239բ, 240բ և 243ա: — Թղթեր են դուրս ընկած (որ նշանակում ենք * նշանով) թղ. *1-ից առաջ և 9*, 17* և 116*-ից յետոյ մի մի հատ, թղ. 7*-ից յետոյ 2, թղ. 153*-ից յետոյ 5 և թղ. 377 յետոյ մօտ 15 հատ: Թղթերը սխալմամբ շատ տեղափոխուած են. այսպէս պէտք է կարգաւորել Ագաթանգեղոս թղ. *1—7, 8—9*, 10—17*, 18—23, 35—36, 24—34, 37—79*, 86—87, *80—81, 84—85, 88—89, 82—83, 90—116*, 117—127, 130, 128—129, 132—133, 131, 134—136, 247—270, 160—163, 165, 164, 167, 166, 168—176, 178, 177, 179—194*, 195—233, 234 և 235: — Յաճախապատում թղ. 236ա—246բ, 137ա—153բ, 156ա—158բ, 154ա—155բ, 159աբ, 271ա—311բ, 315աբ, 313ա—314բ, 312աբ, 316ա—334բ, առաջին 342աբ, 336ա-341բ, 335աբ, երկրորդ 342ա—356բ, 366աբ, 358ա—365բ, 357աբ, 367ա—377բ:

Մատեանս Է

Ա. Պատմութիւն Ագաթանգեղոսի. Խորագիրը («Ագաթանգեղայ Պատմութիւն» տպ. Թիֆլիս 1882) պակաս է մի թուղթ դուրս ընկած լինելով (որ ցոյց ենք տալիս * նշանով), հետևաբար և

1. Յառաջաբանը չունի տպագրութեան վերնագիրը («Յառաջաբան և Ագաթանգեղայ Պատմութիւն»). սկիզբը պակաս է (տպագր. էջ 5, տող 1 «Խնդիք ըղձացեալ» և այլն — էջ 7, տող 5 «առ իւրաքանչիւր ընտանիս, և զպարծանս»): Սկսւում է թղ. 1ա[1] «վաստակոյն (տպ. «վաստակոցն») իւրեանց դրացեացն» և այլն — վերջի թղ. 7բ[2*] «արշաւասոյր, աւդավար,

յուղակ ալեացն» (տպ. էջ 7—21)։ Դուրս են ընկած երկու թուղթ, ուստի յառաջաբանի վերջն էլ պակաս է (տպ. էջ 21, տող 16 «սրավարացն մոլեգնելոց» և այլն — էջ 22, տող 5 «ծովավատակ նաւաստեացս»)։ Ըստ այսմ

2. Պատմութեան առաջին մասը նոյնպէս թերի լինելով չունի վերնագիրը («Ագաթանգեղայ Պատմութիւն» տպ.) և պակաս է սկիզբը (տպ. էջ 23, տող 1 «Ընդ նուաղել ժամանակի» և այլն — էջ 25, տող 1 «մեծաւ քինու և նախանձաբեկ լինելով, մեծամեծս»)։ Սկսւում է թղ. 8ա^{1} «փքայր ի բազմութիւն զաւրաց» և այլն — 9բ^{2}* «եւ երկրորդ ինձ կոչեսցիս» («կոչեցից» տպ. 29, տող 9.). ապա ընկած է մի թուղթ (տպ. էջ 29, տող 10 «Պատասխանի ետ Պարթևն» և այլն — 31, տող 17 «Նախարարք հայազունդ զօրացն գունդ գունդ»)։ Յետոյ գալիս է թղ. 10ա^{1} «հատանէին, զկնի լինէին» և այլն — 17բ^{2}* «ոչ ապցես դու յանձն պաշտաւն» (տպ. էջ 31, տ. 17—49, տ. 9). այստեղ էլ դուրս է ընկած մի թուղթ (տպ. էջ 49, տող 9 «տանել դիցն, և» և այլն — 51, տ. 11 «Արդ մինչդեռ կայր նա»)։ Այնուհետև յաջորդաբար թղ. 18ա^{1}—23բ^{2}, 35ա^{1}—36բ^{2}, 24ա^{1}—34բ^{2}, 37ա^{1}—64ա^{1} (տպ. էջ 51—151)։

3. Թղ. 64բ «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին»։ («Առն Աստուծոյ» տպ.) «Տէր Ած որ նա միայն ինքնութեամբ» և այլն մինչև 116բ^{2}* «առեալ յիմմէ առաքչէն զգիտութիւն» (տպ. էջ 153—259, տ. 11)։ Այս տեղից մի թուղթ է դուրս ընկած (տպ. էջ 259, տ. 11 «և յայտ արարեալ» և այլն — 261, տ. 15 «ուստի գայ կամ»։ Մնացեալը դասաւորել ըստ տպագրին այսպէս 117ա^{1}—127բ^{2}, 130ա^{1}բ^{2}, 128ա^{1}—129բ^{2}, 132ա^{1}—133բ^{2}, 131ա^{1}բ^{2}, 134ա^{1}—136բ^{2}, 247ա^{1}—270բ^{2}, 160ա^{1}—188ա^{2} (տպ. էջ 261—417)։

Ծանօթութիւն. Ձեռագիրս չունի տպագրութեան «Կատարեցաւ վարդապետութիւն» և այլն 7 տողը։

4. Պատմութեան վերջին մասը չունի տպագրութեան վերնագիրը («Ագաթանգեղոս դարձ փրկութեան աշխարհիս Հայաստան ընդ ձեռն առն սրբոյ նահատակի») և առանց բաժանման իբրև վարդապետութեան շարունակութիւն սկսւում է թղ. 188ա^{2} «Արդ եկայք, եղբարք, զաւգուտն» և այլն — վերջ թղ. 234ա^{1} «թէ որ ա͞ծ մեր դու ես» (տպ. էջ 419—512)։

Ծանօթութիւն. Ձեռագիրս չունի տպագրի, որ արտատպուած է Վենետիկի 1862 հրատարակութիւնից, ընդ ամենը ԾԻՁ հատուածների բաժանմունքն ու թուահամարները. բայց ունի ընտիր փոփոխակներ, որ պարզում է շատ մութ տեղեր։ Հնութեան նշաններից է «ոգ-իք» թղ. 10ա^{1} և այլն, «որդ-իք» 228բ^{2} և այլն։ Տպագրի Աղբիանոսը ձեռագրումս է ադբեոս 228բ^{2}, Նոր շիրականը Նոր-շիրական 228բ^{2}, Արուեստական-ը արուեստով 229ա^{1}, Սպասկապետութեան սպարապետութեան 229ա^{1}, Բռոտանդակը յորդորակ 220ա^{1}, Մանայարքը մանեայրք 226ա^{1}, Այծքը այծք թղ. 210բ^{2}։

Բ. «Ճառք Յաճախապատումք եւ լուսաւորք վարդապետութեան սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչի (Թղ. 236ա)։»

1. *Ճառ Թղ. 236ա¹. Վերնագիր («Ի Ս. Երրորդութիւնն» տպագրութիւն Ս. Էջմիածին 1894) չունի, այլ սկսում է ուղղակի գլխից «Ո՞ր է ինքնութիւն գոյութեանն, որ» և այլն։ — Վերջ Թղ. 238ա¹ «այնպէս չէր Հայր առանց որդւոյ իւրոյ, եւ Հոգւոյն սրբոյ»։ (տպ. էջ 1—4)։*

2. *Թղ. 238ա¹ «Առանձնաւորութիւք։ Կատարեալ Հայր անձամբ, զաւրութեամբ, գիտութբ, և իմաստութբ, արարչութբ, և բարերարութբ, զամենայն զիւրն անձին իսկութբ ունի» և այլն — 246բ²։ Այստեղ պիտի լինի Թղ. 137ա¹—138բ² «և մնասցուք յուսով ի փառս ամենասուրբ երրորդութեանն, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։», որով վերջանում է այս գլուխը (տպ. էջ 4–21)։*

> *Ծանօթութիւն. Այս ճառը բաժանուած չէ առաջինից և վերնագիրը մանր բոլորագիր չէ ինչպէս նախընթաց և յետագայ ճառերինն է։*

3. *Թղ. 139ա¹ «Միտք հաւատոց սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի։ Ճշմարտութիւն հաւատոյ լոյս է, աչաց մտացն շարժմանց, զգացեալ զլոյսն գիտութեան» և այլն։ — Վերջ Թղ. 141բ¹ «միշտ մշտընջենաւոր երանութիւնս վայելել ի փառս ամենասուրբ երրորդութեանն Հաւր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։» (տպ. էջ 22–26)։*

4. *Թղ. 141բ¹ «Յանդիմանութիւն մոլորելոց ի գիտութիւն աստուածպաշտութեան երանելոյն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի։ Ոչ ի անհամեմատ է ամենակալ ամ[են]ասուրբ երրորդութիւնն, եւ յանսկիզբն էութենէն և ի մշտընջենաւորութենէն հաստատեցան ամենայն արարածք» և այլն։ — Վերջ Թղ. 144ա²* «և որք մոլորեցան ի ճշմարտութենէ անտի, բարկութիւնն այ կա և մնա ի վերա նորա։» (տպ. էջ 27—31, տ. 119)։*

> *Ծանօթութիւն. Ձեռագրիս Թղ. 144ա², տող 22 և 23-ի միջև, ուրեմն թերթ չէ դուրս ընկած, պակաս է տպագրի էջ 31, տող 120 «Ոչ ի զտարբերս ամենայն աստուածս արարին, զշնչաւորս և զանշունչս, զջուր և զհուր» և այլն — էջ 38, տող 232՝ ճառիս վերջը. ուրեմն և հետևեալ ճառի*

5. *Վերնագիրը և սկիզբը պակաս է (տպ. «Հաստատութիւն ճշմարտութեան և առաջնորդութիւն կենարար խրատուց Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի ասացեալ։ Յայտնի է իմաստնոց սրբոց, որ ունի զգիտութիւն ի գրոց մարգարէից և առաքելոց և վարդապետաց» և այլն — էջ 41, տող 65 «զանմոլար գիտութիւն սփռել ի լսելիս մարդկան») և սկսում է շարունակութիւնը Թղ. 144ա² «և որք զարթուցանեն զսիրտս, և ունին զերեսանակս անձնիշխան կամաց» և այլն։ — Վերջ Թղ. 153ա¹ «Որ ունի ականջս լսելոյ լուիցէ խրատուցս ի քս յս ի տր մեր որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն» (տպ. էջ 41—54)։*

6. Թղ. 153ա¹ «Յանդիմանութիւն ծածկութից իւրաց, որ զաներևոյթսն յերևելիս ածէ, Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի: Զի ոչ հայրն ծնեալ ուստեք, այլ որդի ծնեալ և ոչ չարչարեալ և ոչ հոգին սբ առաքեալ, այլ բղխեալ մշտընջենաւորք» և այլն — Թղ. 153բ²* և ի գլխումն ածելով զմեղաւորս լուսաւորեալ և փառաւորեալ» (տպ. էջ 55—56, տող 30): Ապա պէտք է լինի Թղ. 156ա¹—158բ² և վերջին Թղ. 154ա (տպ. էջ 62—67) որ սովորական վերջաբանութիւնից յետոյ ունի և «փառք քեզ տծ յաղագս ամենայնի»:

Ծանօթութիւն. Թղ. 153բ²*-ից յետոյ դուրս են ընկած մօտ հինգ թուղթ. պակասում է տպագրի էջ 56, տող 30 «սրբութիւնքն էր, և է ի պայծառացուցանել» և այլն — էջ 62, տող 226 «ի գործ ածել բարւոյ և զգուշանալ»:

7. Թղ. 154բ¹ «Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հաոց Լուսաւորչի, վասն յօրինուածոց Արարածոց: Յորժամ բաղմացաւ իմաստութիւն» և այլն — Թղ. 155բ², ապա 159ա¹բ², 271ա¹—273ա²* «և զխաղաղութիւնն և գչինութիւնն որ պարսպեալ ունին խնդամտութբ զմարդիկ» (զմարդիկ՝ չունի տպ. էջ 68—74): Ապա շարունակւում է Թղ. 273ա² «ըստ մարգարէին, եթէ զպատուիրանս իմ պահեսջիք» և այլն — 274բ¹ (տպ. էջ 77, տող 269 — էջ 78 վերջը):

Ծանօթութիւն. Թղ. 273ա², տող 19 և 20-ի միջև, ուրեմն թերթ չէ դուրս ընկած, չկայ տպագրի էջ 74, տող 198 «ի խռովութիւն և ի տարակուսանս դարձուցանիցէ» և այլն — էջ 77, տող 269 «Աստուծոյ միայն է կարողութիւն»:

8. Թղ. 274բ¹ «Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հաոց Լուսաւորչի Յանդիմանութիւն դժընդակ վարուց, և ընծաութիւն Առաքինութեան հանդիսից: Պարմանք բանին (բանին՝ չունի տպ.) մարգարէից և առաքելոցն քարոզութիք»: Վերջ Թղ. 282ա¹ (տպ. էջ 79—89):

9. Թղ. 282ա¹—291բ¹ «Վարդապետութիւն կատարեալ ի տր Ամենայն արուեստ («ամենարուեստ» տպ.) պահոց երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի: Եւ քանզի ամենայն կարգաց չափ եղեալ յամենակալ տէն և յարարչէն, որպէս զի» և այլն (տպ. էջ 90—102):

10. Թղ. 291բ¹ «Խորին Սրբոյն Գրիգորի Հաոց Լուսաւորչի: Երախտաւորութիւն, անվեհեր բարերար կամացն, և յորդորումն ի լաւն և յառաւելն, ընդ ճշմարիտ առաքինութեանն ի փառս ամենասուրբ երրորդութեանն ճառեալ: Շնորհք («շնորհս» տպ.) ունիմ երախտեաց բարերարութե[ա]ն անսկիզբն, և անփոփոխ մշտընջենաւոր տրութեանն, սբ երրորդութեանն որ աղբիւրն է ամենայն արարածոց» և այլն — 298բ²* «և յաղագս այսորիկ ասէ տրն հտալ գորբութի շանց» (տպ. էջ 103—114): 298բ² -301ա²: (103—120).

Ծանօթութիւն. Թղ. 298բ^{2}, տասներկուերորդ և տասներեքերորդ տողերի միջև, ուրեմն թուղթ դուրս ընկած չէ, պակաս է տպագրի էջ 114, տող 331 «և արկանել զմարգարիտն առաջի խոզից» և այլն—էջ 117, տող 399 «խնդրեն զկեանսն յաւիտենից»:

11. Թղ. 301ա^{2} «Նորին Սրբոյն Գրիգորի վասն վարուց Առաքինութեան, որ հանդիսիւքն լաւութեան պսակեալ երանին: Ամենայն արուեստից լաւութեան և քաջութեան, և առաքինութեան սբ երրորդութիւնն է» և այլն — 311բ^{2}, 315ա^{1}բ^{2}, 313ա^{1}—314բ^{2}, 312ա^{1}բ^{2}, 316ա^{1}—320բ^{2} (տպ. էջ 120—148).

12. Թղ. 321ա^{1}—327բ^{2} «Երանելոյն Սրբոյն Գրիգորի վարդապետութիւն բարերար արարչին խնամոց և կշտամբութիւն անհնազանդ ստահակութե[ա]ն, և առաջնորդութի բարութեան բարուցն լաւութեան: Նազմադիմի են երախտիք շնորհաց մերոյ հաւրն բարերարի, և միոյ տն կենարարի» և այլն (տպ. 149—160):

13. Թղ. 328ա^{1}—334բ^{2} «Հանդէս լաւութեան Յիշատակաց ի պէտս աւգտի զաներևութս յերևելիս ցուցանելով ի գործս առաքինութեան փոխելոյ ի յոյսն կենդանի ի բանակս զուարթնոցն, որ ստտ կատարեն զհաճոյսն այ. Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի: Ո՜ խորք մեծութեան, և գիտութեան, և իմաստութեանն այ.» և այլն (տպ. 161—172):

14. Թղ. Առաջին 342. «Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, Յաղագս Մարգարէութեան, որ յայ խնամք տեսչութեան: Մեծ է խորհուրդ ածպաշտութեան» և այլն. ապա Թղ. 336ա^{1}—338ա^{1} (տպ. էջ 173—178):

15. Թղ. 338բ^{1} «Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, Վասն հոգւոց մարդկան, Նացայայտութի: Ած ըստ մեծի մարդասիրութեանն իւրոյ» և այլն — Թղ. 341բ^{2}. ապա Թղ. 335 և 342 երկրորդ (տպ. 179—186):

16. Թղ. 343ա^{1}—346ա^{2} «Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, վասն Մարտիրոսաց Սարգայ Պետութիւն [= վարդապետութիւն] Ըսմանց: Սկսանիմ այս|ուհետև և վասն մարտ|իրոսաց ճառել բանիւ, զի պատուեսցուք զյիշատակս նոցա» և այլն (տպ. 187—191):

17. Թղ. 346ա^{2} «Նորին երանելոյն Սրբոյն Գրիգորի, Զգուշութիւն զգաստութեան, Ճահաւոր պատրաստութեան ընդ մտերիմսն, և ընդ դժընդակսն, պատիւ, և պարծանք: Գրեալ («գրել» տպ.) ձեզ և ուսուցանել կամիմ եղբայրք իմ և որդեակք, զորս» և այլն — Թղ. 349բ^{1}* «միշտ մերձաւորք լիցին մարմնոյ և արեանն տն ի ներքին մարդն»: (տպ. էջ 192—197):

Ծանօթութիւն. Թղ. 349բ^{1*}, տող 23 և 24-ի միջև (թուղթ դուրս ընկնել չէր կարող) պակասն է տպ. էջ 197, տող 140 «Ննակել Քրիստոսի, որ լուսաւորէ» և այլն — էջ 200, տող 56 «և զպատիւ արդարոց և մեղաւորաց»: Հետեւաբար

18. Ճառի վերնագիրը և սկիզբը պակաս է («Սորին երանելոյն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին Գովութիւնք Աստուծոյ երախտեացն հանդիսիւք մարտիրոսաց քաջաց և առաքինեաց: Անբաւ են խնամք բարերարին» և այլն մինչև «ըստ արժանեաց տալ զպատիժս և զպատիւ արդարոց և մեղաւորաց» տպ. էջ 198—200, տող 56): Սկսում է թղ. 349բ^{1} «Վասն զի («զի» տպ.) հոգևոր աւրէ[ն]քն կենդանարար են» և այլն — թղ. 350ա^{1*} «և փշալից արար զամ|ենայն անդամս մնաց» («անդս մնաց» տպ. էջ 200, տող 56—75) և շարունակւում է թղ. 350ա^{1}—352բ^{1} (տպ. 202—205):

Ծանօթութիւն. Թղ. 350ա^{1*} 20 և 21 տողերի մէջ, ուրեմն թերթ դուրս ընկած չէ, պակասում է տպ. էջ 200, տող 75 «և անդամոցն և զմտաւորս և զբանաւորս» և այլն — էջ 202, տող 110 «ոչ յաղթահարեսցի հեղութեամբն»:

19. Թղ. 352բ^{2}—356բ^{2} «Երանելոյն Սրբոյն Գրիգորի, Յորդորումն Ապաշխարութեան խոստովանել: Մեծ են յարգանք հրամանաց տն, և անբաւ շնորհք բարերարին այ» և այլն. ապա 366ա^{1}–366բ^{2}, 358ա^{1}—360բ^{2*} «միահաւան խնդութիւն երկնաւորաց և երկրաւորաց»:

Ծանօթութիւն. Թղ. 360բ^{2}, տող 7 «երկրաւորաց» բառից յետոյ պակաս է, ուրեմն թերթ չէ դուրս ընկած, տպ. էջ 217, տող 324 «երանութիւն ի փառս քրիստոսի» և այլն—էջ 220, տող 54 «ի խնամս մարդասիրութեան»: Հետեւաբար հետեւեալ

20. Ճառը թերի է (տպ. Երանելոյն Սրբոյն Գրիգորի Առաջնորդութիւն ամենարուեստ խրատուց Հանգամանք գիտութեան և իմաստից: Որպիսի գոհութիւն և օրհնութիւն և փառս տալ արժան է ամենակալ տէրութեանն» և այլն էջ 218—220, տող 55) և սկսւում է թղ. 360ա^{2}, տող 7 «և խլել զամենայն բոյս (տպ. «բոյսս») անաւր|էնութեան», և այլն — 365բ^{2}. ապա թղ. 357ա^{1}բ^{2}, 367ա^{1}—373ա^{2} (տպ. 220—239):

21. Թղ. 373բ^{1}—375ա^{1} «Երանելոյն Սրբոյն Գրիգորի վասն տրոց իմաստութեան, Որ ի հոգւոյն սրբոյ պարգևեցաւ սուղ ինչ բան: Անբաւ են խն|ամք տեսչութեան արարչին, և լուսաւորու|թիւն առ յաւրինուածս արարածոց իւրոց» (տպ. 240—242):

22. Թղ. 375ա^{1} «Երանելոյն Սրբոյն Գրիգորի վասն անփոփոխ ինքնութեան էութեան: Որ տկարութի դնէ ածութեանն» և այլն (տպ. էջ 243—247). Վերջ թղ. 377բ^{2*} «և զղջման ապաշխարողաց, և հանգուցելոց յայս|ոսիկ շարածեալ (տպ. «շարալծեալ»): Աւրհնեսցուք»

Ծանօթութիւն. Այնուհետև վերջից շուրջ 15 թուղթ դուրս ընկած լինելով պակաս է այս ճառից տպ. էջ 247, տող 108 «գովեսցուք և բարձր արասցուք ամենասուրբ երրորդութիւնն» և այլն — էջ 247, տող 126: Այլ և պակաս է 23-րդ ճառը «Երանելոյն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի խրատք ճգնութեան և ցոյցք հանդիսից որ առաքինութեան յորդորմունս: Ամենայն ոք որ հրաժարեցան» և այլն տպ. էջ 248—205. Այնպէս պակաս է «Աղօթք յորժամ յորոգայթ անկանիցի ոք զոր ասացեալ է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին: Օրհնեալ է անբաւ մարդասիրութիւն քո» և այլն տպ. էջ 206—207:

Յիշատակարան գրչի 1. Թղ. 234ա^2—234բ^2: «Յիշատակարան սուրբ գրոցս: Որք տ̃ծային փառացն են ցանկացեալ, և հետևեալ նորին ճանապարհ|աց, առ ի վերին դիտ|աւորութեանն պայման, զոր խոստացաւ անս|ուտն ա̃ծ, ամենայն կամարարաց, և սիրող|աց իւրոց, և պատմող|աց, ամենասուրբ պատ|ուիրանաց, և մարդ|եղութեան, և սքանչ|ելագործութեան, և չարչարանաց, և մահ|ուան, և յարութեան, ա̃ծորդւոյն, և վերան|ալոյն առ հայր, եւ միւսանգամ գալստեանն, և ամենեքեան վասն յուս|ոյն, որ ի նա չարչարեալք, և ճգնութեամբ բազմ|աւ նահատակեալք, եւս առաւել սուրբ լուսաւորիչս հաստատն աշխարհիս, եւ ամենայն քրիստոնէից, և ամենայն սուրբ կուս|անքս, որ դիպեցան, և ի սուրբ մատեանս շարադասեալք կարգ|եցան: Ար և քաջ քարտուղ|արս ագաթանգեղոս հրամանաւ և խնդր|ուածովք ս̄ր արքա|յին տրդատա քաջի և զաւրաւորի, յանձ|ին կալեալ ոճով պատմ|եաց մեզ ըստ իւրում հոգելից իմաստու|թեանն, տուեցելոյ ի շնորհաց պարգևողին, ի լուսաւորութի հաւատ|ացելոց, և ի փառս ք̄ի:

Արդ պատուական հայրապետին, տ̄ն համազասպայ յուսով բարեբարին այ տն յի նաւեցեալ ի սէր վկայիցն, և ի համբերութիւն սբ հաւրս մերոյ գրիգորի լուսաւորչիս եւ գրել զսբ մատեանս կոչեցեալ ագաթանգեղոս, վասն յիշատակի, և միջնորդութեան յաւուր ահ[աւ]որ, և մեծ ատ|ենի, անդ ուր բանքն սպ|առին, և գործքն թագ|աւորեն:

Եւ ընձաեցոյց զսա ի սբ կարապետն ի վանս յոհ|աննու, ի լուսաւորու|թիւն հաւատացելոց, և ի վարժումն մանկանց եկեղեցւոյ, և ի փառս անմահ բանին այ, որ է աւրհնեալ յաւ[իտեանս]: ի թվ չխ բ (= 1293).

Ծանօթութիւն. Մատենիս տէր Տէր Համազասպ հայրապետն անշուշտ պէտք է լինի Յովհաննու վանքի առաջնորդը, որ յիշում է Զաքարիա Սարկաւագը. «Թուին ՉԻԸ (= 1279) եղև Հայր Համազասպ: Այս Համազասպ բազում արդիւնս արար, և բազմացոյց զգրեանս Աստուածային. որ և բազումք կան դեռ ևս: Սա էր յաւուրս որդւոց իշխանին Վրդոյ, և վարէր զառաջնորդութիւնն մարմնաւոր իշխանութեամբ. և էր ինքն յազգէ Մամիկոնէից, այր փառահեղ և ահարկու տեսողացն: Զայս ուսաք ի բազում գրոց

յիշատակարանաց և յարձանաց բազում տեղիս (Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, Ա. Էջմիածին, հատոր Բ. էջ 30։ Համ. նոյն հատորի էջ 19. Յովհաննու վանքի գաւթի հարաւային որմի արձանագրութիւնը)։ Առաջնորդ կամ Հայր Համազասպի անունը յիշւում է վերջին անգամ վանքի աւագանի արձանագրութեան մէջ ՁԽԹ թուին (տես Նոյն, հատոր Բ, էջ 20)․ բայց Զաքարիան նորա առաջնորդութիւնը երկարեցնում է մինչև ՁԿ թիւը, երբ Համազասպին յաջորդեց Վասիլ։

2. **Յիշատակարան Նորոգողի** (Նորագիր). Թղ. 235ա¹—235բ². «Շնորհօք, և ողորմութբ ամենազօր սբ Հոգւոյն, եղև նորոգումն այսմ պատմագրի, որ կոչի ագ|աթանգեղոս։ Որ պատ|մէ զվարս և զգործս սը|րբոյն գրիգորի լուսաւ|որչին, և մեծազօր ար|քային Տրդատայ [ի] սկզբ|[ա]նէ մինչև ցկատարումն և զբուն վրդ"պտութին, և յաճախապատումն ի թուին Ռ. և Ճ. Խ. և Գ (= 1694), 'ի թորգոմեան սեռի յերկրիս արարատեան. ի գաւառս կարբ|ւոյ. ի հրաշափառ և գե|րապանծ սուրբ ուխտս Յօհաննու վանք, ընդ հո|վանեաւ մեծի ամ|որդւոյն Յովհաննու կար"պ"տին, և Մատթէոսի աւետարան|չի, և Պարսամայ ճգնաւ|որի, և Պանտալէոնի բժ|իշկի, և այլ միայնեղէն սը|րբոցս որք կան աստէն ժող|ովեալ։ Ի թգ"րութե[ա]ն պարսից Շահսուլէմանի, և յիշխանութե տանս ար|արատեան Շահղուլի բէկի։ Եւ ի կթղկոսութեն սբ էջմի|ածնի Տեառն Նահապետ|ի։ Եւ առաջնորդութե Սբ ուխտիս, Սարգիս վրդ"պտի։ Ձեռամբ աղկաղկի և տրպի Զաքարիա արշիսարկաւա|գի քանաքեռցւոյ, որ ամս Ծ և Դ աստ ծ"ա"յեմ, անհաճոյ դեգերմամբ։ որ կե ամի կենաց իմոց նորոգեցի չքաւորու|թբ և աղքատութբ իմով, և ոչ ոք էր որ օժանդակ լի|նէր։ Սակայն ոպէտ նորոգ|եալ աւարտեցի, և աւան|դեցի զսայ առաջին բնակ|ութի իւր Յօհաննու վանք ի դուռն մեծի ամ|որդւոյն, որ յոտին արագածու, հանդէպ արաու լերինն, ի գլուխս բարձրաբերձ քարանցն, իվերա կարկաճահոս, և ծիծաղայ|ծաւալ գետին քասաղու։ Արդ որք կայք աստ և ընթեռ|նուք զսայ, յիշեցէք առ քունակ և ածընկալ յաղօթս ձեր զառջդ վանիցս զսարգիս վարդապետն. և այլ միայնեղէն միա|բանք սորա, զբ [երկուս] Գրիգոր, և զկ|յակոբ վրդ"պ"տք, զտէր ղազար, և զտէր յովասափ, զփակակալ մկրտիչ սարկաւագ, զխաչատուր, զմարգարէ սարկաւագ|ունք, զմօսէս վասիլ տնտես. զդօլան և զյովսէփ և զյարութի մուղտեսիք, և այլ մանկունք սո|րա թուով Լ. որք մակաղեալք կան ի գոգոյ (այսպէս) և ի ծոց սբ կր"տին. և զես իսկ զաքարիայս որ բզ"մ չարչարանօք հազիւ կարացի կատարել քանզի յոյժ ապակ|անեալ էր, վս զի բզ"մ լուսան|ցս հատեալ էին և իւրեանց կարիքն անցուցեալ, և ես զոր ինչ կարացի նորոգեցի, և զոր ոչն կարացի, ներեցէք ինձ, և զաշխատանս իմ ապախտ մի առնէք վս այ, զի և դու որ ընթեռնուս յայ առցես զվարձս։ Ամէն։

Սեղանս կազմեալ արքունական,
ի խրախութիւնս հոգեկան։
Յորժամ գայցէ անմահ փեսայն,
նստի աթոռ դատողական։
Յայնժամ կոչէ զայգս ամենայն,
հատուցանել զվարձս մարդկան։
Անդ պատահի զաքարիայն,
երթ յետս յինէն լսէ զձայն։
Ամ եղկելի թշուառական,
վայ և եղուկ ո՜հ քեզ կարդան։

Անուն իմ բաղկանայ չորիւք տառիւք. առաջինն ի միակէն, երկրորդն ի երկրորդէն, երրորդն և չորրորդն ի չորրորդէն [գի՛րք] և քի փառք յաւիտեանս ամէն։

Ծանօթութիւն. Այս յիշատակարան ուրեմն Զաքարիա պատմագրի ձեռնագիրն է։

3. Թղ. 378ա¹. 19 տող կէսից աւելին պատառուած։ — և . . . . ։ սար . . . . ։ անա . . . . ։ գիրք . . . իմոց . . . ծընաւ . . . . ին իմոյ տր . . . և մայրն իմ . . . եղբայրն իմ ո . . . . քվուվերացն իմ . . . սաբեդին որ առքն . . . նգուցեալ. հէրիքնազ . . . մուր[ա]դին. և այլոցն ամէ[ն]եցուն ամէն։ Դարձեալ ես յակոբս ցանկացայ յայնմը բանի, որ ասէ Երանի այնոցիկ որ ունիցի զաւակ ի սիոն. կամ . . . անտանի երուսաղէ[մ]։ —

Ծանօթութիւն. Այս Յակովբը, ինչպէս երևում է, մատենիս յետագայ տէրը կամ ստացողն է։ Թղ. 115 Լուսանցքում «ակոբ ծառայ». հմմ. և թղ. 261բ¹ «լուսանցագիրը»։ —

Յիշատակագրութիւն 1. Թղ. 123բ. Լուսանցքում մանր նոտրագրով «ես յակովբ սա[ր]կաւագ գէրեցի այս գրս ովր կարդաք ած ողորմի ասացէք. ամէն»։ — Թղ. 259բ. լուսանցագիր անվարժ ձեռքով «ստացող (առաջի՛ն) գրոյս [Յա]կոբին, հաւրն նորա Սանէսին մաւրն . . . ճին, ով որ կարդ[ա]յք մին բերան ողորմի ասէք. ած ձեզ ողորմի»։

2. Աննշան կամ անընթեռնլի գրութիւններ թղ. 1ա. 221ա², 378բ։ — Անծանօթ (վրացերէ՛ն) թղ. 139ա ներքև լուսանցքում։ — Թղ. 283բ միջի լուսանցքում ծածկագրութիւն նոր ձեռքով «1881, յունուարի 21»։

II.

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ և ՈՍԿԵԲԵՐԱՆ

Խ. 1656/1614։ — Կ.ախքան 1261։

Թուղթ այժմ 368։ — **Դատարկ** սկզբից կազմի թուղթ 1,2 և վերջից 368, միջում 150 և 235, բոլորն էլ նորագոյն թուղթ և 325բ, վերևում յետին ժամանակի գրուածք, ուրիշ ձեռքով։ **Մեծութիւն** 29×20 սմ.։ — **Գրութիւն** երկսիւն, իւրաքանչիւրը 23,5×7,5։ — **Տող** 22, իսկ 172—174 ունի 16—20, գծուած կապարով և ճնշմամբ։ — **Թերթ** 32 Ա—ԼԲ. իւրաքանչիւրը 12 թուղթ. Ա՝ 4, ԼԲ՝ 2. թերթերի սկիզբը և վերջը նշանակուած։ — **Նիւթ** թուղթ հաստ ու պինդ և կոկ։ — **Գիր** խոշոր բոլորագիր։ — **Խորագիր** Ոսկեբերանի ճառի և **Վերնագիր** բաժանմունքների և սկզբի մի քանի տողերը մուգ և բաց կարմիր։ — **Սկզբնագիր** հատածների՝ սև։ — **Զարդագիր** կարմրագոյն գլխագիր Ի ամբողջ երեսի երկարութեամբ թղ. 261ա^{1} և 289ա^{1}. միւսները մեծ մասամբ սև և երբեմն գունաւոր. Թռչնագիր 26ա^{1}, 326ա^{2}։ — **Բառանջատում** համարեա միշտ ունի։ **Լուսանցազարդ** 26ա, 48ա, 88ա, 275բ, 291ա, 326ա՝ բոլորը մուգ կարմիր. սևագոյն 267 ա. **Կիսախորան** 9ա, 48ա, 88ա թռչնազարդով, 261բ և 326ա բոլորը մուգ կարմիր. — **Կազմ** փայտեայ կաշեպատ։ — **Թուական** ԺԲ—ԺԳ դա՞ր։ — **Տեղ** Ա.կներ անապատ 361ա։ — **Գրիչ** Դաւիթ բջնեցի 247ա^{1}. հմմ. 366ա և այլն և 275բ։ — **Կազմող** և **Ծաղկող** անյայտ։ — **Տէր** Ա.կներ անապատ կամ մենաստան 366 և այլն։ — **Յիշատակագրութիւն** թղ. 1ա, 4բ, 15բ, 26ա, 47ա, 48ա^{1}, 83բ, 174բ, 178բ, 200ա, 247ա^{2}, 261ա^{2}, 275բ^{1}. 323ա^{1}բ^{1} և 325աբ խծբծանքներ։ — **Յիշատակարան** թղ. 366ա—367բ^{2}։ — **Տեղեկութիւն**. կազմի մէջքին կպցուած սպիտակ տպուած թղթիկի վրայ «1656» և տակը դեղնագոյն թերթիկի վրայ ձեռագիր «2» (այսինքն՝ մատենադարանիս Ագաթանգեղոսի երկրորդ ձեռագիրը)։ Ձախ կողքի ներսի կողմին կպցուած նոր թղթի վրայ Հմր. 2-ի տակ գրուած է մատենիս բովանդակութիւնը։ — **Վիճակ** շատ թղթեր, մանաւանդ վերջում սևացած, ծակոտուած թղ. 339—368. ճղճղուած, բայց նորոգուած՝ թղ. 22, 172, 198, 316. կազմելուս ծայրերը կտրուած են, հետը և լուսանցազարդերը, ներքնագրերը և թերթահամարները, որոնք շատ անգամ չեն էլ երևում։ Թղթեր են դուրս ընկած և տեղափոխուած. ուստի դասաւորել այսպէս. Ագաթանգեղոս թղ. *4աբ*, *3աբ, 5ա^{1}—94բ, 131ա—134բ, 99ա—130բ, 95ա—98բ, 135ա—143բ, 156ա—157բ, 146ա—149բ, *151ա—155բ, 144ա—145բ և 158ա—234բ, *236ա—261ա* և այլն։ — Ոսկեբերանի լուսաւորչի ճառը թղ. 326ա—365բ*։ —

Մատեան Ա

Ա. Պատմութիւն Ագաթանգեղոսի. թղ. 3ա¹—325բ².

1. Խորագիրը պակաս և յառաջաբանը սկզբից թերի. սկսւում է թղ. 3ա¹ «Նոքա և զգանձն երկնաւոր յաւելուն տան այնոցիկ որք առաւել ունիցին, զի որ ունիցի տացի նմա և յաւելցի» և այլն. թղ. 3բ² վերջանում է «միայն ծարաւի լեր սիրելոյն, և անդէն աղբիւրն» (տպ. Թիֆլիզ 1882, էջ 13, տ. 6 ներքևից — էջ 15, տ. 12 վերևից)։ Վերջ յառաջաբանին թղ. 9ա¹։

Ծանօթ. Յառաջաբանի սկզբից դուրս է ընկած 1 թուղթ՝ թղ. *4աբ-ից առաջ (տպ. էջ 5 «Իղձ ըղձացեալք» և այլն — էջ 6, տ. 8 «զանցս եղելոյ աշխատութեան ճանապարհացն»). յետոյ պէտք է լինի թղ. 4ա¹բ², որ սկսւում է «զեկեղեցի տարուբեր անդադարն սահանաց, գրաւական եղեալ զանձինս շահաւորն աւգտութեան» և այլն և վերջանում է «մարտընչին ի մէջ բարձրացելոց ջրեղէն լերանց, և ի մէջ խռովեալ նեղելոց ծովային ձորոցն, ջանան զապրուստ անձանց փրկութե կեանսն» (տպ. էջ 6, տ. 8 վ. — էջ 7, տ. 7 ն. ընդգծուած բառերը չկան տպագրում)։ Ապա դուրս է ընկած 4–5 թուղթ, որով պակասում է տպ. էջ 7, տ. 18 «զի ի շրջանացն չփոթեալ ուռուցեալ ի փոթորկացն բքացելոց» և այլն — էջ 13, տ. 19 «նոքա և զծարաւիս արբուցանեն առաքինութեան բաժակաւն»։

2. Թղ. 9ա. կարմիր կիսախորանով, լուսանցազարդով և վերնագրով սկսում է Պատմութեան առաջին մասը։ «Սկզբանութի Սրբոյն գրիգորի Հայոց լուսաւորչի. և առաքելանման վարդապետի։ Յագաթանգեղայ պատմութենէ։ Ընդ նուաղել ժամանակաց թագաւորութեանն պարթևաց, իբառնալ տէրութեանն արտաւանայ որդոյ վաղարշու» և այլն (տպ. էջ 23—88, § Ա—ԺԸ.)։

Բ. Թղ. 48ա². իբրև նոր բաժանմունք ունի կարմիր լուսանցազարդ, կիսախորան և զարդագիր սկզբնատող։ «Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ, խնդրեաց իւր կին կայսրն դեոկղետիանոս» և այլն (տպ. էջ 88—151, § ԺԹ—ԽԸ.)։

3. Թղ. 88ա. Վարդապետութիւնն սկսւում է կարմիր լուսանցազարդով, խորանով և զարդագրերով։ Վերնագրի տեղ ունի թղ. 178բ և 200ա ներքևի լուսանցքում հետևեալը. «Ընծաբանութի սրբոյն գրիգորի Հայոց մեծաց լուսաւորչի»։ Սկիզբն է «Տր Ած որ նա միայն ինքնութիւ եւ ոչ ոք յառաջ քան զնա, և չիք ոք այլ որ երևի արարիչ և որ ոչն երևի» և այլն — թղ. 261ա* (տպ. էջ 153—417, § ԽԹ—ՂԸ)։

Ծանօթ. Թղ. 150 նորագոյն թուղթ է և դատարկ, պակասում է ուրեմն տպ. էջ 246, տ. 11 «իւրոյ ընդ իւր, և գործք իւրաքանչիւր» և այլն — էջ 247, վերջին տողը «զի ձայն բարբառոյ էր նա»։ § ԽԱ֊ի վերջից 21 տող և ԽԲ֊ի սկզբից 11 տող։ Այնպէս նորագոյն թուղթ և դատարկ է Թղ. 235, որտեղ պակաս է տպ. էջ 378, տ. 9 «. . . բերք և ծաղկաբերք ժամանակաւ ունին» և այլն — էջ 379, տ. 4 ն. «զիւրոյ ժամանակին զդէպս ի նմանութիւն օրինակաց յանդի»։ Ընդամենը § ՁԱ֊ի վերջի մասից 29 տող և ՁԲ֊ի սկզբից 8 տող։

Թղ. 143բ* «Յովաննէս» վերջին բառից յետոյ, ուրեմն Թղ. 156ա¹֊ից առաջ պակասում է տպ. էջ 236, տ. 6 ն. «մեծ մարգարէից՝ պատրաստել ճանապարհ» և այլն — էջ 237, տ. 5 «Այնպէս և Յովհաննէս». ընդամենը 10 տող, սկսեալ § ԽԶ, տ. 5։ Այս պակասը բացատրւում է սկզբում և վերջում եղած Յովհաննէս անունով. գրիչը սխալմամբ, ինչպէս ասում ենք, թռել է մի տեղից միւսը։

Այսպէս չէ Թղ. 261ա², որ չունի տպագրի «Կատարեցաւ վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» և այլն 7 տողը։

4. Թղ. 261բ². Պատմութեան վերջին մասը չունի վերնագիր. բայց ունի կարմիր լուսանցազարդ, կիսախորան և զարդագիր սկզբնատող. «Արդ եկ|այք եղբարք զաւգուտն վասն հասարակաց շինութե փութաս|ցուք» և այլն, որ վերջանում է տեսիլքով Թղ. 275բ¹ «եւ զայս ասաց|եալ շարժումն եղեալ առաւ|աւտանալն ծածկեցաւ տեսիլն» (տպ. էջ 419—440, § ՂԹ—ՃԲ)։

Ե. Թղ. 275բ² ունի կարմիր լուսանցազարդ և սկսւում է մի տողը կարմիր զարդագրով և երեք տող կարմիր երկաթագրով. «Արդ ամենարարն, ամենաստեղծն, ամենահաստիչն, ամենիմաստն, ամենատրն, ամենակալն, ամենագիւտն, ամենաբժիշկն խրատեաց զձեզ» և այլն։ Նոյն ձեռով է և Թղ. 291ա¹ «Պատճէն հրովարտակին։ ի վաղնջու|ց հետէ կորուսեալք տգիտութեմբ» և այլն։ Վերջ. Թղ. 325ա² «Օհ նոցա առ արարչութի անդր այսպիսի բարբառ արձակեալ ասաս|ցեն. մի ած մեր դու ես։ Եւ նա տաց ժողովուրդ իմ դու ես»։ (Ընդգծեալը չունի տպագիրը. էջ 440—512, § ՃԳ—ՃԻԷ)։

Ծանօթ. Ձեռագիրս չունի տպագրի գլխաթիւ համարները. տպագիրն էլ չունի ձեռագրիս վկայութեանց չակերտները։ Գաղափար օրինակը երևի հին և ընտիր է եղել (տես յիշատակարանը)։ Տպագրի էջ 19, վերջին տողի «զի կամակարագոյն նաւիցիմք զալեօք ժամանակագրական ծովուս» բառերից յետոյ ձեռագիրս ունի Թղ. 7բ² «զապ|ճել յոյժ կայրը ժողովրդեն որոցեալ որ աւրինեցեն զեր։ որք յետ այսր ան|ցեալ ժամանակի գալոց էցեն» և այլն ըստ տպագրի։ Այնպէս տպագրի էջ 511, տ. 5 «ի ներքոյ երկնից» բառերից յետոյ ձեռագիրս ունի Թղ. 324ա² «Աստի և երանել|եայս այս համաքոյ|կեալքն առեալ յա|ռաջս» և այլն ըստ տպագրի։

Բ. Թղ. 326ա—365բ*. «Երանելոյն յովհաննու ոսկեբերանի կոստանդնուպաւլսի եպիսկոպոսապե[տ]ի ասացեալ. վասն վարուց և նահատա|կութե սրբոյն գրիգորի հայոց մեծաց լուսաւորչի: ի կոկիսոն հայոց մինչ յաքսորս էր: ի խնդրոյ հայազին ուրեմն եպիսկոպոսի և վարդա|պետի համազգոյ նո|րին Պէոսկորոս ան|ուն կոչեցելոյ: Եւ այլ ևս յօհնախումբ բազմութե որք ժո|ղովեալ էին յաւուր յիշա|տակի մեծատաւնի նորուն սբ լուսաւոր|չի արևելեան աշխարհին: Հրաշալի է մեզ տաւնս այս աւր և պայծառագոյն քան զովորական շարադրութիւնս: և զի՞նչ իցէ պատ|ճառն, և կամ ո՞վ արդեւք կոչնատէր բազմահոյլ հանդիսի. և այլն: Վերջ Թղ. 365բ²* «ընդ հովիւսն հով|ուեցեր զհաւտ քո բանաւոր: իբան|աւորկու թշնամոյն փորձեցար: ընդ քի»: (տպ. Վենետիկ, 1853. Սոփերք Հայկականք Գ. էջ 3—81):

Ծանօթ. Թղ. 365 բ-ից յետոյ դուրս են ընկած երեք թուղթ, պակասում է ուրեմն տպ. էջ 81, տ. 2 ն. «յաղթեցեր: Զի՞նչ այսուհետև կոչեցից զքեզ» և այլն մինչ վերջ էջ 87: Նոյնպէս ուրեմն պակասում է տպագրի յիշատակարանը «Ի թուականիս ՇՂ (= 1141) թարգմանեցաւ յունականէն իմերս, ի ձեռն Աբրահամու զաւամատիկոսի . . . իսկ յարմարեցաւ ըստ բանից դպրութեան և բառից յիմոյ նուաստութեան Ներսիսի, հրամանաւ տեառն իմոյ և հարազատի Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի» և այլն: Ոսկեբերանի այս ճառը հրատարակել է Մսեր Մսերեանց Ճառաքաղի երրորդ հատորում իբրև յաւելուած (տես Ճառաքաղ, Մոսկուա, 1861—1862, էջ 1—33), ուր, էջ 3, յառաջ բերելով յիշատակարանը, ասում է. «Գտանի և լատիններէնն ճառիս այսորիկ յեղեալ ի Հայկականէ երկասիրութեամբ Տէ Վիլլէֆրոայ քահանայի ծանօթի արևելեան լեզուաց. զոր և այլ ոք Մոնդֆաւգոն անուն ի լոյս ածեալ է ի Հաւաքոյթս գործոց Ոսկեբերանին (ի հատ. ԺԲ): Եթէ և Հայկականիս լեալ իցէ երբէք տպագրութիւն, այլ այնմ հանդիպել մեզ ոչ յաջողեցաւ»:

1. Յիշատակարան գրչի Թղ. 366ա—367բ*: «Իսկ յետ բազում ժա|մանակաց ծագեաց լոյս անգիտութե ի խաւար մեղաւք յաշխար|հն հայաստանեա[յ]ց, զոր և ինքն իսկ տր մեր ասաց՝ ոչ են կամք հաւ|ր իմոյ թէ կորիցէ մի ի|փոքրկանցս յայսցանէ»: Նաև գթացեալ փոխա|նակ առաքելոցն առա|քէ զոմն սբ, զգրիգոր|իոս անեմ, զբազմաչարչարն, զխ[ս]տամբերողն, զխարազնազգեցն, զքսաւէրն, զհամ|բերատարն, զնշխան|ակիցն պետրոսի և պաւղոսի սբ առաքելոցն: Չարչարեալ տասն զանազան տանջանաւք. որ և զայս նամակս շարագրեաց մեծահանճար քարտուղարն ագադանգեղոս իսկզբան մինչև ցկատարումն: Յայս ի . . . [մխի]թար եղեալ իբազմա|շահ մեծագիր գանձուցս սբ եղբարց մեծ և հռչակաւոր անապա|տիս ակներ կոչեցեալ զի ունելով այլ(ս) գիրս դժուար ընթեռնլի, զի ոչ աւարժէին ընթեռ|նուլ իժամատեղ կամ ի|սեղանն համարձակ: Իսկ

կամակից եղեալ առաջնորդք ուխտիս փոխեալ զսա յայլ գիր, որով և իմ յանձն առ|եալ վերամա[յ]եալս ի|պատուական հարց և եղբարցս գրել զսա։ . . . . . ուք ամենա| . . . . կատարե| . . . . . արողութե . . . ոչ եթէ գիտէ|ի զարուեստ գրչու|թե յանդգնեցայ ի գործս, այլ ըստ յուսոյ մեր որ ի|սք յուխտս, և ըստ հրամանի պատուական եղբարցս, որպէս և գրեալ է թէ կեանք է լսողութիւն։

Եւ արդ աղաչեմ և մախթեմ զձեզ ով ամենամաքուր և հոգի|խա-պայծառ սբ դասք .քահանա|յ|ից և միայնակ|եցաց որք հանդիպիք այսմ տառի կամ ընթեր|ցմամբ՝ կամ գաղափար առնլով։ յիշել առ .քս զպատուական հայրն զգրիգոր մաքրակրօն .քահանայ և զտր բարսեղ և զվարդան վրդ (= վարդապետ) սքանչելի վարուք փայլ|եալ ի մէջ եկեղեցոյ։ և զփակակալ սիմէոն և զհայրապետ ամենայնի սրբասէր՝ և ծ̄ծահամձ|ոյք, նաև զհոգևոր եղբայրս իմ զներսէս և յոհանէս յոյժ պիտանի և աւետակար ի գործս բարիս։ և զայլ ամենայն եղբայր|ութիս որ ոչ էր կար մի ըստ միոջէ անուանել։ աղաչեմ յիշել և զթոր|ոս միակեաց և զգրիգոր որ աշխատեցան ի կոկ թղթիս, նաև զտոնես և զմարմպան (մառանապան) և զհացպան և զփռմպան (փռնապան) և զամենայն աշխատողս առ .քս յիշել։ զսբ ծերունիք զսարգիս և զկարապետն . . . . եմ։ Եղուցից և զձեզ սիրել|իք փոքրիշատէ զթշուառութի իմոյ տկարութեա, որ տր|ուպ և անարգ և անպի|տան յամենայն գործս։ զի չեմ ստացեալ գործ բարի, այլ զամենայնն խոտոր և չար և անշահ։

Եւ և ինձ պատմել, զի գոլով իմ, ի նահանգէն յարևելից, յայրարատ|եան գաւառէն, ի գղ|եակէն բջնոյ։ և իմ խո|ցեալ չար վիրաւք հոգ|ովս, զանազան մեղաւք։ ապա այնուհետև որպէս զչար վիրաւք հարեալ մարդ ի խնդիր ելեալ բժշկի և ոչ ուրեք գտեալ այլ միայն դէմ եդեալ գնալ ի սբ քաղաքն եմ, և ի հռ|ոմ ի պատկերն անձեռ|ագործ, և զսբ պետրոս և պաւղոս, նաև յո̄ծածին որ ի ծագս տիեզերաց և իսբ առաքեալն յակոբ։ Վ.անզի ոչ եթէ վս պանծ|անաց գրեմ զայս, այլ վս մեծ մեղաց իմոց որ անհ̄ուն է և անչափ է։ Իսկ դարձեալ զհամ|բաւ բարեաց և սբ կր|աւնք և կանոնք այս մենաստանիս, և յոյժ ցանկացայ, և եկեալ եմ յուսով մեծաւ և աշխա|տութբ յոյժ և տուայ(²)։ Տեսեալ զիս աւտար և պանդուխտ, ագեսէր եղբարցս և գթաց|ին յիս իբրև զծնաւղ և ցուցին ինձ սէր իբր|և զոր յս։ զոր հատուցէ քս սոցա ըստ իմ. . . (մի տող կորուած) տացէ հանգիստն յաւ|իտենից ընդ սբս իւր և ոչ միայն զայս այլ և ս առաւել ցուցին յիս գթութիւն։ Եւ ես ոչ ունելով զձեւ սոցա և զկարգ, զի ամենեքեան իբրև զհրեշտակ ա̄յ արթ|ուն և զուարթուն յաւրինաբանութիս ա̄յ ի տուէ և ի գիշե|րի անձեաղ և անհան|գիստ, և զայս տեսա|նելով իմ, վա̄յ և եղուկ ասելով անձին իմոյ, զի թափուր գոլով ի|կրաւնից սոցա և յառաքինութենէ։ Բամեալ զիս այնու|հետև զմտաւ ածի զգործս զայս

թերեւս լինիմ կցորդ բարեաց սոցա։ ուրեմն եւ ողորմելով զիս եւ խրախուսելով սբ Հարցդ որ ի վերոյ գրեցաք։ Քանզի եւ մեր տրն անկարգամեծար է ընդունի զաշխատութիւն իմ որպէս զխերուեշ այրոյն, եւ զմազ այծեաց ի սպաս տաճարին։ Այլ դարձեալ մոխրամած դիմաւք եւ սրտախառուչ Հառաչմամբ աղաչեմ զսրբութիւդ ձեր անմեղադիր լինել սխալանացս եւ սիրով ուղղել, զի այս էր կարողութի իմ։ այլ ի ստոյգ աւրինակէ գրեցի եւ ըստ չափու զգրադարձ . . .» (թուղթ է դուրս ընկած)։

2. Յիշատակագրութիւն. Թղ. 48ա[1]. մանր բոլորագիր «Մկ Համագումար դասք սրբազանից յորժամ ընթեռնոյք կամ լսէք յիշեցէք ի քս զ[յ]ողորմելի գործոյս զՀայրապետն եւ զսիմեոն փակակալ եւ զանմաքուր գծողս թէ արժանի առնէք յիշատակի վս սիրոյն քի զի եւ դուք յիշեսջիք յայ մերմէ»։

Թղ. 247ա[2]. «Զամենամեղս եւ զբազմաչարս, զանարժանս յոքունց զգրիչս Պաւլոս յիշել յիշել աղաչեմ առաջի սբ տառիս ածապատումս. եւ զծնողսն մեր եւ զամենայն եղբայրութիւնս, նաեւ զներսէս զՀոգեւոր եղբայր։ եւ որք յիշէք՝ յիշե[ա]լ լիջիք ի քէ ամէն»։

Թղ. 325ա[2]. «Ողորմութբն սբ սկսայ ի յամսեանն դեկտեմբեր։ ԺԱ։ եւ շնորհաւք սբ Հոգոյն կատարեցի իմարտ։ Ի։ Որ Հասուցեր զմեզ ի գիծ վերջի այսմ նամակի սբ երրորդութի։ Քեզ փառք եւ այլն։

Ծանօթ. Այս երեք յիշագրութեանց գրչութեան նմանութիւնից ինչպէս եւ Ագաթանգեղոսի պատմութեան նամակ անուանելուց (Հմմ. գլխաւոր յիշատակարանը) կարելի է ասել գրքիս գծողը, գրիչն է Պաւլոս կրօնաւոր։

3. Թղ. 325բ. Անվարժ ձեռքերով եւ զանազան գրչութեամբ գրութիւններ սկսեալ վերեւից։ «զԹաթէոս երէցս յիշեցէք. ով մեզ ողորմի ասէ նայ ած իրեն ողորմի»։ — Տարբեր գրչութեամբ, անվարժ մանր բոլորագրով «Արդ ես արիստակէս սուտանուն աբեղայ որ զածաբան գիրք տեսայ ու բերի ի վանքս մելտենու ի դուռն սբ լուսաւորչին, ով որ կարդայ ու բան աւկտի ած թողու զիւր մեղքն եւ զծնողին։ գրեցաւ գիրս ՋՀԲ [= 1523]»։ — Միեւնոյն ձեռքով քիչ ներքեւ «Զարմանք այս է որ զչարն որ չեմ կամենար նայ ամէն ժամ գործեմ։ ո զբարին զոր կամենամ գործել նա չեմ աներ Հընձգուն մեղաւոր եմ ու գարշելի ու անպիտելի»։ Սորա կողքին այլ ձեռքով «իթվին Հայոց Չ։ Ժ» [ՉԺ = 1261]։ Ապա երկու թաշնազարդ եւ ներքեւ «իթվին Հայոց ի։ ՊԽ» [= 1391]։

Ծանօթ. Զմ տառերը, ինչպէս և կից երկու բառերը նորագոյն գրչի ձեռնագիր են տարբեր մատենիս գրչութիւնից, այնպէս որ ձեռագիրս հաւանօրէն աւելի առաջ է քան 1261 թուականը:

4. Լուսանցագրեր մանր բոլորագրով. Թղ. 15բ, ներքև «ո՜վ եղբարք Թչիթէ պակասէ յայս դէմս: և յաւրինակէս է որ չգնես մեղ վս ա՜յ»: — Թղ. 47ա, ներքև «տր յս ողորմեսցի վարհամ միայնակեցի որ զիմ չուխայն կոխել երետ»: — Թղ. 1ա. Նոտրագիր. «Թվ ՌՃԵ [= 1656] խաւարեցօ[= աւ] արեգակն ագոստոսի բ օրն դշբթի [= չորեքշաբաթի]»:

Besprechungen.

Eusebius Kirchengeschichte, Buch VI und VII. Aus dem Armenischen übersetzt von Erwin Preuschen. Leipzig, J. C. Hinrichs, 1902. Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur. Herausgegeben von Oscar v. Gebhardt u. Adolf Harnack. Neue Folge VII. Band, 3. Heft.

Bei aller Anerkennung, die man Preuschens mühevoller Arbeit zollen muss, ist doch die Frage aufzuwerfen, ob unter den obwaltenden Verhältnissen eine Übersetzung nicht verfrüht war. Vor allem ist der mangelhafte Zustand der einzigen, von Djarian (= Ճ'արեան) veranstalteten, Ausgabe in Betracht zu ziehen. Bedenkt man, dass diese ein ziemlich kritikloser, nur hier und da verbesserter, Abdruck einer einzigen offenbar unvollkommenen Handschrift ist, so kann diese nicht als hinreichende Grundlage angesehen werden. Es wäre richtiger gewesen, möglichst viel handschriftliches Material heranzuziehen, das wohl in verschiedenen Bibliotheken vorhanden ist, beispielsweise in Etschmiadsin, in Wien, in Venedig und anderswo (vgl. Կարենեանց, Մ՚այր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի ս. Ս՚Աթոռոյն Էջմիածնի, ի Թիֆլիզ ի 1863 ամի, S. 179, No. 1619, S. 187, No. 1682. — Տաշեան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց . . . Վիեննա, 1895, S. 243, No. 49 u. s. w.). Dann würde man auch erst in den Stand gesetzt werden, die sprachlichen Schwierigkeiten der armenischen Version richtig beurteilen zu können. Denn Preuschens Voraussetzung, der Übersetzer habe sich sklavisch an seine syrische Vorlage gehalten und einer indogermanischen Sprache ein semitisches Kolorit verliehen, kann allerdings zutreffen, bedarf aber ganz entschieden noch des Beweises. Ja, noch nicht einmal das kann als eigentlich bewiesen erachtet werden, dass überhaupt eine syrische Version zu Grunde gelegen hat, wenn dies auch wahrscheinlich sein mag. Die Stelle bei Moses Chorenatzi ist auf jeden Fall nicht beweisend.

Dass der armenische Text in seinem gegenwärtigen Zustande stellenweise sprachliche Schwierigkeiten bietet, steht fest. Auf den

ersten Blick sieht man Merkwürdigkeiten in der grammatischen Konstruktion und in der Wortbedeutung, die der Sprache des fünften Jahrhunderts fremd sind. Der mit der Geschichte der armenischen Sprache näher Vertraute wird deshalb aber nicht nur an Beeinflussung durch ein stammfremdes Idiom denken, sondern auch eine solche durch nichtklassische, jüngere Formen und Konstruktionen, mögen diese durch ungebildete Abschreiber eingeschleppt worden sein, oder mag die ganze armenische Übersetzung einer späteren Zeit angehören. Denn auch die Frage nach dem Alter des armenischen Textes ist noch unentschieden. Weder die Übereinstimmung des Abgarbriefes bei Moses Chorenatzi und Eusebius, noch die armenisehe Überlieferung über die Übersetzungszeit der Kirchengeschichte sind beweisend. Der auf uns gekommene Text braucht doch nicht derjenige zu sein, den Mesrop im 5. Jahrhundert hat abfertigen lassen. Er kann ja eine durch den Verlust des ersteren veranlasste zweite Übersetzung sein, worin auch der weithin bekannte Abgarbrief übernommen sein könnte. Denn die Sprache des jetzigen armenischen Textes hat entschieden eine spätarmenische Färbung.

Unter diesen Umständen, deren Ungunst durch den Mangel ausreichender Übersetzungswörterbücher noch vermehrt worden ist, hat denn auch die deutsche Übersetzung leider nicht wenig gelitten, wobei die Schuld ja zum Teil der armenischen Ausgabe mit zur Last fällt. Im nachstehenden Fehlerverzeichnis zu Buch VI S. 1—39 incl., worauf ich mich mit Rücksicht auf den zur Verfügung stehenden Raum beschränken muss, habe ich nebenbei in Fussnoten Verbesserungen des armenischen Textes vorgenommen, die nach paleographischen und anderen Erwägungen möglich sind. Diese sollen jedoch nur als Vorschläge gelten, die eventuell durch handschriftliche Differenzen entkräftet werden können. Die von Preuschen richtig getroffenen Verbesserungen habe ich nicht weiter erwähnt. Die Interpunktation dagegen, die einer gründlichen Verbesserung bedarf, habe ich mehrmals geändert, ohne es jedoch zu erwähnen.

